ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ, ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

*ԱՐԹՈՒՐ ՌԱՖԻԿԻ ԱՎԱԳՅԱՆ*

# ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ)

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Գիտական ղեկավար՝
քաղ. գիտ. դոկտոր, դոցենտ
Տիգրան Տոնիկի Քոչարյան

ԵՐԵՎԱՆ 2015

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ---------------------------------------------------------------------- էջ 3

ԳԼՈՒԽ 1. ԻՐԱՎԱԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹ

1.1. Իրավագիտակցության հետազոտության տեսական-մեթոդաբանական հիմքերը---էջ 14

1.2. Քաղաքական գիտակցության և իրավագիտակցության փոխհարաբերակցության հիմնախնդիրը ---------------------------------------------------------------------------- էջ 40

ԳԼՈՒԽ 2. ԻՐԱՎԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ

2.1. Քաղաքական սոցիալականացման գործում իրավագիտակցության դերը ----------- էջ 61

2.2. Քաղաքացիական անհնազանդությունը որպես իրավագիտակցության դրսևորում ------------------------------------------------------------------------------- էջ 73

2.3. Քաղաքացիական հասարակության ձևավորման գործում իրավագիտակցության դերը ------------------------------------------------------ էջ 89

ԳԼՈՒԽ 3. ԻՐԱՎԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ԱՐԴԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ

3.1. ՀՀ-ում պետության և քաղաքացիական հասարակության խոսույթում իրավագիտակցության դրսևորումը ------------------------------------------------------- էջ 104

3.2. ՀՀ քաղաքական գործընթացներում քաղաքացիական հասարակության իրավագիտակցության հիմնախնդիրները -------------------------------------------------- էջ 124

3.3. ՀՀ-ում իրավական պետության կառուցման անհրաժեշտությունը ----------------- էջ 135

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ----------------------------------------------------------------------- էջ 146

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ---------------------------------------------- էջ 151

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Ատենախոսության թեմայի արդիականությունը**: 20-րդ դարի 90-ական թվականների սկզբում՝ արդիականացման ազատական հիմքերի հռչակումից հետո, հիմք դրվեց Հայաստանի Հանրապետությունում ժողովրդավարական քաղաքական վարչակարգի ձևավորմանը: Սակայն, ակնհայտ է, որ Հայաստանի Հանրապետությունում այդ գործընթացն ընթանում է հակասական և արմատական վերակազմավորումների ուղեկցությամբ: Երկրում ձեռնարկված բարեփոխումները ուղեկցվեցին տնտեսական ճգնաժամերով, քաղաքական բուռն լարվածություններով և հակասություններով, սոցիալական անկմամբ և անկայունությամբ: Այս ամենը պատճառ դարձավ հասարակական և քաղաքական ճգնաժամի առաջացման և անվստահության մթնոլորտի ձևավորման համար, որոնք էլ իրենց հերթինդարձանհասարակություն-իշխանություն փոխօտարման պատճառ: Հասարակության տնտեսական, սոցիալ-քաղաքական և հոգևոր հյուսվածքների փոխակերպումը հիմք դարձավ տարատեսակ գիտական փնտրտուքների, որոնք կոչված էին մշակելու հասարակական-քաղաքական նոր պահանջներին համարժեք կենսահամակարգ: Ինչպես ցույց է տալիս համաշխարհային փորձը՝ այսպիսի փոխակերպումները պահանջում էին հասուն քաղաքացիական հասարակության և իրավական պետության ձևավորման անհրաժեշտություն:

ԽՍՀՄ փլուզումից հետո սկիզբ առած հետխորհրդային տրանսֆորմացիան սկիզբ դրեց Հայաստանի Հանրապետությունում հասարակական և քաղաքական կյանքի ամբողջ հյուսվածքի արմատական փոխակերպմանը: Որդեգրելով պետության կառավարման ժողովրդավարական ուղին՝ ՀՀ–ում սկիզբ դրվեց հասարակություն-պետություն փոխհարաբերությունների որակապես նոր մոդելների ձևավորմանը: Ակնհայտ էր, որ այս հարաբերությունները, ինչպես նաև քաղաքական գործընթացների կառավարումը ժողովրդավարության պայմաններում պահանջում էին իշխանության և հասարակության մոտ նոր իրավագիտակցություն, որը կհամապատասխաներ ժողովրդավարական մշակույթին: Սակայն պարզ դիտարկմամբ այսօր ՀՀ-ում հասարակական և քաղաքական

իրողությունները փաստում են անհատների, հասարակության և իշխանության մոտ իրավագիտակցության հակասական դրսևորումների, իսկ ընդհանուր առմամբ, իրավագիտակցության ցածր մակարդակի մասին՝չնայած այն բանին, որ միայն իրավագիտակցության համապատասխան մակարդակի պայմաններում է հնարավոր ձևավորել հասարակության և պետության միջև ժամանակակից ժողովրդավարական խոսույթ, ինչը հնարավորություն կտա հաղթահարել նրանց միջև ձևավորված ավտորիտար փոխստարման բացասական իրողությունը: Առաջադրված հարցերը պայմանավորում են ատենախոսության արդիականությունը, ինչպես տեսական, այնպել էլ գործնական իմաստով:

**Ատենախոսության թեմայի մշակվածության աստիճանը:** Ժամանակակից աշխարհում անհատի՝ որպես սոցիալապես և քաղաքականապես ակտիվ անձի ձևավորման գործում կարևոր նշանակություն ունի իրավագիտակցությունը:

Իրավագիտակցությունը հասարակության սոցիալ-իրավական, քաղաքական, հոգևոր-մշակութային զարգացման կարևորագույն բաղադրատարրն է: Այն դեռևս վաղ ժամանակներից ուղեկցել է մարդկությանը իր բնապատմական զարգացման գործընթացում՝ ունենալով կարևոր դեր հասարակական կյանքում, այդ իսկ պատճառով իրավագիտակցության հիմնախնդիրը մշտապես գտնվել և շարունակում է գտնվել տարբեր գիտությունների հետաքրքրության շրջանակներում: Իրավագետներն ուսումնասիրում են իրավագիտակցությունը որպես իրավական հայացքների և պատկերացումների ամբողջություն: Փիլիսոփաներն ուսումնասիրում են իրավագիտակցությունը որպես հասարակության գիտակցության ձև: Սոցիոլոգների համար այն կարևորվում է որպես սոցիալական վերահսկողության ինստիտուտ: Հոգեբաններն իրավագիտակցության մեջ կարևորում են անձի հոգեբանական առանձնահատկությունները: Մշակութաբաններին այն հետաքրքրում է որպես կոնկրետ հասարակության սոցիալական մշակույթի հատուկ և նշանակալից դրսևորման ձև:[1] Իսկ քաղաքագիտության շրջանակներում

---

[1]**Рослов С.** Роль правосознания в формировании гражданского общества в России. Сар., Диссертация на соискание ученой степени кандидата социологических наук, 2005, с. 47.

իրավագիտակցությունը կարևորվում է քաղաքական գործընթացներում անհատի կողմից դրսևորվող քաղաքական վարքագծի, քաղաքական մասնակցության, հասարակություն-պետություն փոխհարաբերությունների ուսումնասիրության տեսանկյունից:

Իրավագիտակցության հիմնախնդրի վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ գոյություն ունեն տարբեր մոտեցումներ:

Իրավագիտակցության հիմնախնդրի որոշ տեսական գաղափարներ բխում են անտիկ շրջանի փիլիսոփայական մտքից (Սոկրատես, Պլատոն, Արիստոտել, Կիկերոն[2]): Անտիկ փիլիսոփայության մեջ քննության են առնվում պետության և իրավունքի փոխհարաբերակցության, իրավունքի և ուժի, իրավունքի և արդարության, ինչպես նաև՝ իրավունքի սոցիալական արժեքի վերաբերյալ հիմնախնդիրները:

Իրավունքի փիլիսոփայության մեջ զգալի ներդրում ունեն նաև Վերածննդի և Նոր ժամանակների մտածողներ Ն. Մաքիավելին, Թ. Հոբսը, Ջ.Լոկը, Ժ.-Ժ. Ռուսոն, Շ.Լ. Մոնտեսքյոն[3] և այլք: Իրավունքի փիլիսոփայությունը էական զարգացում է ստացել գերմանական դասական փիլիսոփայության ներկայացուցիչների (Կանտ և Հեգել[4]) աշխատություններում: Այդ ժամանակաշրջանից սկսած՝ հասարակության գիտակցության մեջ սկսում է գերակշռել հենց իրավական բաղադրատարրը: Նկատենք, որ լուսավորության դարաշրջանում առանձնացվեցին ոչ միայն իրավագիտակության ձևական նախանշանները, այլև սահմանվեցին վերջինիս էթիկական հիմնավորվածությունը, քաղաքացիների օրինապաշտությունը և այլ հարցեր:

Իրավագիտակցության տեսական-մեթոդաբանական հիմնախնդիրների ուսումնասիրության գործում մեծ ներդրում ունեն արդի շրջանի արևմտյան

---

[2]1.**Нерсесянц В.** История политических и правовых учений, *Политические и правовые учения Древней Греции.* М., Норма, 2003, с. 34-64,2.**Платон.** Государство, Законы. М., Политик, 1998, 798 с. 3. **Аристотель.** Политика. Афинская полития. М., Мысль, 1997, 487 с. 4. **Нерсесянц В.** История политических и правовых учений, *Учение Цицерона о государстве и праве.* М., Норма, 2003, с. 76-88.

[3]1. **Макиавелли Н.** Государь. Сочинения. Фолио, Хар., 2001, 656 с. 2. **Гоббс Т.**Философские основания учения о гражданине. М., Харвест, 2001, 304 с. 3. **Локк Дж.** Два трактата о правлении/ Локк Джон. Сочинения: В 3 Т., М., Мысль, 1988, 160 с. 4. **Руссо Ж.-Ж.** Об общественном договоре. Трактаты. М., Канон-Пресс, 1998, 542 с. 5. **Монтескье Ш.**Избранные произведения. В 2-х томах / Под общ. ред.: М., Баскин Госполитиздат, 1955, 799 с.

[4]1. **Кант И.** Метафизика нравов/Соч. 8, Т. 6., М., Чоро, 1994, 550 с. 2. **ГегельГ.**Философияправа. М.,Мылсь, 1990, 524 с.

հետազոտողները: Կարևոր է նշել Դ. Քենեդիի, Ֆ. Կոհենի, Օ. Սարատի, Ս. Քամինգսի, Դ. Կոուենի, Շ. Կուրիլսկի-Օժըվենի[5] աշխատանքները, որոնցում հեղինակները տարբեր դիտանկյուններից անդրադառնում են իրավագիտակության և իրավական մշակույթի հիմնախնդիրներին:

Ամերիկացի հետազոտող Դ. Քենեդին ուսումնասիրում է իրավագիտակցության պատմական ձևերը և պատմաքաղաքակրթական տարբեր ժամանակներում վերջինիս ընկալման հիմնախնդիրը ամերիկյան իրավական մտքի պատմության շրջանակներում:[6]

Մեկ այլ ամերիկացի հետազոտող Օ. Սարատը գտնում է, որ իրավագիտակցությունը չքավորների՝ իշխանության և տիրապետության ձգտելու գիտակցությունն է: Իրավագիտակությունը նաև դիմադրելու գիտակցությունն է, որի դեպքում իրավագիտակցության կրողները պահանջում են իրենց ինքնության և պահանջմունքների ճանաչում:[7]

Կարևոր է նաև անդրադառնալ խորհրդային և հետխորհրդային շրջանի հետազոտողներին, ովքեր իրենց աշխատանքներում անդրադարձել են իրավագիտակցության հիմնախնդրին: Հասարակության գիտակցության քաղաքական և իրավական հիմնախնդիրներն արդյունավետորեն ուսումնասիրվել են Գ. Օստրումովի, Յա. Ասկինի, Ի. Ֆարբերի, Բ. Գրուշինի, Վ. Տումանովի, Գ. Օսիպովի, Ա. Սպիրկինի, Յու.

---

[5] 1. **Kennedy D.** Toward an Historical Understanding of Legal Consciousness: The Case of Classical Legal Thought in America, 185-1940, /Research in Law and Sociology, Volume 3/, JAI Press, 1980, p. 3-24., 2.**Cohen F.** The Legal Consciousness. Yale University Press, New Haven, 1960, 512p., 3.**Sarat A.** The law is all over: Power, Resistance, and the Legal Consciousness of the Welfare Poor, 2 Yale Journal of Law and the Humanities, New Haven, 1990, p. 343-379, 4. **Cummings S.** Critical Legal Consciousness in Action,Harvard Law Review Forum, Vol. 120, No. 39, 2007 , http://papers.ssrn.com/sol3/papers.cfm?abstract_id=998040, /10.03.2013/, 5. **Cowan D.** Legal Consciousness: Some Observations, The Modern Law Review, Volume 67, Issue 6, London, 2004, p. 928-958.,

http://www.modernlawreview.co.uk/abstract.asp?ref=0026-7961&vid=67&iid=6&aid=518&s=&d=November%202004, /10.03.2013/,

5. **Kourilsky-Augeven Ch.** Socialisation juridique et conscience du droit, Tome 2, L.G.D.J, Paris, 1997, 198 p.

[6]**Kennedy D.** Toward an Historical Understanding of Legal Consciousness: The Case of Classical Legal Thought in America, 1850-1940 /Research in Law and Sociology, Volume 3/, JAI Press, 1980, p. 3-24.

[7]**Sarat A.** The law is all over: Power, Resistance, and the Legal Consciousness of the Welfare Poor, 2 Yale Journal of Law and the Humanities, New Haven, 1990, p. 343-344.

Տիխոնրավովի, Վ. Բեգինինի, Կ. Բելսկու, Ն. Բուրայի, Ն. Գրանատի, Վ. Շեգորցևի[8] և ուրիշների աշխատանքներում, որտեղ հեղինակներն անդրադարձել են հասարակության իրավագիտակցության սոցիալական բնույթին, դրա առանձնահատկություններին, քաղաքական գիտակցության հետ վերջինիս կապին և այլ հարցերի:

Ինչ վերաբերում է հայ հետազոտողներին, ապա հարկ է նշել, որ մեր իրականության մեջ իրավագիտակցության հիմնախնդրին նվիրված առանձին համապարփակ աշխատանքներ չկան: Արդի հայ հեղինակներից իրավագիտակցությանն առնչվող առանձին խնդիրներին մասնակիորեն անդրադարձել են իրավունքի տեսության և պատմության որոշ մասնագետներ, ինչպես օրինակ՝ Ն.Ապիյանը, Ա. Պետրոսյանը, Գ. Սաֆարյանը, Հ. Ստեփանյանը[9] և այլք:

Ուսումնասիրվող խնդրին մասամբ անդրադարձել է նաև հայազգի ՌԴ ակադեմիկոս Վ. Ներսեսյանցը, ում կարծիքով՝ իրավագիտակցության առանձնահատկությունը, գիտակցության այլ ձևերի (քաղաքական, բարոյական, կրոնական և այլն) հետ հարաբերակցության մեջ, պայմանավորված է հենց իրավունքի առանձնահատկությամբ, որն արտահայտելու համար իրավագիտակցությունն օգտագործում է համապատասխան զգացմունքներ, կերպարներ, պատկերացումներ, խորհրդանիշներ ու կատեգորիաներ:[10]

---

[8]1. **Остроумов Г.** Правовое осознание действительности. М., Наука, 1969, 173 с. 2. **Аскин Я.** Проблема времени, ее философское истолкование. М.,Мысль, 1966, 200 с. 3.Фарбер И.Правосознание как форма общественного сознания. Юрид. М., лит., 1963, 205 с. 4. **Грушин Б.**Массовое сознание. М., Политиздат, 1987, 368 с. 5.**Туманов В.** Правовой нигилизм в историко-идеологическом ракурсе // Государство и право. - М., Наука, № 8. 1993,с. 52-58., 6.**Осипов Г.** Социальное мифотворчество и социальная практика. Норма, М., 2000, 543 с. 7. **СпиркинА.**Сознание и самосознание. М., Политиздат, 1972, 303 с. 8. **Тихонравов Ю.** Основы философии права. М., Вестник, 1997, 608 с. 9. **Бегинин В**. Общественное правосознание и государственность / Под ред. В.А. Шабалина.: Изд-во Сарат. ун-та, Сар., 1993, 130 с 10. **Бельский К.** Формирование и развитие социалистического правосознания. М., Высш. шк., 1982, 183 с. 11. **Бура Н**. Функции общественного правосознания. Наукова Думка, Киев,1986, 86 с. 12. Гранат Н.Правосознание и правовая культура // Теория права и государства / Под ред. Н.В. Катаева и В.В. Лазарева/, Уфа, 1994, 352 с. 13. **Щегорцев В. Социология правосознания. Мысль, М., 1981,** 174 с.

[9]1. **Ապիյան Ն., Պետրոսյան Ա.** Իրավական պետություն և օրինականություն: /2-րդ հրատարակություն, լրացված և վերամշակված/ ԵՊՀ, Եր., Տիգրան Մեծ հրատ., 2001, 288 էջ, 2. **Սաֆարյան Գ.** Իրավունքի պատմության և տեսության հիմնահարցեր, Եր., Լիմուշ հրատ., 2010, 696 էջ, 3. **Ստեփանյան Հ.** Իրավունքի գոյաբանություն, Եր., Եվրոպրինտ հրատ., 2012, 224 էջ:

[10] **Ներսիսյանց Վ.**Իրավունքի և պետության տեսություն, Եր., Նաիրի հրատ., 2001, էջ 92-93:

Սակայն այդուհանդերձ իրավագիտակցության խնդրի վերաբերյալ հայ հեղինակների կողմից չկան համալիր հետազոտություններ, առավել ևս քաղաքական գործընթացների համատեքստում՝ չնայած այն բանին, որ այսօր բավականին հրատապ է ինչպես այս խնդրի տեսական իմաստավորման առումով, այնպես էլ գործնական կյանքում դրա առանձնահատկությունները հասկանալու տեսանկյունից:

**Հետազոտության նպատակը և խնդիրները**: Ատենախոսության նպատակն է Հայաստանի Հանրապետությունում ընթացող քաղաքական գործընթացներում իրավագիտակցութան դերի և նշանակության վերհանումը, քաղաքացիական հասարակության և իրավական պետության կայացման գործում իրավագիտակցության նշանակության իմաստավորումը:

Նշված նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է լուծել հետևյալ **խնդիրները՝**

- վերլուծել քաղաքական սոցիալականացման և հասարակություն-պետություն փոխհարաբերությունների համատեքստում իրավագիտակցության նշանակությունը
- բացահայտել Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական հասարակության ձևավորման գործում իրավագիտակցության տեղը և դերը,
- վեր հանել հայ հասարակության իրավագիտակցության առանձնահատկությունները,
- հիմնավորել իրավագիտակցության անհրաժեշտությունը իրավական պետության կայացման գործում:

**Հետազոտության օբյեկտը** իրավագիտակցությունն է որպես քաղաքական և սոցիալ-իրավական երևույթ:

**Հետազոտության առարկան** իրավագիտակցության ուսումնասիրությունն է որպես քաղաքացիական հասարակության ձևավորման և իրավական պետության կայացման գործոն:

**Ատենախոսության աղբյուրները և մեթոդաբանական հիմքը**: Աշխատանքի տեսական աղբյուրները վերաբերում են իրավագիտակցության՝ որպես քաղաքական, սոցիալական, իրավական և մշակութային երևույթի ձևավորմանը և զարգացմանը:

Իրավագիտակցության վերաբերյալ անուղղակի պատկերացումներ ձևավորվել են դեռևս անտիկ շրջանում, սակայն դրանք իրենց զարգացումն են ստացել Վերածննդի դարաշրջանից սկսած: Ատենախոսության տեսական հիմքը հիմնված է Ն. Մաքիավելլիի, Թ. Հոբսի, Ջ.Լոկի, Ժ.-Ժ. Ռուսոյի, Շ.Լ. Մոնտեսքյոյի,Ի. Կանտի, Գ. Հեգելի, ինչպես նաև Դ. Քենեդիի, O. Սարատի, Ս. Քամինգսի, Դ. Քոուենի, Շ. Կուրիլսկի-Օժըվենի, Գ. Օստորումովի, Յա. Ասկինի, Ի. Ֆարբերի, Բ. Գրուշինի, Վ. Տումանովի, Գ. Օսիպովի, Ա. Սպիրկինի, Յու. Տիխոնրավովի, Վ. Բեզինինի, Կ. Բելսկու, Ն. Բուրայի, Ն. Գրանատի, Վ. Շեգորցևի և այլոց աշխատանքների վրա: Ատենախոսության մեջ հայ հեղինակներից իրավագիտակցության խնդրի վերաբերյալ օգտագործվել են նաև Ն. Ապիյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Ներսեսյանցի աշխատանքները:

Քանի որ ատենախոսությունը որոշակիորեն ունի նաև միջառարկայական բնույթ, ապա այս տեսանկյունից ատենախոսության համար հիմք են ծառայել նաև քաղաքացիական հասարակության, իրավական պետության, քաղաքական գործընթացների և այլ հարցերի վերաբերյալ քաղաքագետների, փիլիսոփաների, իրավագետների և սոցիոլոգների տարբեր աշխատանքներ: Ատենախոսության շրջանակներում կարևոր ենք համարում առանձնացնել հետևյալ հեղինակների՝ Ռ. Ապրեսյանի, Է. Արատոի, Ջ. Բեսեթի, Ի. Վալերշտայնի, Մ. Վեբերի, Ս. Վերնեկի, Լ. Գումպլովիչի, Ի. Իլյինի, Մ. Կրայգիրի, Դ. Կոուենի, Ֆ. Կոհենի, Ա. Սոլովյովի, Գ. Տորոյի, Բ. Ֆլիվբերգի, Ֆ. Ֆուկույամայի, Ս. Բերմանի, Թ. Կարոզերսի, Ա. Բեգլարյանի, Մ. Հարությունյանի, Հ. Հովհաննիսյանի, Վ. Քարդումյանի, Է. Օրդուխանյանի, Հ. Սուքիասյանի աշխատանքները:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքը կազմում են դիտարկման մեթոդը, Մ. Վեբերի ինտերակցիոնիզմի սկզբունքը[11], ինչպես նաև ատենախոսության մեջ լայնորեն օգտագործվել է համեմատական վերլուծության մեթոդը:

**Ատենախոսության գիտական նորույթը** պայմանավորված է քաղաքական գործընթացներում իրավագիտակցության դրսևորման հիմնախնդրի ուսումնասիրությամբ,

[11]**Вебер М.** Избранные произведения. М., Прогресс, 1990, 808 с.

որը կարևոր նշանակություն ունի ՀՀ-ում քաղաքացիական հասարակության ձևավորման և իրավական պետության կայացման գործում: Հետազոտության գիտական նորույթը կարելի է ներկայացնել հետևյալ ձևակերպումներով՝

- ուսումնասիրվել է իրավագիտակցության հիմնախնդիրը և բացահայտվել է հայ հասարակության մոտ դրա դրսևորման հակասականությունը: Հակասականությունը հետևյալում է՝ մի կողմից քաղաքացիական հասարակության մի հատվածի մոտ առկա է իրավագիտակցության բարձր մակարդակ, ինչը դրսևորվում է քաղաքացիների կողմից իրենց շահերի և իրավունքների պաշտպանության համար իրականացվող քաղաքացիական նախաձեռնություններում: Իսկ մյուս կողմից, ընդհանրական իմաստով, հասարակության մոտ բացահայտվել է իրավագիտակցության շատ ցածր մակարդակ,որոշ հարցերում,նույնիսկ,բացարձակ անտեղյակություն:
- բացահայտվել է, որ ՀՀ-ում քաղաքացիական անհնազանդությունը նպաստում է իրավագիտակցության բարձրացմանը,
- վեր են հանվել ՀՀ-ում պետության և քաղաքացիական հասարակության միջև խոսույթում իրավագիտակցության դրսևորման առանձնահատկությունները,
- հիմնավորվել է, որ քաղաքացիական հասարակության իմաստը ոչ թե պետությանը հակադրվելն է, այլ այն անհրաժեշտ է օրգանական պետության ձևավորման համար,

**Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները**.

**1.** Քաղաքական գիտակցությունը քաղաքական կեցության արտացոլումն ու իմաստավորումն է սոցիալական սուբյեկտների գիտակցության մեջ: Քաղաքական գիտակցությունը քաղաքական կեցության պասիվ արտացոլումը չէ, այն հարաբերականորեն ինքնուրույն է և կարող է առաջ անցնել քաղաքական պրակտիկայից, կանխատեսել հասարակական-քաղաքական գործընթացների զարգացման միտումները:

**2.** Քաղաքական գիտակցությունը, իրավագիտակցությունը և քաղաքական իշխանությունը փոխկապակցված և փոխգործակցող հասարակական երևույթներ են: Քաղաքական գիտակցությունը իրավագիտակցությանը և դրական իրավունքի միջոցով

էականորեն ազդում է պետության իշխանական գործունեության էության և բովանդակության վրա:

**3.** Քաղաքացիական հասարակությունը, ըստ էության, պետք է անկախ լինի պետությունից: Սակայն, այն գոյություն չունի մեկուսացման մեջ, և բացարձակ ազատությունն ու անկախությունը հնարավոր չեն: Ցանկացած հասարակության մեջ երրորդ սեկտորը կամ որ նույնն է՝ քաղաքացիական հասարակությունը կապված է այլ երկու սեկտորների՝ պետության և պետական իշխանության հետ. տարբեր են միայն կապերի բնույթը և ինտենսիվությունը:

**4.** Ժողովրդավարության իմաստն միայն այն չէ, որ ժողովուրդը տիրապետի իշխանությանը, այլ այն, որ իշխող էլիտան լինի մշտապես փոփոխելի, հաշվի առնի իր ժողովրդի կարծիքը, այլ ոչ թե անտեսի այն հանուն իր եսասիրական պահանջների: Այսօրվա առողջ ու ազդեցիկ քաղաքացիական հասարակությունը չի կարող գոյություն ունենալ առանց պետության և չի կարող առանձնացված լինել պետությունից՝ խստորեն չհակադրվելով վերջինիս:

**5.** Քաղաքացիական հասարակության և պետության միջև հարաբերությունները չպետք է դիտարկել միմյանց հակադրման, մեկը մյուսին գերակայելու համատեքստում: Քաղաքացիական հասարակության և պետության միջև հավասարակշռված հարաբերությունը անհրաժեշտ է օրգանական պետություն ստեղծելու համար:

**6.** Ելնելով արդի հայ հասարակության իրավագիտակցության հարաբերականորեն ճգնաժամային իրավիճակից՝ կարելի է վստահաբար պնդել քաղաքական գործընթացներում իրավագիտակցության դերի առաջնայնության մասին: Այս համատեքստում՝ ժողովրդավարական իրավագիտակցության մշակումը և հաստատումը՝ հիմնված ազգային-մշակութային արժեհամակարգի վրա, առավելապես կարևոր են հայ հասարակության արդիականացման պայմաններում քաղաքական գործընթացների առավել արդյունավետ կազմակերպման և կառավարման, քաղաքացիական հասարակության և իրավական պետության կայացման համար:

**Ատենախոսության տեսական նշանակությունը** պայմանավորված է այն բանով, որ առաջարկվել են հասարակության և պետության միջև փոխհարաբերությունների արդյունավետացման և առողջացման տեսական մոդելներ, քաղաքացիական հասարակության տեսական հայեցակարգերի համեմատական վերլուծության հիման վրա առաջ են քաշվել քաղաքացիական հասարակության ուսումնասիրության նոր տեսական գաղափարներ: Ատենախոսության տեսական նշանակություններից են նաև իրավագիտակցության խնդրի ուսումնասիրությունը, ինչպես նաև իրավագիտակցության համատեքստում իրավական պետության, քաղաքացիական հասարակության ձևավորման հիմնախնդիրները:

Վերը նշված տեսական մոտեցումները կարող են մեթոդաբանական հիմք ծառայել քաղաքագիտության և իրավունքի բնագավառներում գիտական հետազոտությունների համար:

**Գործնական նշանակության** տեսանկյունից ատենախոսությունը կարող է հիմք հանդիսանալ ՀՀ-ում հասարակություն-պետություն հարաբերությունների վերաիմաստավորման, հասարակության մոտ իրավագիտակցության բարձրացման, իրավագիտակցության ցածր մակարդակի հաղթահարման ուղղությամբ գործնական քայլերի ձեռնարկման համար: Ատենախոսությունը կարող է օգտակար լինել քաղաքագիտության և իրավագիտության բնագավառներում առանձին դասընթացների կազմակերպման համար:

**Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները**: Աշխատանքը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի քաղաքագիտության բաժնի կողմից: Ատենախոսության հիմնադրույթները զեկուցվել են տարբեր գիտաժողովներում և հրապարակվել են տարբեր գիտական հանդեսներում հոդվածների տեսքով:

**Ատենախոսության կառուցվածքը և ծավալը:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, ութ ենթագլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության առաջին՝ «Իրավագիակցությունը որպես

տեսական հարացույց և սոցիալական երևույթ» գլխում իրականացվել է իրավագիտակցության տեսական-մեթոդաբանական հիմքերի վերլուծություն, ուսումնասիրվել է իրավագիտակցության և քաղաքական գիտակցության փոխկապվածության հիմնախնդիրը: Ատենախոսության երկրորդ՝ «Իրավագիտակցության հիմնախնդիրը քաղաքական գործընթացներում» գլխում ուսումնասիրվել է իրավագիտակցության դերը քաղաքական սոցիալականացման գործում, հետազոտվել է քաղաքացիական անհնազանդության հիմնախնդիրը իրավագիտակցության համատեքստում, ինչպես նաև ուսումնասիրվել են քաղաքացիական հասարակության ձևավորման գործում իրավագիտակցության տեղը և դերը: Ատենախոսության երրորդ՝ «Իրավագիտակցության դրսևորման առանձնահատկությունները ՀՀ քաղաքական գործընթացներում» գլխում ուսումնասիրվել են հասարակության և պետության միջև փոխհարաբերությունները իրավագիտակցության համատեքստում, հետազոտվել են հայ հասարակությունում քաղաքացիական հասարակության ձևավորման խոչընդոտները: Առաջադրված խնդրի շրջանակներում ուսումասիրվել են նաև իրավական պետության վերաբերյալ որոշ տեսական հարցեր, և հիմնավորվել է իրավական պետության կառուցման անհրաժեշտությունը: Ատենախոսության ընդհանուր ծավալը 161 էջ է:

# ԳԼՈՒԽ 1. ԻՐԱՎԱԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹ

## 1.1. Իրավագիտակցության հետազոտության տեսական-մեթոդաբանական հիմքերը

Ժամանակակից աշխարհում անհատի՝ որպես սոցիալապես և քաղաքականապես ակտիվ անձի ձևավորման գործում կարևոր նշանակություն ունի իրավագիտակցությունը՝ հիմնված ազատական-ժողովրդավարական արժեհամակարգի վրա: Միայն այս դեպքում է հնարավոր անհատի մոտ ձևավորել քաղաքական գործընթացներում դրսևորվող ինքնուրույն քաղաքական վարքագիծ:

Իրավագիտակցությունը հասարակության սոցիալ-իրավական, քաղաքական, հոգևոր-մշակութային զարգացման կարևորագույն բաղադրատարրն է: Այն դեռևս վաղ ժամանակներից ուղեկցել է մարդկությանը իր բնապատմական զարգացման գործընթացում՝ ունենալով կարևոր դեր հասարակական կյանքում, այդ իսկ պատճառով իրավագիտակցության հիմնախնդիրը տարբեր դիտանկյուններից ուսումնասիրվում է տարբեր գիտությունների շրջանակներում: Իրավագետներն ուսումնասիրում են իրավագիտակցությունը առավելապես որպես իրավական հայացքների և պատկերացումների ամբողջություն, որոնք պայմանավորում են անհատի վարքի իրավաչափությունը (կամ անիրավաչափությունը): Փիլիսոփաներն ուսումնասիրում են իրավագիտակցությունը որպես հասարակության գիտակցության ձև: Սոցիոլոգների համար այն կարևորվում է որպես սոցիալական վերահսկողության ինստիտուտ: Հոգեբաններն իրավագիտակցության մեջ կարևորում են անձի հոգեբանական առանձնահատկությունները, որի բովանդակությունն արտացոլվում է մարդու կողմից ընկալվող իրավունքի աշխարհում և վերջինիս վարքում: Պատմաբանների համար իրավագիտակցությունը պատմականորեն զարգացող երևույթ է: Մշակութաբաններին այն հետաքրքրում է որպես կոնկրետ հասարակության սոցիալական մշակույթի հատուկ և

նշանակալից դրսևորման ձև:[12] Իսկ քաղաքագիտության շրջանակներում, ինչը մեզ համար առավել կարևոր է, իրավագիտակցությունը կարևորվում է քաղաքական գործընթացներում անհատի կողմից դրսևորվող քաղաքական վարքագծի և մասնակցության ուսումնասիրության տեսանկյունից:

Իրավագիտակցության հիմնախնդրի վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ գոյություն ունեն տարբեր մոտեցումներ:

Հասարակական կյանքում և պետական համակարգում իրավագիտակցության հիմնախնդրի տեսական իմաստավորման ակունքները բխում են անտիկ շրջանի փիլիսոփայական մտքի ժառանգությունից (Սոկրատես, Պլատոն, Արիստոտել, Կիկերոն[13]): Անտիկ փիլիսոփայության մեջ ակտիվորեն քննարկվում էին այնպիսի հիմնախնդիրներ, ինչպիսիք են՝ պետության և իրավունքի համահարաբերակցությունը, իրավունքի և ուժի, իրավունքի և արդարության, ինչպես նաև՝ իրավունքի սոցիալական արժեքի հիմնահարցերը: Անտիկ շրջանի մտածողներն են առաջ քաշել իրավունքի ռացիոնալ բնորոշումը՝ հիմք դնելով իրավունքի տեսական իմաստավորմանը:

Իրավունքի փիլիսոփայության մեջ զգալի ներդրում ունեն նաև Վերածննդի և Նոր ժամանակների մտածողներ Նիկոլո Մաքիավելլին, Թոմաս Հոբսը, Ջոն Լոկը, Ժան-Ժակ Ռուսոն, Շարլ Լուի Մոնտեսքյոն[14] և այլք: Իրավունքի փիլիսոփայությունը էական զարգացում է ստացել գերմանական դասական փիլիսոփայության ներկայացուցիչների

---

[12]**Рослов С.**Роль правосознания в формировании гражданского общества в России. Сар., Диссертация на соискание ученой степени кандидата социологических наук, 2005, с. 47.

[13]1.**Нерсесянц В.** История политических и правовых учений, *Политические и правовые учения Древней Греции.* М., Норма, 2003, с. 34-64, 2.**Платон.** Государство, Законы. М., Политик, 1998, 798 с.

3. **Аристотель.** Политика. Афинская полития. М., Мысль, 1997, 487 с. 4. **Нерсесянц В.** История политических и правовых учений, *Учение Цицерона о государстве и праве.* М., Норма, 2003, с. 76-88.

[14] . **Макиавелли Н.** Государь: Сочинения. Хар., Фолио, 2001, 656 с. 2. **Гоббс Т.**Философские основания учения о гражданине. М., Харвест, 2001, 304 с. 3. **Локк Дж.** Два трактата о правлении/ Локк Джон. Сочинения: В 3 Т., Мысль, М., 1988, 160 с. 4. **Руссо Ж.-Ж.** Об общественном договоре. Трактаты. М., Канон-Пресс, 1998, 542 с. 5. **Монтескье Ш.**Избранные произведения. В 2-х томах / Под общ. ред.: М., Баскин Госполитиздат, 1955, 799 с.

(Կանտ, Ֆիխտե և Հեգել[15]) աշխատություններում: Կարևոր է ընդգծել, որ Նոր ժամանակներն իրենց հետ բերեցին նոր իրավական աշխարհընկալում: Այդ ժամանակաշրջանից սկսած՝ հասարակության գիտակցության մեջ սկսում է գերակշռել հենց իրավական, այսինքն՝ կամային, պրագմատիկ բաղադրատարրը (անհատի իրավունքների և պարտականությունների տեսանկյունից): Նկատենք, որ լուսավորության դարաշրջանում առանձնացվեցին ոչ միայն իրավագիտակության ձևական նախանշանները, այլև սահմանվեցին վերջինիս էթիկական հիմնավորվածությունը, քաղաքացիների օրինապաշտությունը և այլ հարցեր:

Կանտն իր «Բարքերի մետաֆիզիկա» աշխատության մեջ իրավական գիտակցությունը իրավացիորեն դիտարկում էր որպես բարոյականության հենասյուն:[16] Հատկապես հասուն իրավագիտակցության շնորհիվ է, որ բարոյականության բարձր արժեքները կարող են մարմնավորվել իրական կյանքում: Բարոյականությունը պայմանավորում է մարդու վարքը, որի արդյունքում ձևավորվում է հասարակական կյանքը կառավարող մի ուժ, ինչն էլ ամրապնդում է բարոյականությունը: Այդ ուժն էլ հենց իրավագիտակցությունն է, որի միջուկը, ըստ Կանտի՝ անձի «քաղաքացիական ինքնուրույնությունն» է:[17]

Կարևոր է նաև ընդգծել Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի, Գ. Պլեխանովի[18] կողմից իրավաքաղաքական հիմնախնդիրների հետազոտության վերաբերյալ տեսական մշակումների նշանակությունը: Նրանց աշխատություններում քաղաքականությունը դիտարկվում է որպես տնտեսության կենտրոնացված դրսևորում, իսկ իրավունքը՝ որպես քաղաքականության կենտրոնացված դրսևորում: Այս դեպքում, փաստորեն,

---

[15]1. **Кант И.** Метафизика нравов/Соч. 8, Т. 6., Чоро, М., 1994, 550 с. 2. **Нерсесянц В.** История политических и правовых учений, *Политко-правовая теория И. Фихте.* М., Норма, 2003, с. 408-412, 3. **Гегель Г.** Философия права. М., Мылсь, 1990, 524 с.

[16]**Кант И.** Метафизика нравов/Соч. 8, Т. 6., М., Чоро, 1994, с. 152.

[17]Гулыга А. Немецкая классическая философия. М., Мысль, 1986, с. 98.

[18]1. **Маркс К. Энгельс Ф.**Избранные сочинения, Т. 4., **М.,** Политиздат, 1986, 681 с. 2. **Нерсесянц В.** История политических и правовых учений, *Политико-правовая идеология большевизма.* **М.,** Норма, 2003, с. 620-622.

իրավագիտակցությունը դիտարկվում է որպես քաղաքական գիտակցության բաղադրատարր:

Իրավագիտակցության տեսական-մեթոդաբանական հիմնախնդիրների ուսումնասիրության գործում մեծ ներդրում ունեն արևմտյան հետազոտողները: Կարևոր ենք համարում նշել Դ. Քենեդիի, Օ. Սարատի, Ս. Քամինգսի, Դ. Քոուենի, Շ. Կուրիլսկի-Օժըվենի[19] աշխատանքները, որոնցում հեղինակները տարբեր դիտանկյուններից անդրադառնում են իրավագիտակության և իրավական մշակույթի հիմնախնդիրներին:

Ամերիկացի հետազոտող Դ. Քենեդին ուսումնասիրում է իրավագիտակցության պատմական ձևերը և պատմաքաղաքակրթական տարբեր ժամանակներում վերջինիս ընկալման հիմնախնդիրը ամերիկյան իրավական մտքի պատմության շրջանակներում:[20]

Մեկ այլ ամերիկացի հետազոտող Օ. Սարատը գտնում է, որ իրավագիտակցությունը չքավորների՝ իշխանության և տիրապետության ձգտելու գիտակցությունն է: Իրավագիտակությունը նաև դիմադրելու գիտակցությունն է, որի դեպքում իրավագիտակցության կրողները պահանջում են իրենց ինքնության և պահանջմունքների ճանաչում:[21] Կարծում ենք, որ այս մոտեցումը բավականաչափ հիմնավորված չէ, քանի որ իրավագիտակցությունը բնորոշ է ոչ միայն չքավորներին, այլև հասարակության բոլոր անդամներին, որը, սակայն, տարբեր սոցիալական խմբերի մոտ կարող է ունենալ տարբեր դրսևորումներ:

---

[19] 1. **Kennedy D.** Toward an Historical Understanding of Legal Consciousness: The Case of Classical Legal Thought in America, 185-1940, /Research in Law and Sociology, Volume 3/, JAI Press, 1980, p. 3-24., 2. **Sarat A.** The law is all over: Power, Resistance, and the Legal Consciousness of the Welfare Poor, 2 Yale Journal of Law and the Humanities, New Haven, 1990, p. 343-379, 3. **Cummings S.** Critical Legal Consciousness in Action,Harvard Law Review Forum, Vol. 120, No. 39, 2007 , http://papers.ssrn.com/sol3/papers.cfm?abstract_id=998040, /10.03.2013/, 4. **Cowan D.** Legal Consciousness: Some Observations, The Modern Law Review, Volume 67, Issue 6, London, 2004, p. 928-958.,

http://www.modernlawreview.co.uk/abstract.asp?ref=0026-7961&vid=67&iid=6&aid=518&s=&d=November%202004, /10.03.2013/,

5. **Kourilsky-Augeven Ch.** Socialisation juridique et conscience du droit, Tome 2, L.G.D.J, Paris, 1997, 198 p.

[20]**Kennedy D.** Toward an Historical Understanding of Legal Consciousness: The Case of Classical Legal Thought in America, 1850-1940 /Research in Law and Sociology, Volume 3/, JAI Press, 1980, p. 3-24.

[21]**Sarat A.** The law is all over: Power, Resistance, and the Legal Consciousness of the Welfare Poor, 2 Yale Journal of Law and the Humanities, New Haven, 1990, p. 343-344.

Կարևոր է նաև անդրադառնալ խորհրդային և հետխորհրդային շրջանի հետազոտողներին, ովքեր իրենց աշխատանքներում ուսումնասիրել են իրավագիտակցության հիմնախնդիրը: Հասարակության գիտակցության քաղաքական և իրավական հիմնախնդիրներն արդյունավետորեն ուսումնասիրվել են Յա. Ասկինի, Ա. Բուտենկոյի, Բ. Գրուշինի, Գ. Օսիպովի, Ա. Սպիրկինի և ուրիշների աշխատություններում,[22] որտեղ հեղինակներն անդրադարձել են հասարակության իրավագիտակցության սոցիալական բնույթին, դրա առանձնահատկություններին, քաղաքական գիտակցության հետ վերջինիս կապին և այլ հարցերի:

Ըստ խորհրդային հետազոտող Ի. Ֆարբերի՝ իրավագիտակցությունը ավանդաբար սահմանվել է որպես հասարակության գիտակցության ձև, որն իրենից ներկայացնում է իրավական հայացքների ամբողջություն, որոնք ունեն նորմատիվ բնույթ և բովանդակում են իրավական երևույթների մասին գիտելիքներ: Դրանք ընդգրկում են նաև նոր իրավական պահանջներ, որոնք արտահայտում են հասարակության զարգացման տնտեսական և քաղաքական պահանջմունքներն ու շահերը:[23] Իրավագիտակցությունը մշտապես զարգացող երևույթ է, որը փոփոխվում է հասարակության գիտակցության հետ մեկտեղ: Այս պարագայում, արդարացիորեն, շեշտը դրվում է իրավագիտակցության արժեքային բաղադրիչի վրա, ինչպես նաև կարևորվում է գործող հասարակական իրավակարգի համար վերջինիս սուբյեկտների պատասխանատվությունը: Սա հատկապես կարևոր է անցումային հասարակությունների համար, երբ տեղի է ունենում կենսարժեքների և ավանդական մշակույթի արմատական վերագնահատում:

Իրավագիտակցությունը, լինելով հասարակական գիտակցության ձև, ենթարկվում է վերջինիս զարգացման օրինաչափություններին: Այն հանդես է գալիս որպես տվյալ հասարակության քաղաքական, տնտեսական և այլ բնույթի հարաբերությունների արտացոլում և մարդկանց գիտակցության մեջ իրավունքի արտահայտման արդյունք:

---

[22]1. **Аскин Я.** Проблема времени, ее философское истолкование. М., Мысль, 1966, 200 с. 2. **Бутенко А.**Общественный прогресс и его критерии. М., Знание, 1980, 64 с. 3. **Грушин Б.**Массовое сознание. М., Политиздат, 1987, 368 с. 4. **Осипов Г.** Социальное мифотворчество и социальная практика. М., Норма, 2000, 543 с. 5. **СпиркинА.**Сознание и самосознание. М., Политиздат, 1972, 303 с.

[23]Фарбер И. Правосознание как форма общественного сознания. М., Юрид. лит., 1963, с. 204-205.

Ռուս հետազոտող Գ. Օստրոումովի կարծիքով՝ իրավագիտակցությունը պատկերացումների, հասկացությունների և գաղափարների համակարգ է, որտեղ պետական-իրավական կամքը պայմանավորում է անձի վարքագիծը:[24] Հեղինակը իրավագիտակցության իր բնորոշման մեջ ոչ ակնհայտորեն արտահայտում է Օ. Կոնտի այն միտքը, ըստ որի՝ մարդկանց ի սկզբանե ներհատուկ է «կարգի ծարավը», որի «հագեցումը» նրանք թողնում են պետության ուսերին:[25]

Ա. Ալեկսեևը գտնում է, որ իրավագիտակցությունը իրավունքի, մարդկանց փոխհարաբերությունների իրավական կառուցվածքի, հասարակության սոցիալ-հոգեբանական կարգի մասին պատկերացում է, որտեղ ընդգծվում է իրավագիտակցության սոցիալ-հոգեբանական բաղադրիչը:[26] Մեր հետազոտության շրջանակներում հետաքրքրական է Ալեկսեևի այս պնդումը, քանի որ իրավագիտակցության հոգեբանական կողմը ներգործում է նաև անձի քաղաքական վարքագծի վրա, ինչն էլ դրսևորվում է իր առանձնահատկություններով տարաբնույթ քաղաքական գործընթացներում:

Իրավագիտակցության վերաբերյալ մեկ այլ տեսակետ է ներկայացնում Վ. Շեգորցևը, ով նշում է, որ իրավագիտակցությունն արտացոլում է հասարակական հարաբերությունների մասնակիցների գործողությունները և արարքները, որոնք կարգավորվում են իրավունքի նորմերով:[27] Իրավագիտակցության վերաբերյալ այս մոտեցումը մատնանշում է վերջինիս սոցիալական բնույթը: Այս պարագայում հեղինակի մեկնակետը ոչ թե իրավունքի նորմից դեպի անձի վարքագիծ տանող ուղին է, այլ հակառակը:

Վերոնշյալ գաղափարները հիմք են տալիս հիմնավորելու իրավագիտակցության՝ որպես գործող կամ ցանկալի իրավունքի մասին գաղափարների, հասկացությունների, պատկերացումների, հայացքների ամբողջության փաստը: Սակայն այս համատեքստում դժվար է հասկանալ քաղաքացիների զանգվածային իրավագիտակցության

---

[24]Остроумов Г. Правовое осознание действительности. М., Наука, 1969, с. 43.

[25]**Конт О.**Дух позитивной философии. (Слово о положительном мышлении) / Перевод с французского И. А. Шапиро. Ростов н/Д., Феникс, 2003, 256 с.

[26]**Алексеев С.** Общая теория права. В 2 т., Т. 1, М., Юрид. лит., 1981, с. 81.

[27]Щегорцев В. Социология правосознания. **М.,** Мысль, 1981, с. 28.

անկանխատեսելիությունը, տարբեր ազգերի, սոցիումների մոտ դրա մշակութային առանձնահատկությունները, դրանց միջև առկա տարբերությունները և նմանությունները: Իրավագիտակցությունն արտացոլում է ոչ միայն դասային և կորպորատիվ, այլև՝ համամարդկային շահերը և պահանջները:

Ռուս հետազոտող Կ. Բելսկիյը արտահայտում է ճիշտ հակառակ կարծիքը, համաձայն որի՝ իրավագիտակցությունը պատմական մատերիալիզմի կատեգորիա է, որը հիմք է հանդիսանում բնորոշելու համար հասարակական գիտակցության այն ձևերը, որոնք դասային շահերի միջոցով արտահայտում են հասարակական կեցության հակասությունները՝ կապված սոցիալական անհավասարության հետ: Դրանք արտահայտվում են իրավական գաղափարների, տեսությունների, հայացքների և հոգեբանական ձևերի համակարգում, որոնք դրսևորվում են համապարտադիր իրավական նորմերում, խմբային, անհատական և հասարակական իրավագիտակցության մեջ:[28]

Ինչ վերաբերում է հայ հետազոտողներին, ապա հարկ է նշել, որ մեր իրականության մեջ իրավագիտակցության հիմնախնդրին նվիրված առանձին համապարփակ աշխատություններ չկան: Արդի հայ հեղինակներից իրավագիտակցությանն առնչվող առանձին խնդիրներին մասնակիորեն անդրադարձել են իրավունքի տեսության և պատմության որոշ մասնագետներ, ինչպես օրինակ՝ իրավագիտության դոկտորներ Գ. Սաֆարյանը, Հ. Ստեփանյանը[29] և այլք:

Ուսումնասիրվող խնդրին մասամբ անդրադարձել է նաև հայազգի ՌԴ ակադեմիկոս Վ. Ներսեսյանցը, ում կարծիքով իրավագիտակցության առանձնահատկությունը, գիտակցության այլ ձևերի (քաղաքական, բարոյական, կրոնականևայլն) հետհարաբերակցությանմեջ, պայմանավորված է հենց իրավունքի առանձնահատկությամբ, որն արտահայտելու համար իրավագիտակցություն նօգտագործում է համապատասխան զգացմունքներ, կերպարներ, պատկերացումներ,

---

[28]Бельский К. Формирование и развитие социалистического правосознания. М., Высшая школа, 1982, с. 101.

[29]1.**Սաֆարյան Գ.** Իրավունքի պատմության և տեսության հիմնահարցեր, Եր., Լիմուշ հրատ., 2010, 696 էջ, 2. **Ստեփանյան Հ.** Իրավունքի գոյաբանություն, Եր., Եվրոպրինտ հրատ., 2012, 224 էջ:

խորհրդանիշներ ու կատեգորիաներ: Ըստ հեղինակի՝ առավել իմաստավորված և ընդհանրացված բնույթ են կրում իրավական կերպարները և պատկերացումները, որոնք արտահայտում են այ կամ այն իրական կամ երևակայական իրավական իրավիճակների, հարաբերությունների սուբյեկտիվ ընկալման և գիտակցման արդյունքները (իրավական կոնֆլիկտների, հանցագործությունների կատարման ու դրանց համար պատասխա-նատվության, հանցագործի ձերբակալման, դատի և այլնի մասին կերպարային պատկերացումները):Իրականության իրավական գիտակցման մեջ նշանակալի դեր են խաղում իրավական խորհրդանիշները՝իրավունքի մասին բազմաթիվ այլկ երպարային պատկերացումների իմաստային բովանդակությունն ընդհանրացված ձևով արտահայտող իրավական կերպարները:[30]

Տեսականորեն զարգացած իրավագիտակցությունը, բացի իրավունքի գիտակցման և արտահայտման զգայական կերպարային ձևերից ու միջոցներից, օգտագործում է նաև վերացական-տրամաբանական ճանաչողության այնպիսի միջոցներ ու ձևեր, ինչպիսիք են՝իրավական հասկացությունները, կատեգորիաները, գաղափարները, սկզբունքները, կառուցվածքներըևայլն: Իրավագիտակցության վերլուծությունը ցույց է տալիս, որ ոչ միայն վերացական-տրամաբանական իրավական հասկացությունները, կատեգորիաները, այլ նաև իրավագիտակցության մինչտեսական ճանաչողական միջոցները (իրավականզ գացմունքները, կերպարները, խորհրդանիշներըևայլն) ինչպես՝իրավունքի, այնպես էլ պետության (բոլորի համարպարտադիր իշխանությունների իրավական կազմակերպման) գիտակցման (գնահատմանևայլնի) ձևերեն:

Այսպիսով՝ ըստ Վ. Ներսեսյանցի՝ իրավագիտակցությունն իր զարգացման բոլորաստիճաններում և իր արտահայտման բոլոր ձևերով, իրավականգիտակցությունից մինչև իրավական հասկացությունները, ոչ միայն իրավունքի և իրավակա ներևույթների (դրանց իմաստի, հատկությունների, բնութագրերի, գործառութային-կարգավորիչ նշանա-

---

[30]**Ներսիսյանց Վ.** Իրավունքի և պետության տեսություն, Եր., Նաիրի հրատ., 2001, էջ 92-93:

կության և այլն), այլ, միաժամանակ, նաև պետության պետական-իշխանական երևույթների արտահայտման, գիտակցման, գնահատման ձև և միջոց է:[31]

Իրավագիտակցության՝ որպես հասարակական գիտակցության ինքնուրույն ձևի վերլուծությունը ենթադրում է վերջինիս բնորոշ գծերի և առանձնահատկությունների բացահայտում: Դրանք են.

- Իրավագիտակցությունը հասարակական գիտակցության ձև է: Սա բնորոշում է այն ամենը, ինչը ներհատուկ է հասարակական գիտակցության բոլոր ձևերին, այսինքն՝ իրավագիտակցության կախվածությունը տնտեսական հիմքից, իրավագիտակցության տարանջատումը գաղափարախոսության և հասարակական հոգեբանության միջև: Իրավագիտացության համար դրսևորման օբյեկտ են համարվում իրավունքը և իրավական իրականությունը: Չնայած՝ իրավական երևույթները դրսևորվում են նաև հասարակական գիտակցության այլ ձևերում (քաղաքական, բարոյական), սակայն դրանք չեն համարվում ճանաչողության գլխավոր օբյեկտ:
- Իրավագիտակցությունն ընդհանուր բնույթի իրավական պատկերացումներն են, որոնք ունեն նորմատիվային նշանակություն մարդկանց վարքագծի համար, և որոնք կարգավորում են այդ վարքագիծը հասարակության անդամների պարտականությունների, իրավունքների, նրանց գործողությունների իրավաչափության և անիրավաչափության տեսանկյունից:
- Իրավագիտակցության անքակտելի մասն է համարվում վերջինիս հոգեբանական բաղադրիչը, որը դրսևորվում է իրավական զգացմունքներում, հույզերում, ապրումներում և կամքում: Իրավագիտակցությունն արտահայտում է մարդկանց վերաբերմունքը իրավական երևույթների նկատմամբ և ներառում է պետական օրենքների արդարության և անարդարության մասին սոցիալական գնահատականը:
- Իրավագիտակության կարևորագույն առանձնահատկություններից է պետության հետ նրա սերտ կապը, ինչը պատմականորեն նպաստում է վերջինիս

[31]Նույն տեղում, էջ 92-93:

կերպափոխմանը իրավական պետության: Իրավագիտակցությունը, ըստ էության, քաղաքացիական հասարակության կամքի արտահայտումն է:[32]

Իրավագիտակցությունն իրականացնում է կառավարման գործառույթ ցանկացած հասարակությունում, հատկապես՝ ժողովրդավարական, քաղաքացիական հասարակությունում:

Իրավագիտակցությունը, ինչպես հասարակական գիտակցության ցանկացած ձև, ունի իր կառուցվածքը, որտեղ ավանդաբար առանձնացվում են իրավական հոգեբանությունը և իրավական գաղափարախոսությունը:

Իրավագիտակցության կառուցվածքում հոգեբանական ասպեկտի նշանակությունը բավականին կարևոր է, քանի որ դա հնարավորություն է տալիս հաշվի առնել անհատների հոգեբանական ապրումները՝ պայմանավորված գործող կամ ցանկալի իրավունքով: Իրավունքի ցանկացած սուբյեկտ իրավական իրականության նկատմամբ ունի հուզական-հոգեբանական որոշակի վերաբերմունք: Իրավական հոգեբանությունը համապատասխանում է հասարակական գիտակցության էմպիրիկ մակարդակին, որը ձևավորվում է ինչպես անհատի, այնպես էլ սոցիալական խմբերի առօրյա գործունեության արդյունքում:

Ռուս հետազոտող Տ. Սինյուկովայի կարծիքով՝ իրավական հոգեբանությունը իրավագիտակցության ոչ համակարգված, տարերային շերտն է, որն արտահայտվում է յուրաքանչյուր մարդու կամ որևէ սոցիալական խմբի առանձին հոգեբանական դրսևորումներում՝ ուղղված պետությանը, իրավունքին, օրենսդրությանը և այլ իրավական երևույթներին:[33]

Այս երևույթն ավելի խորապես ուսումնասիրում է Ե. Լուկաշևան՝ սահմանելով սոցիալ-իրավական հոգեբանությունը որպես հասարակական կեցության արտացոլման կամ որպես հոգևոր գործունեության հատուկ ձև, որն առաջանում է որոշակի սոցիալական

---

[32] **Маркс К., Энгельс Ф.** Сочинения.Т. 21, М., Политиздат, 1961, с. 310 http://publ.lib.ru/ARCHIVES/M/MARKS_Karl,_ENGEL'S_Fridrih/_Marks_K.,_Engel's_F..html#041 /05.08.2013/.

[33] **Синикова Т.** Правосознание и правовое воспитание. Теория государства и права. Под. ред. Н. И. Матузова, А.В. Малько, М., Юрист, 2002, с. 460.

խմբերի մոտ կյանքի ընդհանուր պայմանների և շրջապատող միջավայրի ազդեցության ներքո և որը բնութագրում է դրանց տարերայնորեն ձևավորված հարաբերությունները հասարակության իրավական երևույթների՝ իրավունքի, օրինականության, դատական գործունեության նկատմամբ:[34]

Իրավագիտակցության կառուցվածքում, համաձայն Վ. Ներսեսյանցի, առաջինհերթին, պետք է առանձնացնել երկու տարբեր ճանաչողական մակարդակ՝էմպիրիկ իրավագիտակցաթյան մակարդակ և տեսական (գիտական) իրավագիտակցության մակարդակ: Էմպիրիկ իրավագիտակցությունը իրավունքնի մաստավորում է զգայական-կերպարային, իսկ տեսական իրավագիտակցությունը՝ տրամաբանական-հասկացական ձևով:Ըստ սուբյեկտների՝ իրավագիտակցությունըլ լինում է անհատական, խմբայինն հասարական: Ընդորում՝ ենթադրվում է, որ իրավականգիտակցությունը, ինչպես և գիտակցությունն ընդհանրապես, ներհատուկ է միայն անհատին, իսկ խմբային և հասարակական իրավագիտակցությունը համապատասխան խմբերի ու ամբողջ հասարակությունը կազմող առանձին անհատների իրավագիտակցության բովանդակության և բնույթի ընդհանրացված (առանձին խմբերի կամ ամբողջ հասարակության մակարդակում) արտահայտությունն է:[35]

Իր շարժառիթային-կարգավորիչ բնույթով և կամային ուղղվածությամբ իրավագիտակցությունը լինում է՝ օրենքին հավանություն տվող, օրինապահ և օրինախախտ:

Օրենքին հավանության տվող իրավագիտակցության մեջ օրենքի (գործողիրավունքի) պահանջները, նպատակներն ու արժեքները սուբյեկտը գիտակցում և ընդունում է որպես անվերապահորե նանհրաժեշտ ու օգտակար և կատարման ենթակա: Սուբյեկտի այս պիսի դիրքորոշումը պայմանավորված է, առաջին հերթին, գործող իրավունքի որակական-բովանդակային արժեքներով (դրաարդարությամբ, արժեքով,

---

[34]Лукашева Е. Социально-правовая психология. Советское государство и право. № 8, М., Наука, 1971, с. 22.

[35]**ՆերսեսյանցՎ.**Իրավունքիևպետությանտեսություն, Եր., Նաիրիհրատ., 2001, էջ 94:

օգտակարությամբ և այլն), այլ ոչ թե օրենքի հեղինակությամբ (դրա համապարտադիր ուժով, հարկադիր բնույթով և այլն):

Օրինապահ իրավագիտակցության համար հիմնական գործոնն օրենքի (գործող իրավունքի) հեղինակությունն է: Այս իրավագիտակցության սուբյեկտների դիրքորոշումն օրենքի պահպանման առավելությունների (իր, ուրիշների և ամբողջ հասարակության համար) և դրա խախտման, թերությունների, անշահավետության, բացասական հետևանքների գնահատման վրա հիմնված նպատակահարմար ընտրության արդյունք է: Այդ իմաստով օրինապահ իրավագիտակցությունը պրագմատիկ իրավագիտակցություն է:

Օրինախախտ իրավագիտակցաթյունը նույնպես պրագմատիկ է, որը պայմանավորված է իրավունքըչ պահպանելու և հանցագործություններ կատարելու առավելության ու շահավետության մասին սուբյեկտի պատկերացումներով:[36] Այս տեսանկյունից, մեր կարծիքով, պրագմատիկ իրավագիտակցությունը նույնացվում է կամային իրավագիտակցության հետ:

Հանցավոր կենսաոճն ուղեկցվում է անձի դեգրադացիայով, իրավագիտակցության էական ձևախեղմամբ, որում սկսում են տիրապետողդ իրքեր գրավել, այսպես կոչված, «գողական օրենքի»՝հանցավոր աշխարհի յուրահատուկ, չգրված օրենսգրքի հակահասա-րակական «արժեքները» և հանցավոր պատվիրանները:[37]

Իրավագիտակցության բերված դասակարգումներից երևում է, որ միևնույն անհատի իրավագիտակցության մեջ կարող են առկա լինել իրավագիտակցության տարբեր տեսակներին բնորոշ առանձին բաղադրատարրեր:

Այսպիսով՝ օրենքների, իրավակարգի, օրինականության և ապօրինությունների, իրավաչափության, արդարության և անարդարության նկատմամբ մարդկանց զգացմունքները, հույզերը, ապրումները, սովորությունները, տրամադրությունները և այլ հուզական գործոններ կազմում են իրավական հոգեբանության բովանդակությունը:

Պետք է կարևորել իրավական հոգեբանության դերը իրավագիտակցության կառուցվածքում, քանի որ հենց իրավական հոգեբանությունն է իրավունքի գիտակցման

[36] **ՆերսեսյանցՎ.**Իրավունքիևպետությանտեսություն, Եր., Նաիրիհրատ., 2001, էջ 94-95:
[37] Նույնտեղում, էջ 94-95:

առավել տարածված ձևը: Այն հնարավորություն է տալիս պնդել, որ հասարակական գիտակցության աղբյուրները գտնվում են իրավական իրականության հետ կապված անձի հոգեբանական ապրումներում:

Իրավական հոգեբանության համատեքստում կարևոր է անդրադառնալ նաև անգիտակցական ոլորտին: Խոսքն այն հոգեբանական երևույթների և գործընթացների մասին է, որոնք պայմանավորված են այն իրականության փաստերով, երբ սուբյեկտն իրեն հաշիվ չի տալիս իր գործողությունների համար: Այս կապակցությամբ Տ. Սինյուկովան իրավացիորեն նշում է, որ անգիտակցականի ոլորտն ակտիվորեն ներգրավված է իրավական պատկերացումներում և մասնակցում է ինչպես իրավական, այնպես էլ հակաիրավական վարքագծի ձևավորման գործընթացին:[38]

Իրավական հոգեբանության մեջ անգիտակցականը արտահայտվում է վարքագծի այնպիսի ձևերում, ինչպիսիք են՝ սովորական գործողությունները, կանխազգացումը, հոգեբանական աֆֆեկտը, խուճապը, երբ սուբյեկտը չի գիտակցում իր գործողությունների պատճառները և հետևանքները:

Այսպիսով՝ իրավական հոգեբանությունը սկզբունքային և կարևոր նշանակություն ունի հասարակական-քաղաքական հարաբերությունների իրավական կարգավորման գործում:

Ինչ վերաբերում է իրավական գաղափարախոսությանը, ապա պետք է նշել, որ այն իրավագիտակցության տեսական արտահայտումն է: Իրավական գաղափարախոսությունը որոշակի սոցիալական և գիտական դիրքորոշումների վրա հիմնված իրավական հայացքների, գաղափարների համակարգ է: Գիտական գրականության մեջ գոյություն ունեն իրավական գաղափարախոսության վերաբերյալ տարբեր մոտեցումներ:

Այս հարցում ուշագրավ է Ն. Գրանատի մոտեցումը, ով գտնում է, որ իրավական գաղափարախոսությունը հասարակության տարբեր խմբերի և շերտերի իրավական հայացքների, սկզբունքների և հասարակական պահանջմունքների համակարգված

---

[38] **Синикова Т.**Правосознание и правовое воспитание. Теория государства и права. Под. ред. Н. И. Матузова, А.В. Малько, М., Юрист, 2002, с. 461.

գիտական արտահայտումն է:[39] Այս տեսակետը կիսում և ավելի է խորացնում Ս. Ալեկսեևը: Նրա կարծիքով՝ իրավական գաղափարախոսությունը գերակայող իրավագիտակցության ձևէ, որը ներազդում է գործող իրավական վարդապետությունների վրա և առաջարկում է դիտարկել վերջինս որպես իրավական համակարգ:[40]

Ի տարբերություն իրավական հոգեբանության, որի հիմքը անձի հոգեբանական ապրումներն են, իրավական գաղափարախոսությունը բնութագրվում է իրավունքի գիտական-փիլիսոփայական իմաստավորմամբ՝ որպես ամբողջական սոցիալական երևույթ, այլ ոչ թե՝ որպես իրավունքի առանձին տարրերի դրսևորում (օրինակ՝ դատական վճիռներ, այլ իրավական նորմեր և այլն):

Իրավական գաղափարախոսության միջոցով դրսևորվում են տարբեր դասերի, սոցիալական խմբերի, իշխող ընտրախավերի պահանջմունքները և շահերը: Իրավական իրականության գաղափարախոսական արտացոլման մեջ միշտ առկա է սուբյեկտիվ տարրը, քանի որ ցանկացած գաղափարախոսական վարդապետություն, որպես կանոն, ստեղծվում և մշակվում է առանձին մարդկանց, հասարակական-քաղաքական գործիչների և փիլիսոփաների կողմից: Արդյունքում՝ իրավական գաղափարախոսությունը դառնում է բազմաթիվ մարդկանց ձեռքբերումը, ովքեր իրենց գիտակցության մեջ հասել են իրավական իրականության համակարգային և ամբողջական ընկալմանը:

Անկասկած՝ իրավական գաղափարախոսությունը իրավունքի ճանաչողության բնույթով և աստիճանով էապես գերազանցում է իրավական հոգեբանությանը: Բանն այն է, որ իրավական հոգեբանությունը հիմնականում կենտրոնանում է արտաքին-զգայական ասպեկտի վրա, որը համապատասխանում է մարդու առօրյա փորձին, այնինչ իրավական գաղափարախոսությունը կոչված է վեր հանելու իրավունքի էությունը, դրա սոցիալական իմաստը և բնույթը՝ այն դիտարկելով որպես ավարտուն փիլիսոփայական հայեցակարգ և իրավական վարդապետություն: Իրավական գաղափարախոսությունը որպես իրականության իրավական գիտակցության միջոց՝ ուսումնասիրվել է Հեգելի իրավունքի

---

[39] Гранат Н.Правосознание и правовая культура. Теория права и государства. Под ред. Н.В. Уфа, Катаева и В.В. Лазарева/, 1994, с. 328.

[40] Алексеев С. Общая теория права. М., Т. 1, 1981, с. 212.

փիլիսոփայության մեջ, պետության և իրավունքի բնաիրավական, պոզիտիվիստական, մարքսիստական ուսմունքներում և մի շարք այլ ժամանակակից տեսություններում:[41]

Եթե իրավական հոգեբանությունը մեծապես ծառայում է մարդկանց անհատական և զանգվածային-տարերային հարաբերությունների հետազոտության համար, ապա իրավական գաղափարախոսությունը նախ և առաջ ուղղված է հասարակության տարբեր սոցիալական խմբերի՝ դասերի, ազգերի, քաղաքական կուսակցությունների, հասարակական-քաղաքական շարժումների, պետությունների, միջպետական միավորումների պահանջմունքների և շահերի արտահայտմանը:

Աշխարհում չկա որևէ պետություն, որը չունենա իրավական գաղափարախոսություն: Արդի աշխարհում ժողովրդավարական պետական-իրավական գաղափարախոսությունը համարվում է ցանկացած հասարակության գործառնության կարևոր պայման: Սահմանադրության և այլ իրավական ակտերի բովանդակության մեջ նշվում է տվյալ պետության իրավական հայացքների, գաղափարների մասին, ինչն էլ կազմում է տվյալ պետության իրավական գաղափարախոսությունը: Գաղափարախոսական-իրավական նշանակալից փաստաթղթեր են համարվում օրինակ՝ ԱՄՆ Սահմանադրությունը,[42] Ֆրանսիայի Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիրը[43] և այլն, որոնք հանդիսանում են արևմտյան ժողովրդավարական պետությունների իրավական համակարգի անկյունաքարերը: Հարկ է նշել, որ իրավական գաղափարախոսության ազատական-ժողովրդավարական դրույթները ներառված են նաև ՀՀ Սահմանադրությունում:[44]

Հետխորհրդային Հայաստանը կարող էր գոյատևել միայն ազգային պետական-իրավական գաղափարախոսության առկայության պարագայում: Նախորդ տասնամյակները ժխտողական վերաբերմունք էին ձևավորել խորհրդայինից բացի այլ

---

[41] 1. **Гегель Г.** Философия права 1820, http://filosof.historic.ru/books/item/f00/s00/z0000360/, /09.03.2013/, 2. **Нерсесянц В.** Философия права: Учебник для вузов, Москва, Норма, 2005, 656 с.

[42] **Constitution of the United States**, http://constitutionus.com/, /02.02.2013/.

[43] **1789թ. Ֆրանսիայի Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիր**, http://www.assemblee-nationale.fr/histoire/dudh/1789.asp, /02.02.2013/:

[44] **ՀՀ Սահմանադրություն,** http://www.parliament.am/parliament.php?id=constitution, /02.02.2013/:

գաղափարախոսության նկատմամբ: Սակայն, ինչպես հայտնի է, խորհրդային գաղափարախոսությանը փոխարինման եկավ ազատական-ժողովրդավարական գաղափարախոսությունը: Ինչպես նշում է Ս. Հանթինգտոնը՝ անցումը ժողովրդավարությանը համապատասխան նախադրյալների բացակայության դեպքում կարող է հանգեցնել հակաժողովրդավարական զարգացումների:[45] Այս պարագայում հնարավոր է իրավական գաղափարազրկում, ինչը կարող է ձևավորել խիստ վտանգավոր մի իրավիճակ՝ պետական կառուցվածքի անորոշություն, օրենքի հեղինակության կտրուկ անկում, հանցավորության և կոռուպցիայի աճ, որոնք կարող են հանգեցնել հասարակության զանգվածային գիտակցության այլափոխության, տագնապի և ապագայի հանդեպ վախի առաջացման: Այս պարագայում հասարակությունում մի կողմից կարող է առաջանալ հոգեբանական ջլատվածություն, իսկ մյուս կողմից՝ արմատականության և սոցիալական ծայրահեղականության դրսևորումներ: Ակնհայտ է, որ այսպիսի խարխուլ գաղափարական հենքի վրա անհնար է կառուցել իրավական պետություն և քաղաքացիական հասարակություն:

Արդի Հայաստանի Հանրապետության համար հետանցումային շրջանում իրավական գաղափարախոսության արմատավորումը հասարակության իրավաքաղաքական գիտակցության մեջ ձեռք է բերում առավել կարևոր նշանակություն:

Իրավական գիտակցությունը բավականին բարդ երևույթ է, որը բաղկացած է տարբեր բաղադրատարրերից: Այն նախ և առաջ ներառում է իրավական գիտելիքներ, արժեքներ, որոնք կազմում են վերջինիս առանցքը:

Այսպիսով՝ իրավական հոգեբանությունը և իրավական գաղափարախոսությունը, լինելով իրավագիտակցության կառուցվածքային տարրեր, լրացնում և հարստացնում են միմյանց, ինչպես նաև նպաստում են հասարակական զանգվածային գիտակցության մեջ սոցիալ-իրավական բաղադրատարրի դերի բարձրացմանը:

Գիտական գրականության մեջ իրավագիտակցության դասակարգման հարցում հաշվի են առնվում իրավական կեցության ակունքները: Այս չափանիշի տեսանկյունից

[45]**Хантингтон С.** Третья волна: Демократизация в конце XX века. РОССПЭН, М., 2003, с. 285.

առանձնացնում են իրավագիտակցության հետևյալ տեսակները՝ առօրեական, գիտական, մասնագիտական:

Առօրեական իրավագիտակցությունը իրավունքի, օրինականության, իրավակարգի վերաբերյալ մարդկանց զանգվածային պատկերացումներն են, տրամադրությունները, հույզերը, զգացումները: Դրանք առաջանում են մարդկանց կենսափորձի և կենսապայմանների անուղղակի ազդեցության ներքո: Գ. Օստրոումովի պնդմամբ՝ մարդկանց առօրեական, էմպիրիկ իրավագիտակցությունը հետևում է պատմական գործընթացին, որը ձևավորում է անհատի առօրյան:[46] Ե. Լուկաշևան գտնում է, որ առօրեական իրավագիտակցությունը ձևավորվում է այս կամ այն իրավական երևույթների շնորհիվ, որոնք դրսևորվում են վարքագծի որոշակի մոդելների միջոցով:[47]

Գիտական իրավագիտակցությունը հայացքների, գաղափարների, հայեցակարգերի ամբողջություն է, որն արտահայտում է իրավունքի համակարգված, տեսական յուրացումը: Կ. Բելսկին գիտական իրավագիտակցությունը սահմանում է որպես իրավական գիտելիքների համակարգ, որն արտահայտվում է իրավական գաղափարների, հասկացությունների և կատեգորիաների միջոցով, որոնք էլ, իրենց հերթին, ուղղված են հասարակության իրավական կյանքի բնույթի և զարգացման օրենքների բացահայտմանը:[48] Գիտական իրավագիտակցությունն առավել ճշգրիտ է իմաստավորում և արտացոլում պետաիրավական երևույթները, մշակում իրավական տեսություններ, հայեցակարգեր, սկզբունքներ և օրինաչափություններ: Ժամանակակից հասարակությունում գիտական իրավագիտակցությունն առաջնային դեր ունի իրավունքի, օրենսդրության, քաղաքական-սահմանադրական հարաբերությունների զարգացման գործում:

Հասարակական գիտակցության մեջ կարևոր նշանակություն ունի նաև մասնագիտական իրավագիտակցությունը: Դա իրավական գիտելիքների, համոզմունքների, գաղափարների, կողմնորոշումների ամբողջությունն է, որի սուբյեկտներն են իրավաբանության ոլորտի աշխատողները: Խիստ գիտական իմաստով,

[46] **Остроумов Г.** Правовое осознание действительности. М., Наука, 1969, с. 151.
[47] Лукашева Е.Социалистическое правосознание и законность. М., Юрид. лит., 1973, с. 153.
[48] **Бельский К.**Формирование и развитие социалистического правосознания. М., Высш. шк., 1982, с. 44.

ինչպես նշում է Ն. Սոկոլովը, մասնագիտական իրավագիտակցություն ասելով՝ հասկանում ենք այն իրավագիտակցությունը, որի կրողները իրավաբաններն են:[49]

Մասնագիտական իրավագիտակցությունը անմիջականորեն կապված է իրավաբանական պրակտիկայի հետ և ներառում է իրավաբանների գործնական աշխատանքի արդյունքում ձևավորված փորձը, սովորույթները, ավանդույթները:

Ըստ Վ. Ներսեսյանցի՝ մասնագիտական իրավագիտակցությունը՝ որպեսի ատուկ իրավաբանական կրթություն ստացած մարդկանց խմբային իրավագիտակցություն, այս կամ այն ձևով իր մեջ ներառում է տեսական իրավագիտակցության որոշ հիմնական բաղադրատարրեր:Սակայն իրավագիտակցության այդ տարբեր տեսակները, իհարկե, չի կարելի նույնացնել: Մասնագիտական իրավագիտակցությունը, ներմասնագիտական տարբերությունների հաշվառմամբ, կարևոր է բաժանելմասնագիտական խմբերի (իրավաբան-գիտնականների իրավագիտակցություն և իրավաբան-պրակտիկների իրավագիտակցություն) և ենթախմբերի (դատավորների իրավագիտակցություն, դատախազության աշխատակիցների իրավագիտակցություն, ոստիկանության աշխատակիցների իրավագիտակցություն, փաստաբանների իրավագիտակցություն և այլն):Մասնագիտական իրավագիտակցության զարգացման մակարդակից, դրան ներհատուկ իրավաբանական արժեքային մոտեցումների և կողմնորոշումների բովանդակությունից և բնույթից մեծապես կախված է պետական ապարատի գործունեության որակը և, ամբողջությամբ, պետական գործառույթների պատշաճ իրականացումը:[50]

Իրավագիտակցության սուբյեկտների տեսանկյունից տարբերում են իրավագիտակցության զանգվածային, խմբային և անհատականձևերը, որոնց փոխգործակցության դիալեկտիկան բավականին խրթին է և ոչ միանշանակ:

Մասնագիտական գրականության մեջ լայն տարածում ունի այն տեսակետը, ըստ որի՝ իրավագիտակցության էությունը բխում է հասարակական, կոլեկտիվ գիտակցությունից: Այս տեսակետին հակադրվում են այն հետազոտողները, ովքեր բացառում են հասարակական, կոլեկտիվ իրավագիտակցության գոյությունը:

---

[49]**Соколов Н.** Профессиональное сознание юристов. М., Наука, 1988, с. 10.

[50]**Ներսեսյանց Վ.** Իրավունքիևպետությանտեսություն, Երևան,Նաիրի հրատ., 2001, էջ 95:

Մասնավորապես՝ Լ. Պետրաժիցկին կարծում է, որ բոլոր իրավական դատողությունները բացառապես անհատական երևույթներ են, որոնք գոյություն ունեն առանձին անհատի գիտակցության մեջ:[51] Մեր կարծիքով՝ այս տեսակետն այնքան էլ հիմնավորված չէ, քանի որ այս դեպքում դժվար է բացատրել մարդկանց մոտ զանգվածային հոգեբանության դրսևորումը հասարակական-քաղաքական գործընթացներում, որը միավորում է մարդկանց միևնույն նպատակին հասնելու համար:

Զանգվածային իրավագիտակցությունը սերտորեն կապված է անհատական իրավագիտակցության հետ: Դրանք ակտիվորեն փոխգործում և փոխներթափանցում են, և զանգվածային իրավագիտակցությունն իր ստույգ կրողին է գտնում անհատական իրավագիտակցության մեջ: Այս պարագայում զանգվածային իրավագիտակցությունն ավելի հարուստ է, բարդ և խորքային, քան հասարակության մեջ գոյություն ունեցող անհատների առանձին իրավագիտակցությունների ամբողջությունը: Զանգվածային իրավագիտակցությունն ամբողջությամբ չի ձուլվում որևէ սուբյեկտիվ իրավագիտակցության հետ, այլ, որպես կանոն, բարձրացնում և համարկում է վերջինիս:

Ճիշտ չէ զանգվածային իրավագիտակցությունը նույնականացնել հասարակական իրավագիտակցության հետ, քանի որ վերջինս ավելի ընդգրկուն է և ներառում է ինչպես զանգվածային, այնպես էլ խմբային և անհատական իրավագիտակցությունները: Զանգվածային իրավագիտակցության առանձնահատկությունը առավելագույն կողմնորոշվածությունն է դեպի հասարակության տարբեր շերտերի ընդհանուր կամքը, զգացումները, ցանկությունները, ինչը հնարավորություն է տալիս հասարակության լայն շերտերին առաջ ընթանալու ստույգ իրավական կողմնորոշվածությամբ: Որպես ասվածի հիմնավորում՝ նշենք 1995 թ. ՀՀ Սահմանադրության հանրաքվեն:

Զանգվածային իրավագիտակցությունը, որպես հոգևոր երևույթ, բաղկացած է գիտակցական և անգիտակցական մակարդակներից: Առաջին մակարդակին են վերաբերում իրավական զգացումները, պատկերացումները, հույզերը, տրամադրությունները, որոնք ակտիվորեն արձագանքում են սոցիալ-քաղաքական

[51]Петражицкий Л. Введение в изучение права и нравственности. Основы эмоциональной психологии. Тип. Ю.Н. СПб., Эрлих, 1908, с. 24-25.

փոփոխություններին: Երկրորդ մակարդակը բնութագրում է զանգվածային իրավագիտակցության խորքային կառուցվածքը, որը տարբերվում է իրավական ավանդապաշտությամբ և պահպանողականությամբ: Զանգվածային իրավագիտակցության մեջ իրավական կայունության և շարժունակության որակների պահպանումը կարևոր նախապայման է իրավական բարեփոխումների հաջող իրականացման համար:

Անհատական իրավագիտակցությունը ներառում է այնպիսի տարրեր, ինչպիսիք են՝ իրավունքի նկատմամբ վերաբերմունքը, իրավունքի իմացությունը, իրավաչափ վարքի դրսևորման պատրաստակամությունը:[52] Յուրաքանչյուր անհատական իրավագիտակցություն ներառում է որևէ յուրահատուկ, ինքնատիպ տարր: Այն չի կարող մրցակցել զանգվածային իրավագիտակցության հետ քաղաքական ներուժի տեսանկյունից: Սակայն այն կարող է գերազանցել վերջինիս հոգևոր հզորության, իրավական հեռատեսության տեսանկյունից՝ ունակ լինելով ավելի շուտ գիտակցելու իրավագիտակցության անհատական, խմբային, հասարակական-մշակութային համատեքստը: Անհատական իրավագիտակցության կրողները կարող են էական ազդեցություն թողնել զանգվածների վրա: Կարելի է ասել, որ նոր իրավաքաղաքական գաղափարների, հայացքների, պատկերացումների, տեսությունների միջոցով նրանք որոշակի սահմաններում կարող են կառավարել և վերահսկել կոլեկտիվ իրավագիտակցությունը:

Ինչ վերաբերում է խմբային իրավագիտակցությանը, ապա այն միջանկյալ դիրք է զբաղվում անհատական և զանգվածային իրավագիտակցությունների միջև և ներառում է տարբեր դասերի, սոցիալ-ժողովրդագրական և այլ խմբերի (աշխատավորներ, գյուղացիներ, մտավորականներ, ձեռներեցներ, երիտասարդներ, հաշմանդամներ, թոշակառուներ և այլն) իրավագիտակցությունը: Այս բոլոր խմբերը բնութագրվում են ինչպես ընդհանուր, այնպես էլ յուրահատուկ իրավական հայացքներով և պատկերացումներով՝ պայմանավորված իրենց կենսակերպով, խմբային, դասային կամ կորպորատիվ շահերով, իրավական տեղեկատվության ձեռքբերման աղբյուրներով և այլն:

[52] **Рослов С.** Роль правосознания в формировании гражданского общества в России. Сар., Диссертация на соискание ученой степени кандидата социологических наук, 2005, с. 67.

Այս պարագայում ուշագրավ է արդի հայ հասարակության քաղաքական ընտրախավի իրավագիտակցության հետազոտությունը, որի կրողներն առավել կարևոր դերակատարություն և պատասխանատվություն ունեն իրավական պետության ձևավորման, կայացման և զարգացման գործում:

Վ. Սապունը նշում է, որ խմբային իրավագիտակցությունը իրավունքի և այլ իրավական երևույթների մասին հավաքական պատկերացումներն ու զգացումներն են, որոնք արտահայտում են սոցիալական խմբերի, կոլեկտիվների, ժամանակավոր սոցիալական կազմավորումների՝ իրավական երևույթներին վերաբերող հարաբերությունները և գնահատականները:[53] Հարկ է նկատել, որ այս պարագայում հեղինակը, հիմնվելով սոցիալիստական-կոմունիստական գաղափարախոսության վրա, խմբային իրավագիտակցության մեջ ներառել է միայն սոցիալական խմբերին՝ անտեսելով քաղաքական խմբավորումների իրավագիտակցության հանգամանքը, ինչն արդի ժողովրդավարական-կապիտալիստական աշխարհում մեծ նշանակություն և կարևորություն ունի հասարակական-քաղաքական հարաբերությունների զարգացման գործում:

Խմբային իրավագիտակցության մեջ իրենց արտացոլումն են գտնում ինչպես անհատական, այնպես էլ զանգվածային իրավագիտակցության առանձնահատկությունները: Ն. Սոկոլովն իրավացիորեն նշում է, որ խմբային իրավագիտակցությանը վերաբերում է այն ամենը, ինչն ընդհանուր է այս կամ այն համայնքին պատկանող մարդկանց մեծամասնության մոտ:[54] Հետևաբար՝ իրավագիտակցության այս ձևը ունի համընդհանուր բնույթ անհատական և զանգվածային իրավագիտակցությունների համար:

Այսպիսով՝ զանգվածային, խմբային և անհատական իրավագիտակցությունները, լինելով իրավագիտակցության ձևեր, փոխհարաբերակցվում են որպես ընդհանուր, հատուկ և առանձին երևույթներ:

---

[53] **Сапун В.** Социалистическое правосознание и реализация советского права. Влд., ДВГУ, 1984, с. 14.

[54] **Рослов С.** Роль правосознания в формировании гражданского общества в России. Сар., Диссертация на соискание ученой степени кандидата социологических наук, 2005, с. 68.

Հարկ է նկատել, որ իրավագիտակցության ներքին վիճակի վրա լուրջ ազդեցություն են թողնում քաղաքական, տնտեսական, բարոյական, կրոնական և այլ գործոններ:

Իրավագիտակցության տեսական ուսումնասիրության գործում կարևոր է անդրադառնալ նաև վերջինիս գործառույթներին, որոնք բավականին լուրջ ուշադրության են արժանանում մասնագետների կողմից: Հայտնի է, որ հասարակագիտական գրականության մեջ «գործառույթ» եզրույթը հաճախ գործածվում է տարբեր նշանակություններով՝ որպես գործառնության հնարավորություն և ինքնին գործառնություն, դեր, հատկություն, նշանակություն, հասարակության կենսագործունեության ոլորտում տվյալ գիտության դերակատարություն[55] և այլն:

Մասնագիտական գրականության մեջ առավել տարածված է իրավագիտակցության գործառույթների հետևյալ դասակարգումը՝ ճանաչողական, արժեքաբանական, կարգավորիչ, նորմատիվ-կանխատեսման, դաստիարակչական և գաղափարախոսական:[56]

Իրավագիտակցության կարևոր գործառույթներից է ճանաչողական գործառույթը: Իրավագիտակցությունը նախ և առաջ գիտելիք է, որը հարստացնում է մարդու մտահորիզոնը իմաստաբանական և արժեքային իրավական տեղեկատվությամբ: Իրավական գիտելիքները եղել և մնում են բոլոր ժողովուրդների և երկրների մշակութային-քաղաքակրթական կյանքի հիմնարար արժեքները: Վ. Ներսեսյանցի կարծիքով՝ իրավագիտակցության ճանաչողական գործառույթն այն բանի գիտակցության մեջ է, թե ի՞նչ է իրավունքը և արդյո՞ք այն իրականացվում է առանձին իրավական երևույթների ու ամբողջությամբ իրավունքի հայտնաբերման, արտահայտման և իմաստավորման տարբեր ձևերով (զգայական, կերպարային, տրամաբանական-հասկացական):[57]

Իրավագիտակցության հաջորդ գործառույթը արժեքաբանական գործառույթն է, որը գիտելիքի, իմացության հետ մեկտեղ ներառում է նաև դրանց վերաբերյալ գնահատականը: Ճանաչելով սոցիալ-քաղաքական իրականությունը, իմաստավորելով սեփական իրավունքները և պարտականությունները, իրավական նորմերի և օրենքների

---

[55]**Функции политологии**,http://politologiyalekcii.ru/fukcii/funktsii-p.php, /09.03.2013/.

[56]**Бура Н.** Функции общественного правосознания. Киев,Наукова Думка, 1986, с. 21-27.

[57]**Ներսեսյանց Վ.**Իրավունքիևպետությանտեսություն, Երևան,Նաիրիհրատ., 2001, էջ 92:

բովանդակությունը, իրավակարգի և օրինականության վիճակը՝ իրավագիտակցության սուբյեկտը տալիս է դրանց վերաբերյալ իր գնահատականը: Վ. Ներսեսյանցի մոտ արժեքաբանական գործառույթը, կարծես թե, նույնացվում է իրավագիտակցության գնահատողական գործառույթի հետ, համաձայն որի՝ այն իրավունքի մասին որոշակի արժեքային պատկերացումների և գաղափարների ձևավորման մեջ է, որոնցից ելնելով՝ իրավագիտակցության սուբյեկտը գնահատում է գործող իրավունքը և իրավական իրողությունը:[58]

Մեր կարծիքով՝ այս գործառույթի իրականացման աստիճանից է մեծապես կախված անձի իրավագիտակցության մակարդակը: Այսինքն՝ իրավագիտակցության մակարդակը և ձևը ուղիղ համեմատական են այս գործառույթի դրսևորման մակարդակին:

Իրավագիտակցության ճանաչողական և արժեքաբանական գործառույթների հետ սերտորեն կապված է նաև կարգավորիչ գործառույթը, որը հնարավորություն է տալիս ուղղել, ճշգրտել սեփական վարքագիծը իրավական պահանջների հետ այն համադրելու միջոցով:

Գրականության մեջ հանդիպում են իրավագիտակցության կարգավորիչ գործառույթի բացառման վերաբերյալ որոշ դատողություններ:[59] Մեր կարծիքով՝ իրավագիտակցության կարգավորիչ գործառույթի դերի և նշանակության բացառումը անհատական մակարդակում ճշմարիտ չէ, քանի որ անհատական մակարդակում առավելապես կարևորվում է անհատական իրավագիտակցությունը, այսինքն՝ անձի կողմից սեփական իրավունքների և պարտավորությունների իմացությունը և դրանց վերաբերյալ սեփական գնահատականը:

Իրավագիտակցության նորմատիվ-կանխատեսման գործառույթը պայմանավորված է նախորդ գործառույթներով: Հասարակական գիտակցությունը կոչված է ապահովելու իրավունքի նորմերի իրականացումը, կանխատեսելու և ընդհանրացնելու իրավական

---

[58]**Ներսեսյանց Վ.** Իրավունքիևպետությանտեսություն, Երևան, Նաիրիհրատ., 2001, էջ 92:

[59]**Бегинин В.** Общественное правосознание и государственность / Под ред. В.А. Шабалина.: Сар., Изд-во Сарат. ун-та, 1993, с. 39.

կարգավորման արդյունքները և գիտակցելու դրա հետագա կատարելագործման օբյեկտիվորեն պայմանավորված ուղիները:

Իրավագիտակցության ավանդական և խորապես մշակված գործառույթներից են դաստիարակչական և գաղափարախոսական գործառույթները: Ակնհայտ է, որ հասարակության մեջ տիրող իրավական գաղափարների, պատկերացումների, հայացքների, պետության կողմից ընդունված իրավական նորմերի իմացությունը և գիտակցումը անձի սոցիալականացման, քաղաքացիական ինքնագիտակցության ձևավորման, ինքնավերահսկման կարևոր պայմաններն են:

Ժամանակին իրավագիտակցության գաղափարախոսական գործառույթը համարվում էր առաջնային: Սակայն ներկայումս այդ մասին հետազոտողները փորձում են չբարձրաձայնել: Այս հանգամանքը կարելի է բացատրել պետության կողմից որևէ գաղափարախոսության պարտադրման երևույթի նվազման հանգամանքով՝ ի տարբերություն ԽՍՀՄ-ի, որը հարկադրաբար տարածում էր կոմունիստական գաղափարախոսությունը: Այսօր գաղափարախոսական պլյուրալիզմի պայմաններում գրեթե վերացել է որևէ գաղափարախոսության բացահայտ պարտադրման երևույթը, ինչն էլ, կարծես թե, մի փոքր նվազեցրել է իրավագիտակցության գաղափարախոսական գործառույթի դերակատարությունը հասարակական-քաղաքական գործընթացներում:

Խոսելով իրավունքի և իրավագիտակցության մասին, կարելի է պնդել, որ կոնկրետ իրավական երևույթները գոյություն ունեն և գործում են կոնկրետ սոցիալական տարածության մեջ, որն իրենից ներկայացնում է հասարակական հարաբերությունների կարգավորման երկակի մեխանիզմ: Իրավունքն այս մեխանիզմի ինստիտուցիոնալ կողմն է, իսկ իրավագիտակցությունը՝ նույն մեխանիզմի մարդկային, հոգևոր, բարոյական և զգացմունքային կողմը: Իրավունքը և իրավագիտակցությունը հասարակության իրավական համակարգի համակարգաստեղծ տարրերն են: Եվ, եթե այս երկու տարրերից նույնիսկ մեկը բացակայում է, ապա տվյալ կառուցվածքը կորցնում է իր իմաստը:

Իրավունքի և իրավագիտակցության միջև տարբերությունները կարելի է որոշել տարբեր չափանիշներով: Իրավունքը և իրավագիտակցությունը տարբերվում են

հասարակական հարաբերությունների վրա ներգործության մեխանիզմով: Իրավունքը, իրավահարաբերության սուբյեկտներին ներկայացնելով իրենց իրավունքները և ազատությունները, նրանց հաղորդելով որոշակի իրավական պարտավորություններ, կարգավորում է նրանց վարքը: Իրավագիտակցության միջոցով այն ձևավորում է խթաններ, անհատի գործունեության նպատակներ: Եթե իրավագիտակցությունը միտք է, գաղափար, զգացմունք, ապա իրավունքը ձևավորված օբյեկտիվությունն է:

Իրավունքի և իրավագիտակցության փոխազդեցությունը կարող է առաջ բերել մի շարք հակասություններ: Դա տեղի է ունենում այն դեպքերում, երբ առաջադեմ պետական և քաղաքական գործիչները, հասկանալով գործող իրավական նորմերի անհամապատասխանությունը իրական կյանքին, հանդես են գալիս հին օրենքների փոփոխության և նոր օրենքների ընդունման օգտին:

Այսպիսով՝ իրավագիտակցությունը ներթափանցում է հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման և իրավական ազդեցության ամբողջ մեխանիզմի մեջ:

Իրավագիտակցության ճիշտ ըմբռնման համար հատուկ նշանակություն ունի իրավական մշակույթի վերլուծությունը: Իրավական մշակույթը, որպես մշակույթի հարաբերականորեն ինքնուրույն ձև, ունի հատուկ դեր և կարևորություն հասարակության սոցիալ-մշակութային տարածության մեջ:

Ըստ Վ. Կամինսկայայի և Ա. Ռատինովի՝ իրավական մշակույթը հասարակական և իդեալական տարրերի համակարգ է, որը վերաբերում է իրավունքի գործածության ոլորտին և դրա արտացոլմանը մարդկանց գիտակցության և վարքի մեջ:[60]

Որպես հասարակության իրավական մշակույթի տարրեր են հանդես գալիս իրավական ոլորտի բաղադրիչները, որոնք կոչված են ծառայելու որպես չափորոշիչներ իրավունքի սուբյեկտների վարքի համար և ապահովելու հասարակության և անհատի համար առաջանցիկ զարգացում: Այդ բաղադրիչների մեջ սովորաբար կարևորվում են իրավունքը, իրավահարաբերությունը, պետական կառույցները և հասարակական

[60]Каминская В., Ратинов А. Правосознание как элемент правовой культуры. Правовая культура и вопросы правового воспитания. Изд. М., Всесоюз, 1974, с. 43.

կազմակերպությունները, որոնք ապահովում են իրավունքի իրացումը, իրավագիտակցությունը, իրավական վարքագիծը, այսինքն՝ մարդկանց անմիջական գործողությունները իրավունքի իրացման և կիրառման հարցում:

Ն. Կեյզերովը նշում է, որ իրավական մշակույթի նշված տարրերին պետք է ավելացնել իրավունքի գնահատման և իրավական վարքագծի քաղաքական գնահատման չափանիշները:[61] Մեր հետազոտության շրջանակներում կարևոր ենք համարում ընդգծել հատկապես Ն. Կեյզերովի այս տեսակետը:

Այսպիսով՝ ուսումնասիրելով և վերլուծելով իրավագիտակցության հիմնախնդրի վերաբերյալ տեսական մոտեցումները և պատկերացումները՝ կարող ենք նշել, որ հասարակության իրավագիտակցությունը ժամանակի ընթացքում զարգացել և ենթարկվել է լուրջ փոփոխությունների՝ հարստանալով ազատական-ժողովրդավարական գաղափարներով, որոնք ներթափանցել են նաև հասարակության իրավական գիտակցության մեջ՝ պայմանավորելով վերջինիս վարքագիծը:

Նկատենք, որ զգալի առաջընթաց է ապրել նաև իրավական մշակույթը՝ անցում կատարելով սովորութային իրավունքից եկեղեցական կանոնների, այնուհետև ժամանակի ընթացքում ձևավորվել է նորմատիվ իրավական ակտը, որոնք նպաստել են հասարակության մեջ տիրող իրավական գաղափարների, պատկերացումների, հայացքների, պետության կողմից ընդունված իրավական նորմերի իմացությանը և գիտակցմանը, անձի սոցիալականացման, քաղաքացիական ինքնագիտակցության, ինքնավերահսկման և վարքագծի ձևավորմանը: Հասարակության պատմաքաղաքակրթական զարգացման տարբեր շրջաններում գործել են իրավագիտակցության կոնկրետ ձևեր, որոնք իրենց ուրույն ազդեցությունն են թողել հասարակական-քաղաքական գործընթացների վրա:

---

[61]Кейзеров Н. Политическая и правовая культура. М.,Юрид. лит. , 1983, с. 113.

## 1.2 Իրավագիտակցության և քաղաքական գիտակցության փոխհարաբերակցության հիմնախնդիրը

Իրավագիտակցությունը և իրավական մշակույթը մարդկության կողմից կուտակած իրավական արժեքների, պատկերացումների, զգացումների և սովորույթների ամբողջությունն է: Այդ իսկ պատճառով իրավագիտակցությունը և իրավական մշակույթը սոցիալ-քաղաքական զարգացման կարևոր նախապայմաններից են: Այս արժեքները նույնպես, ինչպես ավանդական մշակութային արժեքները, պաշտպանության կարիք ունեն: Իրավագիտակցությունը և իրավական մշակույթը կարելի է համարել ազգային իրավական բաղադրատարրերի՝ իրավակարգի, իրավական համակարգի ինքնատիպության և արժեհամակարգի վերարտադրության միակ համընդգրկուն ձևը:

Իրավական մշակույթը գործառնում է մշակույթի մյուս՝ քաղաքական, բարոյական, գեղագիտական, կրոնական ոլորտների հետ համագործակցության միջոցով:

Մեր հետազոտության համար առավել կարևոր է իրավական և քաղաքական մշակույթների փոխգործակցությունը: Իրավական մշակույթը և քաղաքական մշակույթը ունեն բավականաչափ ընդհանրություններ, քանի որ պետության, քաղաքական իշխանության, քաղաքական կազմակերպությունների միջև փոխհարաբերությունները ձևավորվում և գործառնում են նաև իրավական դաշտում: Այդ հարաբերությունները, առաջին հերթին լինելով քաղաքական, այնուամենայնիվ չեն սահմանափակվում բացառապես քաղաքական օրինաչափություններով և չեն բացառում դրանց իրավական կողմը:

Այս ամենի հետ մեկտեղ հարկ է ընդգծել իրավական և քաղաքական մշակույթների փոխլրացման և փոխներգործության կարևորության մասին, քանի որ ժողովրդավարական վարչակարգի պայմաններում անհատի մոտ հնարավոր է ձևավորել սոցիալապես համապատասխան և օրինապահ վարք միայն քաղաքական և իրավական մշակույթների միասնության միջոցով:

Հարկ է ընդգծել, որ իրավական մշակույթն իր բովանդակությամբ ավելի լայն և որակապես հագեցած երևույթ է, քան իրավագիտակցությունը: Այն ընդգրկում է հասարակության ամբողջ իրավական կյանքը, իրավունքի՝ որպես սոցիալական վերահսկողության ինստիտուտի գործառնության ամբողջական մեխանիզմը: Իրավագիտակցության վիճակը և զարգացումը մեծապես պայմանավորված են հասարակության, ինչպես նաև անհատի իրավական մշակույթի կատարելագործման մակարդակով, քանի որ այն ներառում է հասարակական հարաբերությունների նորմերի և կանոնների, անձի իրավական սոցիալականացման, նրա հոգևոր-բարոյական ներուժը:

Իրավունքն իր ձևավորման և զարգացման գործում որոշիչ ազդեցություն է թողել ոչ միայն տնտեսության և քաղաքականության, այլև մշակույթի վրա: Իրավունքը չի կարող ավելի բարձր լինել, քան հասարակության իրավական մշակույթի մակարդակը: Անհնար է բարձրացնել հասարակության իրավական և քաղաքական գիտակցությունը, եթե հասարակության իրավական-քաղաքական մշակույթի մակարդակը ցածր է: Իրավական-քաղաքական մշակույթի արդիականացման պայմաններում է միայն հնարավոր հասարակության մեջ որակապես նոր իրավական և քաղաքական գիտակցության ձևավորումը:

Իրավունքը հասարակության մեջ ազատ քաղաքացիների գոյության կարևորագույն պայմանն է: Առօրյա-գործնական իրավագիտակցությունը գնահատում է գործող օրենքների համապատասխանությունը բարոյական պահանջմունքներին, իսկ տեսական իրավական մտածողությունը դիտարկում է գործող իրավունքի սոցիալ-քաղաքական նշանակությունը, վերջինիս համապատասխանությունը ռացիոնալ պահանջմունքներին, որոնք օբյեկտիվորեն պայմանավորված են հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցող գործընթացներով:[62]

---

[62]**Спиркин А.** Философия. Учебник. 2-е изд., М., Гардарики, 2006, с. 660.

Հարկ է նշել, որ գիտակցությունը գոյություն չունի հասարակությունից դուրս, քանի որ այն տվյալ իրականության օբյեկտիվ արտացոլումն է: Հետևաբար՝ իրավագիտակցությունը ուղղակիորեն կախված է կոնկրետ հասարակության ձևից:[63]

Իրավագիտակցությունը մարդկանց պատկերացումներն ու գիտելիքներն են գործող իրավունքի վերաբերյալ: Օրենքը ներգործում է իրավագիտակցության ձևավորման վրա, իսկ վերջինս էլ իրագործվում է իրավունքի և արդարադատության մեջ: Ինչպես իրավունքը, այնպես էլ իրավագիտակցությունը առաջացել և զարգանում են որոշակի տնտեսական հիմքի վրա և կապված են հասարակական դասերի և պետության առաջացման հետ:[64]

Իրավագիտակցությունը լայնորեն կապված է նաև հասարակության գիտակցության այլ ձևերի հետ՝ քաղաքական, բարոյական, կրոնական, փիլիսոփայական, գեղագիտական: Ընդ որում, մեր կարծիքով, իրավագիտակցության վրա ամենաէական ազդեցությունն ունեն քաղաքական, բարոյական և կրոնական գիտակցությունները:

Մեզ համար կարևոր է անդրադառնալ իրավագիտակցության և քաղաքական գիտակցության փոխկապակցվածության և փոխկախվածության խնդրին, քանի որ հասարակական գիտակցության այս երկու ձևերի միջև գոյություն ունեն բազմաթիվ ընդհանրություններ:

Քաղաքական գիտակցությունը, ինչպես և իրավագիտակցությունը, բավականաչափ բարդ երևույթ է: Քաղաքական գիտակցությունը բնորոշում է անհատի քաղաքական սոցիալականացման ամբողջական գործընթացը, որը պայմանավորում է վերջինիս ունակությունը քաղաքական ոլորտում հատուկ քաղաքական գործառույթների իրականացման, կառավարման մարմինների հետ համագործակցության միջոցով սեփական կարողությունները իրականացնելու համար:

Քաղաքական գիտակցությունը քաղաքական կեցության արտացոլումն ու իմաստավորումն է սոցիալական սուբյեկտների գիտակցության մեջ: Քաղաքական գիտակցությունը քաղաքական կեցության պասիվ արտացոլումը չէ, այն

---

[63]**Мясоутов О.** Политическое сознание: социально-философский анализ, http://conf.sfu-kras.ru/sites/mn2012/thesis/s034/s034-044.pdf. /12.03.2013/.

[64]**Спиркин А.** Философия. Учебник. 2-е изд., М., Гардарики, 2006, с. 658.

հարաբերականորեն ինքնուրույն է և կարող է առաջ անցնել քաղաքական պրակտիկայից, կանխատեսել հասարակական-քաղաքական գործընթացների զարգացման միտումները: Այն սերտորեն կապված է հասարակության իրավական և քաղաքական մշակույթի, ինչպես նաև քաղաքական վարքագծի հետ: Քաղաքական գիտակցության կառուցվածքային տարրերն են քաղաքական նորմերն ու արժեքները, քաղաքական համոզմունքներն ու պատկերացումները, տեսական և էմպիրիկ գիտելիքները, որոնք ձևավորվում են անձի սոցիալականացման քաղաքական գործընթացում: Կառուցվածքային առումով քաղաքական գիտակցությունը բաղկացած է կայուն և փոփոխական բաղադրամասերից: Օրինակ՝ գաղափարախոսական ընտրության հիմքում ընկած են կայուն սոցիալ-քաղաքական արժեքներ՝ ժողովրդավարություն, ազատություն, հավասարություն և այլն: Քաղաքական գիտակցության փոփոխական տարրերը կապված են ընթացիկ պահի վերագնահատման հետ: Մասնագիտական գրականության մեջ տարբերում են քաղաքական գիտակցության տեսական, էմպիրիկ, պետական և կենցաղային մակարդակները: Քաղաքական գիտակցությունն իրականացնում է կարգավորման, ճանաչողական, արժեքավորման, հավաքագրման, կանխատեսման, նորմատիվային և այլ գործառույթներ:[65]

Ռուս հետազոտող Ա. Սպիրկինը դիտարկում է քաղաքական գիտակցությունը որպես գաղափարների ամբողջություն, որն արտահայտում է ազգերի և պետությունների շահերը: Քաղաքացիների քաղաքական գիտակցությունը որոշվում է տվյալ հասարակության տնտեսական և պետական կարգով: Քաղաքականությունը, քաղաքական պայքարը ներթափանցում են մարդկանց կենսագործունեության բոլոր ոլորտները և հասարակական գիտակցության բոլոր ձևերի մեջ:[66]

Բնականաբար, քաղաքական գիտակցությունը միաբովանդակ չէ, քանի որ այն ներառում է տարբեր դասերի և շերտերի, սոցիալական խմբերի, պետության և կառավարության, իշխանության ճյուղերի միջև փոխհարաբերությունները: Ըստ էության՝

---

[65]**Ղողոսյան Վ., Միրումյան Կ., Բաբաջանյան Ա., Աստվածատուրով Ս**. Քաղաքագիտություն հանրագիտական բառարան., Եր., Լինգվա հրատ., 2004, էջ 76-77:

[66]**Спиркин А**. Философия. Учебник. 2-е изд., М., Гардарики, 2006, с. 654.

ոչ միայն սոցիալ-տնտեսական, այլև հասարակության հոգևոր կյանքը հարաբերական կախվածության մեջ են գտնվում քաղաքական գիտակցությունից:[67]

Քաղաքական գիտակցությունը քաղաքականության սուբյեկտիվ չափումն է: Քաղաքական գիտակցությունը բնորոշվում է որպես գաղափարական երևույթների ամբողջություն, որոնցում արտահայտվում է քաղաքական գործընթացի սուբյեկտի անհատական վերաբերմունքը քաղաքականության նկատմամբ՝ չնայած այն հանգամանքին, որ քաղաքական գիտակցությունը անհատական փորձի արդյունք է միայն: Վերջինիս վրա ազդում են նաև սոցիալական միջավայրը, քաղաքական հարաբերությունները: Ըստ Ի. Դենիսովի, չնայած սոցիալական միջավայրի առկայությանը, քաղաքական գիտկացույթունն ունի բացառապես անհատական դրսևորում: Այդ իսկ պատճառով կասկած է հարուցում այն հանգամանքը, որ քաղաքական գիտակցությունը կարող է բնորոշ լինել խմբերին կամ քաղաքական գործընթացի այլ բարդ սուբյեկտներին:[68] Կարծում ենք, որ Ի. Դենիսովի այս մոտեցումը բավականաչափ հիմնավորված չէ և նեղացնում է քաղաքական գիտակցության ընկալման շրջանակները, քանի որ այսպիսի մոտեցման դեպքում հնարավոր չէ բացատրել քաղաքականության մեջ տեղի ունեցող խմբային և զանգվածային գործընթացները:

Քաղաքական գիտակցությունը սերտորեն կապված է քաղաքական վարքագծի հետ: Քաղաքական գիտակցությունը կարելի է բնորոշել որպես «ներքին» վարքագիծ, որը ազդեցություն է գործում մարդու «արտաքին» վարքի վրա, այսինքն՝ վերջինիս քաղաքական ակտիվության և գործունեության վրա:

Մարդու զգացական և տեսական, արժեքային և նորմատիվային, ռացիոնալ և ենթագիտակցական պատկերացումների ամբողջությունը արտացոլող առավել ընդհանուր տարրակարգը, որը պայմանավորում է վերջինիս վերաբերմունքը քաղաքական կառույցների նկատմամբ, քաղաքական գիտակցությունն է:[69]

---

[67]Նույնտեղում, էջ 656:

[68]**Денисов И.** Политическое сознание современного российского общества: http://www.politnauka.org/library/teoria/denisov.php /14.03.2013/:

[69]**Соловьев А.**Политология: Политическая теория, политические технологии. Учебник для студентов вузов. М., Аспект Пресс, 2000, с. 227.

Իր բովանդակությամբ քաղաքական գիտակցությունը արտացոլում է հասարակական կյանքի քաղաքական ոլորտի բոլոր ինստիտուցիոնալ բաղադրիչները: Քաղաքական գիտակցությունն այդպիսով ցույց է տալիս, որ փոփոխությունները իշխանության և կառավարման համակարգում, միջկուսակցական հարաբերությունների և այլ քաղաքական գործընթացների կարգավորումը, այսպես, թե այնպես, պայմանավորված են էլիտար և ոչ էլիտար շերտերի սուբյեկտիվ դիրքորոշումներով: Մարդկանց հարափոփոխ հայացքների բազմազանությունը ձևավորում է բազմավեկտոր քաղաքական գործընթացներ, այսինքն՝ քաղաքական փոխգործակցության տրամաբանություն, որը ներկայացնում է մարդկային կենսագործունեության բազմատեսակությունը հանրային ոլորտում: Քաղաքականության այս գենետիկ կախվածությունը քաղաքական գիտակցությունից քաղաքականությունը վերածում է գաղափարների և պատկերացումների առարկայացման անդադար գործընթացի:[70]

Այսօր գիտության մեջ քաղաքական գիտակցության վերաբերյալ ձևավորվել է երկու մոտեցում՝ վարքաբանական և արժեքաբանական: Վարքաբանական մոտեցման կողմնակիցները քաղաքական գիտակցությունը դիտարկում են որպես մարդու ռացիոնալ մտածողության ձև, վերջինիս մտածողության և պատկերացումների ամբողջություն, որը նա օգտագործում է իշխանական հարաբերություններում սեփական գործառույթների իրականացման համար: Արժեքաբանական մոտեցումը քաղաքական գիտակցությունը դիտարկում է որպես հասարակական գիտակցության որոշակի մակարդակ: Քաղաքական գիտակցությունը ներկայացվում է որպես պատկերացումների մակարդակ, որին մարդը կարող է հասնել քաղաքական մասնակցության և իշխանական հարաբերություններում անհրաժեշտ գործառույթների իրականացման միջոցով:[71]

Քաղաքական գիտակցության ձևավորման ճանապարհները բարդ են և հակասական: Վերջինս ձևավորվում է մարդկանց կողմից սոցիալական իրականության քննադատական իմաստավորման գործընթացում, կուսակցական կամ այլ քաղաքական շարժումների

---

[70]**Соловьев А.**Политология: Политическая теория, политические технологии. Учебник для студентов вузов. М., Аспект Пресс, 2000, с. 227.

[71]Նույնտեղում, էջ 227-228:

նպատակների գիտակցման, արդեն գոյություն ունեցող քաղաքական գործընթացի վերաբերյալ գնահատականների հետ սեփական տեսակետի համադրման միջոցով:

Քաղաքական գիտակցութան ձևավորումը և զարգացումը կախված է ոչ այնքան մասնագիտական գիտելիքների աճի մակարդակից, որքան իրական քաղաքական գործընթացներում քաղաքական մասնակցության տարատեսակությունից: Հետևաբար՝ քաղաքացիական մասնակցության հնարավորությունների սահմանափակումը իշխանական հարաբերություննրում և քաղաքական գործընթացներում թուլացնում է քաղաքական գիտակցությունը և միաժամանակ նպաստում է իշխանության մեխանիզմի հետընթացին:[72]

Քաղաքական գիտակցության գործառույթների վերաբերյալ գոյություն ունեն տարբեր մոտեցումներ: Ըստ Ա. Սոլովյովի՝ քաղաքական գիտակցությունը՝ որպես քաղաքականության ինստիտուցիոնալ բաղադրատարր, իրականացնում է երեք կարևոր գործառույթ՝ ճանաչողական, հաղորդակցական և գաղափարական:[73] Այս գործառույթների իրականացման բնույթը կարող է փոխվել՝ կապված քաղաքական գործընթացների բնույթից: Վ. Աչկասովան և Վ. Գուտուրովան այս երեք գործառույթներին ավելացնում են ևս երկուսը՝ կանխատեսման և դաստիարակչական գործառույթները:[74]

Քաղաքական գիտակցության հասկացությունը կապված է «քաղաքական մարդ» հայեցակարգի հետ, որոնք էլ ուսումնասիրվում են քաղաքագիտության, հոգեբանության, մարդաբանության և սոցիոլոգիայի կողմից:[75] Ժամանակակից քաղաքագիտության մեջ քաղաքական գիտակցությունը դասվում է քաղաքականության սուբյեկտիվ կողմը բնութագրող առավել ընդհանուր հասկացությունների շարքին:

Քաղաքական գիտակցության համար ելակետային է համարվում անձի հոգևոր-քաղաքական վիճակը, որը քաղաքական կյանքում վերջինիս կողմնորոշման և դիրքորոշումների նախապայմանն է, որտեղ անձը կարող է ունենալ ակտիվ և պասիվ դեր՝

---

[72]Նույնտեղում, էջ 229:
[73]Նույնտեղում, էջ 229:
[74]**Политология.** Под. ред. Ачкасвоа В., Гутурова В., М, Юрайт, 2006, с. 195.
[75]Նույնտեղում, էջ 194.

կախված սեփական համոզմունքներից, պահանջմունքներից, արժեքներից և այլն: Քաղաքական մարդու փոխգործակցությունը քաղաքական իշխանության հետ գիտակցված է. այսինքն՝ ունենալով քաղաքական գիտակցություն և դրսևորելով այն սեփական քաղաքական վարքագծում՝ մարդը դառնում է քաղաքական մշակույթի սուբյեկտ:[76]

Այստեղից հետևում է, որ սոցիալ-քաղաքական տարածությունը, քաղաքական և քաղաքացիական հասարակության ինստիտուտների ամբողջությունը, ձևավորված քաղաքական ավանդույթները, պատմականորեն ձևավորված սոցիալ-հոգեբանական միջավայրը գծային պատճառահետևանքային կապով (դետերմինիզմ) պայմանավորում են քաղաքական գիտակցությունը:[77] Ընդունելով Վ. Աչկասովայի և Վ. Գուտուրովայի այս տեսակետը, որ վերը նշված գործոնները պայմանավորում են մարդու քաղաքական գիտակցությունը, այնուամենայնիվ մերժում ենք միակողմանի քաղաքական, մշակութային, պատմական դետերմինիզմը: Կարծում ենք՝ քաղաքական գիտակցությունը, համաձայն Մ. Վեբերի ինտերակցիոնիզմի[78] սկզբունքի, կարող է փոխլրացնող կապով ազդել այդ նույն սոցիալ-քաղաքական տարածության, քաղաքական և քաղաքացիական հասարակության ինստիտուտների գործառնության վրա: Այս գործոնները պայմանավորում են անձի՝ այս կամ այն խմբային քաղաքական շահերին հարմարվելու ձգտումը, պետության և իշխանության մասին սեփական պատկերացումների ձևավորումը, այդ ինստիտուտների և հարաբերությունների նկատմամբ վերաբերմունքը:[79] Այս ամենի դրսևորման մակարդակից է կախված անձի քաղաքական մասնակցության մակարդակը և ձևը:

Հասարակության քաղաքական գիտակցության մեջ արտացոլվում է մարդկանց անմիջական գործունեության և սոցիալական կանոնակարգված պայմանների միջև համադրության պատկերացումը, որտեղ տեղի է ունենում այդ գործունեությունը: Քաղաքական գիտակցությունը հասարակության տարբեր դասերի արտադրողատնտեսական և հասարակական հարաբերությունների ամբողջության

---

[76]**Соловьева М.** Развитие представлений о феномене политической культуры. Новейшая история России, М , № 1., 2012, с. 47.

[77]**Политология.** Под. ред. Ачкасвоа В., Гутурова В., М, Юрайт, 2006, с. 195.

[78]**Вебер М.** Избранные произведения. М., Прогресс, 1990, с. 33.

[79]**Политология.** Под. ред. Ачкасвоа В., Гутурова В., М, Юрайт 2006, с. 194-195.

արտացոլումն է՝ ուղղված քաղաքական իշխանությանը: Անմիջական տնտեսական և դասային շահերը կազմում են քաղաքական գիտակցության յուրահատկությունը, որոնց հիման վրա ձևավորվում են քաղաքական շահերը: Քաղաքական գիտակցությունը տարբերվում է հասարակական գիտակցության այլ ձևերից ոչ միայն օբյեկտի տեսանկյունից (հասարակության քաղաքական կեցություն) և կատեգորիալ ապարատով, այլև՝ ստույգ արտահայտված ճանաչողության սուբյեկտով: Իհարկե, հասարակության քաղաքական գիտակցության մեջ կարևոր տեղ են զբաղեցնում համընդհանուր իրավաքաղաքական արժեքներ արտահայտող կատեգորիաները՝ ժողովրդավարություն, իշխանության տարանջատում, իրավական պետություն, քաղաքացիական հասարակություն, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանություն և այլն:

Քաղաքական և իրավական գիտակցության միջև փոխկապակցվածությունը բավականին սերտ է: Իրավագիտակցությունը ազդեցություն է գործում քաղաքական դաշտի վրա դրական իրավունքի ձևավորման միջոցով: Իրավական նորմերի ստեղծման գործընթացում ձևավորվում են պետության, քաղաքական իշխանության գործունեության քաղաքական-իրավական չափանիշները: Իրավունքի միջոցով քաղաքական իշխանությունը իրականացնում է քաղաքական կարևորագույն գործընթացների և քաղաքական հարաբերությունների կարգավորումը:

Քաղաքական և իրավական գիտակցության փոխկապվածությունը պետք է ուղղված լինի հասարակության ընդհանուր բարեկեցությանը, տարբեր սոցիալական շերտերի շահերի և պահանջմունքների հավասարակշռմանը: Սա նաև քաղաքական իշխանության մենաշնորհային գործառույթներից է: Միայն այս պարագայում քաղաքական իշխանությունը կարող է լինել ուժեղ և կայուն: Պատահական չէ, որ Հայաստանում պետական-իշխանական հարաբերություններում դժվարությունները հիմնականում պայմանավորված են քաղաքական և իրավական գիտակցության ցածր մակարդակով, ինչը հաճախ դրսևորվում է քաղաքական լարվածությամբ, բախումներով, արմատականությամբ և իրավական նիհիլիզմով:

Իրավագիտակցությունը կարևորագույն գործիք է քաղաքական իշխանության համար անհատ-պետություն, հասարակություն-պետություն փոխհարաբերություններում ներդաշնակության հասնելու նպատակով: Դրա անտեսումը կարող է հանգեցնել ապակառուցողական գործընթացների, քաղաքական և սոցիալական կոնֆլիկտների:

Այսպիսով՝ իրավագիտակցությունը, քաղաքական գիտակցությունը և քաղաքական իշխանությունը փոխկապակցված և փոխգործակցող հասարակական երևույթներ են: Իրավագիտակցությունը քաղաքական գիտակցության և դրական իրավունքի միջոցով էականորեն ազդում է պետության իշխանական գործունեության էության և բովանդակության վրա:

Բավականին ուշագրավ է իրավագիտակցության և քաղաքական գիտակցության փոխհարաբերակցության հիմնախնդիրը: Դրանք չափազանց մոտ են միմյանց և հաճախ գրվում են միասին (իրավաքաղաքական գիտակցություն): Յուրաքանչյուր սոցիալ-տնտեսական և քաղաքական ուժ ունի իր իրավագիտակցությունը և, պայքարելով ու հասնելով քաղաքական իշխանության, փորձում է կենսագործել այդ իրավագիտակցությունը լեգիտիմ իրավաքաղաքական համակարգում: Այս երևույթի դրսևորումը կարելի է տեսնել նաև մերօրյա Հայաստանի Հանրապետությունում, որտեղ քաղաքական իշխանությունը ստանձնած յուրաքանչյուր ուժ պայքարել է սահմանադրական և տարաբնույթ օրենսդրական բարեփոխումների իրականացման համար՝ փորձելով դրանք համապատասխանեցնել իր իրավագիտակցությանը (օրինակ՝ ՀՀ Սահմանադրության փոփոխություն 2005 թվականին և բազմաթիվ օրենսդրական փոփոխություններ): Նշենք, որ այս երևույթը քաղաքական իշխանության կարևորագույն գործառույթներից է, այն է՝ հասարակական-քաղաքական համակարգի հարմարեցման գործառույթը: Այս տեսանկյունից կարևոր է ընդգծել, որ այսօր Հայաստանի Հանրապետությունում իրավաքաղաքական մշակույթում տիրող իրավիճակը գործող քաղաքական իշխանության իրավաքաղաքական գիտակցության ուղղակի արտացոլումն է:

Իրավաքաղաքական գիտակցությունն անհատի և հասարակության սոցիալ-հոգևոր կյանքի բնական բաղադրատարրն է և քաղաքական հարաբերությունների կարևոր

բաղկացուցիչը: Դիալեկտիկական զարգացման ընթացքում այն բացահայտում է իր բազմաչափ բնույթը, որը դրսևորվում է քաղաքական իրականության մեջ տեղի ունեցող բազմապիսի գործընթացներում: Իրավաքաղաքական գիտակցությունն ունի բավականաչափ բարդ կառուցվածք:

Իրավաքաղաքական գիտակցությունը, լինելով հասարակական գիտակցության ձև, հանդես է գալիս որպես հասարակության մեջ տարբեր սոցիալական խմբերի միջև գոյություն ունեցող փոխհարաբերությունների արդյունք՝ պայմանավորված քաղաքական հարաբերություններով: Իրավաքաղաքական գիտակցությունը քաղաքական իրադարձությունների, երևույթների և զարգացումների նկատմամբ հասարակության վերաբերմունքի և վարքագծի դրսևորումն է: Նախ և առաջ այդ վարքագիծը պայմանավորվում է իշխանության կազմակերպման և իրականացման ձևերի, քաղաքական ուժերի ուղղվածության և դրանց գործողությունների նկատմամբ հասարակության վերաբերմունքով: Հարկ է նշել, որ քաղաքական գործընթացն այն հիմքն է, որի վրա ձևավորվում է իրավաքաղաքական գիտակցությունը: Անհատի սոցիալ-քաղաքական պահանջմունքների բավարարման տեսանկյունից իրավաքաղաքական գիտակցությունը նախ և առաջ ձևավորվում է իրավաքաղաքական գիտելիքների և դրանց իմաստավորման միջոցով: Իրավաքաղաքական գիտակցությունը մարդկանց կողմից քաղաքական հարաբերությունների բովանդակության ռացիոնալ, հուզական և կամային ընկալումն է:

Իրավաքաղաքական գիտակցությունը կարելի է սահմանել որպես գաղափարների, տեսական հայեցակարգերի, հայացքների, պատկերացումների, կարծիքների, գնահատականների և քաղաքական հարաբերությունների սուբյեկտների հուզական վիճակի ամբողջություն: Իրավաքաղաքական գիտակցությունը քաղաքական իրականության, իրավաքաղաքական վարքի բնական սուբյեկտիվ բաղադրատարրն է:

Սուբյեկտիվ ձևերը, որոնց միջոցով սոցիալական խումբը, անհատը կամ հասարակությունը արտացոլում են քաղաքական իրականությունը, ձևավորում են իրավաքաղաքական գիտակցության կառուցվածքը: Սուբյեկտի կողմից օբյեկտիվ իրականությունը ընկալվում է գիտելիքների, զգացմունքների և պատկերացումների

միջոցով: Հետևաբար՝ իրավաքաղաքական գիտակցությունը ձևավորվում է երեք բաղադրատարրերի միջոցով՝ ռացիոնալ, զգայական և իռացիոնալ: Ռացիոնալ բաղադրատարրերն են՝ ընդհանրացված գաղափարները, հայեցակարգերը, պատկերացումները, նորմերը, կարծիքները և այլն: Զգայական բաղադրատարրերն են՝ գնահատականները, տրամադրությունները, ցանկությունները և այլն: Իսկ իռացիոնալ բաղադրատարրերն են՝ գիտակցությամբ չպատճառաբանված սուբյեկտիվ ձևերը, ուտոպիաները և երևակայությունը: Նկատենք, որ ռացիոնալ, զգայական և իռացիոնալ պատկերացումները փոխկապակցված են: Քաղաքական իրականության ռացիոնալ ձևը չի կարող առաջանալ առանց զգայական ընկալման, ինչը խթանում է մտածողության գործընթացը: Իռացիոնալ պատկերացումները, օրինակ՝ քաղաքական առասպելները ևս կապված են զգայական և ռացիոնալ պատկերացումների հետ:[80]

Իրավաքաղաքական գործընթացների յուրահատկության տեսանկյունից իրավաքաղաքական գիտակցության կառուցվածքում առանձնացնում են տարբեր ոլորտներ, մակարդակներ, ձևերը և այլն: Իրավաքաղաքական գիտակցության ոլորտներն են՝ քաղաքական գիտությունը (տեսություններ, հայեցակարգեր, վարկածներ և այլն), քաղաքական գաղափարախոսությունը (վարդապետություններ, իդեալներ, ծրագրեր, կարգախոսներ և այլն), քաղաքական հոգեբանությունը (քաղաքական ձգտումներ, զգացմունքներ, տրամադրություններ և այլն):

Քաղաքական իրականության արտացոլման տեսանկյունից իրավաքաղաքական գիտակցությունը կարող է լինել տեսական և առօրեական: Ըստ իր ուղղվածության՝ այն կարող է լինել ժողովրդավարական, ավտորիտար, ավանդական, ժամանակակից, հպատակային, արդարացի, խռովարար և այլն: Ըստ սուբյեկտների՝ կարելի է տարբերել իրավաքաղաքական գիտակցության սոցիալ-խմբային, ազգային-էթնիկական, կրոնական,

---

[80]**Варламова Н.** Политико-правовое сознание и развитие самоуправления. *Готовность к самоуправлению как качество политико-правового сознания*. М., /Диссертация канд. юрид. наук/, 1991, с. 95-105.

կորպորատիվ, անհատական և այլ ձևեր: Իրավաքաղաքական գիտակցության բազմազանությունը կարող է ավելանալ, եթե այն դիտարկվի քաղաքական գործընթացների կոնկրետ սուբյեկտների և օբյեկտների տեսանկյունից (գլոբալ, տարածաշրջանային խնդիրներ, պատերազմ, խաղաղություն, շրջակա միջավայր և այլն):

Հասարակական գիտակցության քաղաքականացումը կապված է ճգնաժամային, հեղափոխական իրավիճակների, քաղաքական վարչակարգերի, իշխանության կրողների փոփոխության, քաղաքական համակարգերի, իրավաքաղաքական վարքագծի հիմքերի փոխակերպման հետ: Հասարակական գիտակցության քաղաքականացումը, որպես կանոն, սկսվում է հասարակության սոցիալական կառուցվածքի ստորին և վերին շերտերից: Իսկ հասարակության միջին շերտերն առավել քիչ են ենթարկվում քաղաքականացման գործընթացին:

Իրավաքաղաքական գիտակցության հարաբերականորեն ինքնուրույն բնույթը դրսևորվում է իրավաքաղաքական տարածության, քաղաքական հարաբերությունների, քաղաքական մշակույթի, ավանդույթների և իրավաքաղաքական վարքի նորմերի, քաղաքական տեխնոլոգիաների և քաղաքական գործունեության մեթոդների յուրահատկության մեջ, որոնք ուսումնասիրվում են քաղաքագիտության, քաղաքական փիլիսոփայության, քաղաքական սոցիոլոգիայի կողմից:

Քաղաքական հարաբերությունների, քաղաքական գործընթացների և դրանց հնարավոր զարգացումների էության ընկալման համար կարևոր է վերլուծել զանգվածային, սոցիալ-խմբային և անհատական իրավաքաղաքական գիտակցությունները:

Զանգվածային իրավաքաղաքական գիտակցությունն առավել միանման, բոլորի կողմից ճանաչված քաղաքական գաղափարների, հայացքների, քաղաքական իշխանության կառուցվածքի և սոցիալական կառավարման սկզբունքների ամբողջությունն է: Այն առաջանում և զարգանում է հասարակական կյանքի քաղաքականացման, դրա նորմերի և սկզբունքների միավորման գործընթացնում՝ հիմնվելով պատմական և անհատական փորձի, մշակութային և բարոյական ավանդույթների, կրոնական պատկերացումների վրա: Զանգվածային իրավաքաղաքական գիտակցությունը

տարբերվում է իր միատարրության աստիճանով: Կայուն քաղաքական համակարգ և զարգացած քաղաքացիական հասարակություն ունեցող պետություններում այն առավել միատարր է:

Ժողովրդավարական վարչակարգերում, որտեղ կայացել են իրավական պետությունը և քաղաքացիական հասարակությունը, քաղաքական բազմակարծության սկզբունքների հիման վրա ձևավորվում և զարգանում է զանգվածային իրավաքաղաքական գիտակցությունը: Զանգվածային գիտակցության այս ձևն իր էությամբ կառուցողական է, քանի որ լայն զանգվածների իրավաքաղաքական գիտակցությունն ուղղված է ավելի լավ, հեռանկարային, արդար և ժողովրդավարական կենսամիջավայրի ձևավորմանը:

Հեղափոխական-անարխիկ սկզբունքների հիման վրա ևս ձևավորվում է զանգվածային իրավաքաղաքական գիտակցություն, որը բնորոշ է խիստ բևեռացված սոցիալ-դասակարգային կառուցվածք ունեցող հասարակություններին, որտեղ իշխանական և կառավարման գործառույթներն իրականացվում են ավտորիտար մեթոդներով: Այսպիսի իրավաքաղաքական գիտակցությունը ենթարկվում է խիստ գաղափարախոսական, քարոզչական աղդեցության, ինչպես նաև սուր և հուզականորեն արձագանքում է տեղի ունեցող սոցիալ-քաղաքական գործընթացներին:

Ինչ վերաբերում է խմբային իրավաքաղաքական գիտակցությանը, ապա այն առաջանում և զարգանում է տարբեր սոցիալական խմբերի փոխազդեցության ընթացքում սեփական քաղաքական շահերի բավարարման նպատակով:

Խմբային իրավաքաղաքական գիտակցությունը չի կարող լինել միատարր, ինչպես և չի կարող միատարր լինել նրա սուբյեկտների սոցիալ-քաղաքական կարգավիճակը: Այդ իսկ պատճառով յուրաքանչյուր սոցիալական խմբում կարող են լինել հակասական քաղաքական դիրքորոշումներ: Բացի այդ, խմբի իրավաքաղաքական գիտակցությունը ներառում է հասարակության համընդհանուր քաղաքական արժեքները, որոնց հիման վրա ձևավորվում են հասարակական կարգի միասնականությունը և կայունությունը:[81]

---

[81]**Черкасенко Ю.** Социодинамика палитико-правового сознания специалистов в военных вузах.*Содержание, структура и функции политического и правового сознания личности.* Ставрополь, /Диссетация канд. филосифских наук/, 2000, с. 24-33.

Քաղաքական սոցիալականցման ժամանակ անհատը յուրացնում է զանգվածային և խմբային իրավաքաղաքական գիտակցության հիմնարար տարրերը: Իրականացնելով իր շահերը՝ նա օբյեկտիվորեն համապատասխանեցնում է իր դիրքորոշումն այն սոցիալական խմբի հետ, որն իրեն ամենամոտն է: Չնայած, որ խմբային իրավաքաղաքական գիտակցությունը ձևավորվում է անհատական քաղաքական գիտակցությունների միջոցով, այն չի նույնականանում վերջինիս հետ: Անհատական իրավաքաղաքական գիտակցությունը բնութագրվում է ոչ միայն սոցիալականացման բարձր մակարդակով, այլ նաև՝ իր յուրահատկությամբ: Յուրաքանչյուր անտահի սոցիալական փորձն անկրկնելի է: Այդ իսկ պատճառով կենսագործունեության ընթացքում իրավաքաղաքական գիտակցությունը ենթարկվում է փոփոխությունների, ինչի արդյունքում ձևավորվում են ռեակցիոն, պահպանողական կամ հեղափոխական քաղաքական դիրքորոշումներ:

Անհատի, սոցիալական խմբի, հասարակության իրավաքաղաքական գիտակցությունը իրականացնում է ճանաչողական, արժեքային-կողմնորոշման, գաղափարախոսական և կանխատեսման գործառույթներ:[82]

Սուբյեկտի մոտ իրավաքաղաքական գիտակցության ձևավորումը տեղի է ունենում մի քանի փուլով՝ 1. սուբյեկտների ներգրավվածությունը քաղաքական հարաբերություններում, 2. անձի, սոցիալական խմբի, հասարակության քաղաքականացումը, 3. քաղաքական կողմնորոշումների ձևավորումը, 4. քաղաքական գիտելիքների կուտակումը, 5. քաղաքական գործողությունների գիտակցումը:[83]

Քաղաքական գործընթացներում առանձնակի կարևորություն են ստանում անձի ակտիվ սոցիալ-քաղաքական դիրքորոշումը, նրա նախաձեռնողականությունը և ինքնակարգապահությունը, պահանջների որոշակի ծավալը՝ նախ և առաջ ուղղված սեփական անձին: Այս հանգամանքը ենթադրում է անհատի կողմից իր

---

[82]**Черкасенко Ю.** Социодинамика палитико-правового сознания специалистов в военных вузах. *Содержание, структура и функции политического и правового сознания личности.* Ставрополь, Диссетация канд. филосифских наук, 2000, с. 24-33.

[83]**Варламова Н.**Политико-правовое сознание и развитие самоуправления. *Готовность к самоуправлению как качество политико-правового сознания.* М., /Диссертация канд. юрид. наук/, 1991, с. 125-154.

պարտավորությունների, պետության և հասարակության հանդեպ քաղաքացիական պարտքի բարեխիղճ կատարում: Այս պարագայում նման վարքագիծը ներթափանցում է հասարակական կառուցվածքի մեջ՝ ներառելով և՛ տնտեսական, և՛ սոցիալական, և՛ բարոյական, և՛ հատկապես քաղաքական հարաբերությունները:

Հարկ է նկատել, որ այսպիսի անհատի ձևավորումը հնարավոր է միայն ժողովրդավարական կերպափոխումների ճանապարհով, որոնք պայմանավորված են քաղաքացիական հասարակության շրջանակներում իրավական պետության կառուցման գործընթացով: Միայն այս պայմաններում է հնարավոր ինքնուրույն քաղաքական գործունեություն ծավալելու ունակությունների և հմտությունների մշակումը, քաղաքական փորձի և գիտելիքների ձեռքբերումը: Միայն այսպիսի անձը կարող է ունենալ բարձր սոցիալ-քաղաքական, հետևաբար՝ նաև իրավական գիտակցություն: Այսպիսի անհատն իրեն կարող է զգալ իրավաքաղաքական հարաբերությունների լիարժեք սուբյեկտ, ճիշտ ընկալել և գնահատել սեփական իրավունքները, ազատությունները և պարտավորությունները:

Քանի որ յուրաքանչյուր հասարակությունում գործում է որոշակի իրավաքաղաքական համակարգ, որը կարգավորում է մարդու կենսագործունեության բոլոր ոլորտները, անձն իր գնահատականն է տալիս իրեն շրջապատող տարբեր իրավաքաղաքական երևույթներին:

Հարկ է անդրադառնալ նաև իրավական և բարոյական գիտակցությունների հարաբերակցության խնդրին, ինչը կարևոր է քաղաքական գործընթացներում հասարակության իրավագիտակցության հիմնախնդրի ուսումնասիրության համար:

19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի ռուս մտածողները (Ի. Իլյինը, Վ. Սոլովյովը և ուրիշներ) հաստատակամորեն ընդգծում են, որ իրավունքը բարոյականության նվազագույնն է կամ իրավաբանորեն ամրագրված բարոյականությունը: Այս հեղինակների կարծիքով՝ բարոյականությունը հասարակության բարոյական-հումանիտար իդեալների իրականացումն է:[84]

---

[84]**Спиркин А.** Философия: М., Учебник. 2-е изд., Гардарики, 2006, с. 661-667.

Բարոյականությունը կարևորագույն սոցիալական ինստիտուտներից է և հասարակության գիտակցության կարևորագույն ձևերից մեկը: Այն պատմականորեն ձևավորվող և զարգացող կենսական սկզբունքների, հայացքների, գնահատականների, համոզմունքների և դրանց վրա հիմնված վարքագծի նորմերի ամբողջությունն է: Բարոյական գիտակցությունը հասարակական գիտակցության հիմնական արժեքային ձևն է, որն արտահայտում է մարդկանց պատկերացումները բարու և չարի, ազնվության և անազնվության, պարտքի ու պատասխանատվության և այլ բարոյական հասկացությունների մասին, որոնց միջոցով գնահատվում է մարդկանց վարքը: Բարոյական գիտակցության հիման վրա կազմավորվում է հասարակության բարոյականությունը, այսինքն՝ մարդկանց վարքի և համակեցության նորմերը: Բարոյական նորմերը համապարփակ են և շատ ավելի լայն, քան իրավական նորմերը, որովհետև դրանք ընդգրկում են ոչ միայն իրավական, այլև արտաիրավական բոլոր հարաբերությունները:[85]

Իրավագիտակցությունը և բարոյական գիտակցությունը համագործակցում են որպես փոխլրացնող երևույթներ: Դրանք միաժամանակ հետապնդում են միևնույն նպատակներն ու առաջադրանքները, այն է՝ հասարակական կյանքի կարգավորումն ու կատարելագործումը, անձի զարգացումն ու առաջընթացը, մարդասիրության և արդարության իդեալների հաստատումը հասարակության մեջ: Իրականացնելով իրենց գործառույթները՝ իրավունքը և բարոյականությունը փոխօգնության են հասնում միմյանց նպատակների իրագործման համար: Սուբյեկտի միևնույն արարքին տրվում են ինչպես իրավական, այնպես էլ՝ բարոյական գնահատականներ՝ տվյալ արարքի մասին դատելով ինչպես օրենքի, այնպես էլ խղճի և պատվի տեսանկյունից:

Իրավագիտակցության և բարոյական գիտակցության սերտ կապը դեռևս չի նշանակում, որ այդ գործընթացը տեղի է ունենում սահուն և առանց կոնֆլիկտների: Դրանց

[85] **Ասատրյան Մ.** Փիլիսոփայության ներածություն, Եր., ՆոյյանՏապան հրատ., 2004, էջ 372, http://books.nt.am/readbook.php?page=372&ID=101, /10.03.2013/:

միջև հաճախ առաջանում են սուր հակասություններ, քանի որ բարոյական և իրավական պահանջմունքները հաճախ չէ, որ համընկնում են:

Իրավունքի և իրավագիտակցության կողմից հասարակության բարքերի թերագնահատումը կամ, առավել ևս, անտեսումը հանգեցնում են բացասական և, երբեմն նաև, անդառնալի հետևանքների: Իրավական համակարգի կողմից հասարակության բարոյական նորմերի, սկզբունքների, արժեքների անտեսումը հանգեցնում է ազգի հոգևոր արժեքների քայքայմանը, իրավական գիտակցության, մտածելակերպի լավագույն որակների՝ օրինականության, իրավակարգի, հանդուրժողականության կորստին:

Հայ հասարակության ճգնաժամային իրավիճակի պայմաններում իրավական և բարոյական գիտակցության միջև հակասությունները ծայրահեղ կերպով սրվել են: Կտրուկ նվազել է անհատին ներկայացվող բարոյական պահանջների նիշը: Էականորեն փոխվել են անհատի հեղինակության սոցիալական և հոգևոր արժեքների չափանիշները, որոնք իրենց ազդեցությունն են թողնում նաև քաղաքական զարգացումների և գործընթացների վրա: Այս երևույթն առավելապես դրսևորվում է ընտրական գործընթացների ժամանակ, երբ ուղղակիորեն բացահայտվում է հասարակության և քաղաքական ընտրախավի իրավաքաղաքական գիտակցության ցածր մակարդակը:

Մյուս կողմից, ինչպես նշում է Օ. Սելիվանովան, հասարակության մեջ քրեական գործոնի մեծացման արդյունքում իրավունքը և իրավագիտակցությունը իրենց կարգավորման և պաշտպանական գործառույթներով այլևս չեն կարողանում պաշտպանել հասարակությունը և անհատին բազմաթիվ հակասոցիալական երևույթներից:[86] Այս և նմանատիպ հարաբերություններում իրավական և բարոյական գիտակցությունը գտնվում են հակամարտության և հակասության մեջ:

Այնուամենայնիվ, համապատասխանաբար՝ իրավական և բարոյական գիտակցությունները օժտված են գնահատման տարբեր չափանիշներով, որոնք տարբերվում են մարդկանց գիտակցության և վարքի վրա ազդեցության բնույթով և միջոցներով:

---

[86]Селиванова О. Позитивная ответственность по российскому праву. Толь., Юриспруденция, №5, МаБиБД, 1996, с. 13.

Այսպիսով՝ իրավական և բարոյական գիտակցությունները, հանդես գալով որպես հասարակական գիտակցության ինքնուրույն ձևեր, սերտորեն փոխգործակցում և փոխլրացնում են միմյանց նաև քաղաքական գործընթացներում: Ինչպես արդարացիորեն նշում է Ե. Լուկաշևան. «Իրավագիտակցությունը և իրավական նորմերը, բարոյական գիտակցությունը և բարոյական արժեքները գործում են հասարակական-քաղաքական հարաբերությունների միասնական դաշտում՝ արտացոլելով այդ նույն հարաբերությունների՝ յուրաքանչյուր ոլորտին բնորոշ առանձնահատկությունները»:[87]

Ակնհայտ է, որ ժամանակակից հայ իրականության պայմաններում իրավունքը՝ որպես հասարակական-քաղաքական հարաբերությունների կարգավորիչ, չի կարող հաջողությամբ լուծել հասարակության առջև ծառացած բոլոր խնդիրները՝ իր հիմքում չունենալով ամուր բարոյական և քաղաքական հենք: Այս պարագայում, մեր կարծիքով, արդարացի է Յու. Տիխոնրավովի մոտեցումը. «Բարոյականությունը դրականորեն է գնահատում իրավունքը, եթե վերջինիս բովանդակությունը համապատասխանում է բարոյականության արժեքներին»:[88] Վ. Շեգորցևի պնդմամբ. «Որքան բարձր է անհատի բարոյական գիտակցության մակարդակը, այդքան բարձր են վերջինիս իրավական պատկերացումները»:[89]

Ասվածը, ամենևին, չի նշանակում, որ հասարակության մեջ կարգ ու կանոն հաստատելու համար անհրաժեշտ է թուլացնել պետական հարկադրանքի միջոցները: Այնուամենայնիվ, իրավունքը պետք է մշտապես հարստացվի հոգևոր-բարոյական բովանդակությամբ, ինչն էլ, իր հերթին, կհարթեցնի իրավական և բարոյական գիտակցության միջև առկա կամ առաջացող հակասությունները:

Այսօր մեր հասարակության բարոյական հիմքերը, կարելի է ասել, խարխլված են: Մեծանում է ոչ միայն իրավական, այլև բարոյական նիհիլիզմը: Այս բացասական երևույթների հաղթահարումը հայ հասարակության սոցիալ-քաղաքական և բարոյական վերածննդի հիմնապատճառ կարող է դառնալ:

---

[87]**Лукашева Е.**Право. Мораль. Личность. М., Наука, 1986, с. 76.
[88]Тихонравов Ю. Основы философии права. М., Вестник, 1997, с. 403.
[89]Щегорцев В.Социология правосознания. М., Мысль, 1981, с. 114.

Հասարակական-քաղաքական կյանքի փոխակերպման գործընթացում ուսումնասիրության կարևոր օբյեկտ է հանդիսանում հասարակության կրոնական գիտակցությունը:

Կրոնական գիտակցությունը հասարակական գիտակցության ձևերից է: Իրավական և կրոնական գիտակցության փոխհարաբերակցությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ կրոնական բազմաթիվ դոգմաներ, կանոններ, ինչպիսիք են՝ «մի՛ գողացիր», «մի՛ սպանիր», ստացել են իրենց իրավական ամրագրումը դրական իրավունքում:

Հայ հասարակության իրավագիտակցությունը տարբերվում է այլ հասարակությունների իրավագիտակցությունից: Սա պայմանավորված է հայկական մշակույթում ձևավորված աշխարհընկալման հետ: Հայ հասարակության առանձնահատուկ աշխարհընկալումը պայմանավորված է Հայ Առաքելական Եկեղեցու գաղափարաբանությամբ: Քրիստոնեության մեջ իշխանության և պետության ուժը պայմանավորված է ոչ միայն վերջիններիս աստվածային բնույթով, այլև՝ կառավարողների և ենթակաների միջև փոխհամաձայնությամբ:

Ի տարբերություն իրավագիտակցությանը՝ կրոնը ճանաչում է աշխարհը հավատքի միջոցով: Կրոնական գիտակցությունն առավել պահպանողական է, քան իրավական գիտակցությունը: Իրավական գիտակցությանը բնորոշ է օբյեկտիվ իրականության ընկալման և գիտակցման ռացիոնալ բնույթը: Այնուամենայնիվ, մեր կարծիքով, ՀՀ-ում օրենքների մշակման գործում հաշվի չի առնվում կրոնական իրավունքը, ինչը, հատկապես հայ հասարակության համար, կարծում ենք, կարևոր է: Օրենքների մշակման գործում կրոնական իրավունքի կարևորության մասին է նշում ռուս հետազոտող Մ. Բաբանը, ով գտնում է, որ պետք է հաշվի առնել կրոնական իրավունքը, քանի որ իրավագիտակցությունը իր հիմնավորումն է գտնում նաև բարոյական գիտակցության

մեջ:[90] Մեր կարծիքով՝ հայ հասարակության իրավագիտակցության ձևավորման գործում անհրաժեշտ է նաև հիմնվել կրոնական իրավունքի վրա:

Ինչպես մենք փորձեցինք ցույց տալ վերոշարադրյալում՝ ժամանակակից իրավագիտակցությունը բավականին բարդ երևույթ է ինչպես իր ներքին կառուցվածքով, այնպես էլ իր արտաքին սոցիալ-մշակութային կապերով: Այսօրվա հայ իրականության պայմաններում, երբ տեղի է ունենում համակարգային ճգնաժամ, հասարակության անորմալ շերտավորում, հասարակության իրավագիտակցության՝ որպես սոցիալ-քաղաքական կոնսոլիդացիայի և կայացած քաղաքացիական հասարակության կարևորագույն գործոնի ձևավորումը, որը կհամապատասխանի ժամանակակից սոցիալ-քաղաքական իրականությանը, առավել քան կարևոր, և, միևնույն ժամանակ, բավականաչափ բարդ երևույթ է:

Սակայն, չնայած հասարակության իրավագիտակցության ճգնաժամային իրավիճակին՝ կարելի է վստահաբար պնդել քաղաքական գործընթացներում իրավագիտակցության դերի կարևորության մասին: Այս համատեքստում՝ ժողովրդավարական իրավագիտակցության մշակումը և հաստատումը, հիմնված ազգային-մշակութային արժեհամակարգի վրա, առավելապես կարևոր են հայ հասարակության արդիականացման պայմաններում քաղաքական գործընթացների առավել արդյունավետ կազմակերպման և կառավարման, քաղաքացիական հասարակության և իրավական պետության ձևավորման համար:

---

[90] **Рослов С.**Роль правосознания в формировании гражданского общества в России. Сар., Диссертация на соискание ученой степени кандидата социологических наук, 2005, с. 90.

# ԳԼՈՒԽ 2. ԻՐԱՎԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ

## 2.1. Քաղաքական սոցիալականացման գործում իրավագիտակցության դերը

Իրավագիտակցությունը՝ որպես քաղաքացիական հասարակության ձևավորման և կայացման կարևոր նախապայման, իր ուրույն ազդեցությունն ու նշանակությունն ունի նաև քաղաքական սոցիալականացման գործընթացի վրա։ Քաղաքական սոցիալականացումը, լինելով տևական գործընթաց, մեծապես պայմանավորվում է նաև իրավագիտակցության մակարդակով, որը կարող է իր դրևսորման ձևերով պայմանավորել նաև քաղաքական սոցիալականացման ընթացքը, տեմպերը, ինչպես նաև արդյունքները։ Արդի ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության պայմաններում քաղաքական սոցիալականացման խնդրի դիտարկումը և ուսումնասիրությունը առանց իրավագիտակցության կլինի միակողմանի և ոչ լիարժեք։ Ուստի իրավագիտակցությունն այս պարագայում հանդիսանում է քաղաքական սոցիալականացման կարևոր մեխանիզմ և հնարավորություն է տալիս առավել ամբողջական պատկերացում ձևավորել քաղաքական սոցիալականացման ինչպես գործակալությունների և գործակալների, այնպես էլ՝ վերջինիս փուլերի հաջորդականության մասին։

Քաղաքական սոցիալականացումը տարբեր քաղաքական վարչակարգերում ունենում է տարբեր դրսևորումներ՝ պայմանավորված հասարական-քաղաքական կազմակերպման առանձնահատկություններով։ Ժողովրդավարական վարչակարգերում քաղաքական սոցիալականացման մեխանիզմները սկզբունքորեն տարբերվում են ոչ ժողովրդավարական վարչակարգերում համապատասխան մեխանիզմներից՝ ձևավորելով քաղաքական սոցիալականացման տարբեր մոդելներ։

Ոչ ժողովրդավարական վարչակարգերում հասարակության իրավագիտակցության ձևավորման և քաղաքական սոցիալականացման գործընթացները մշակվում են քաղաքական իշխանության կողմից և գտնվում են նրա անմիջական վերահսկողության

տակ: Այս երևույթը պայմանականորեն կարելի է անվանել «կառավարվող իրավագիտակցություն»: Իրադրությունն այլ է ժողովրդավարական վարչակարգերում, որտեղ քաղաքացիների իրավագիտակցությունը ձևավորվում է ազատ տեղեկատվական հոսքերի հիման վրա: Եթե ոչ ժողովրդավարական վարչակարգերում քաղաքական խոսույթը միակողմանի է և մենախոսական, ապա ժողովրդավարական վարչակարգերում այն բազմակողմ է[91] և ստիպում է վերաիմաստավորել իրավագիտակցության ձևավորման մեխանիզմները:

Հետխորհրդային փոխակերպման արդյունքում և տեղեկատվական հասարակության աստիճանական ձևավորման պայմաններում էականորեն ընդլայնվում են քաղաքական սոցիալականացման ինստիտուտների շրջանակները:

Խորհրդային քաղաքական սոցիալականացումն ուներ ամբողջական, հաստատուն բնույթ, որն իրականացվում էր առաջին հերթին սոցիալականացման ավանդական, խիստ վերահսկվող ինստիտուտների միջոցով: Հետխորհրդային փոխակերպման արդյունքում հասարակության քաղաքական սոցիալականացման վրա ազդում են ոչ միայն ներքին, այլև արտաքին գործոններ: Այս համատեքստում՝ Հայաստանի Հանրապետությունը ևս, որպես գլոբալացվող աշխարհի մաս, երբեմն բախվում է տարատեսակ խոչընդոտների և մարտահրավերների: Բացի այդ հասարակության ժողովրդավարական փոխակերպման գործընթացը, որն ուղեկցվում է տարատեսակ հասարակական-քաղաքական լարվածություններով, հակասություններով, ուղղակիորեն ներազդում է քաղաքական սոցիալականացման գործընթացի վրա:

Քաղաքական սոցիալականացման վերլուծության ժամանակ կարևոր է ուշադրություն դարձնել անհատի քաղաքական հայացքների և քաղաքական վարքագծի վրա ազդող իրադարձություններին, ինստիտուտներին և գործակալներին: Դրանք հիմնականում բաժանվում են երկու խմբի՝ քաղաքական (քաղաքական ինստիտուտներ, քաղաքական իրադարձություններ, քաղաքական կազմակերպություններ և այլն) և ոչ քաղաքական (ընտանիք, դպրոց, աշխատանք, եկեղեցի, մշակույթ և այլն):

[91] **Ордуханян Э.** Политический дискурс как средстжо политической коммуникации. Философия, политика, культура ''Материалы школы молодого философа'', Москва, Прогресс-Традиция, 2011, с. 232-233.

Ըստ Ֆ. Վոսբյորնի՝ քաղաքական սոցիալականացման այս երկու մոդելները պետք է դիտարկել որպես փոխլրացնող երևույթներ:[92] Ըստ էության, Վոսբյորնը առաջարկում է քաղաքական սոցիալականացման ինտերակտիվ մոդելը, որտեղ անհատի կյանքի փուլերը (մանկություն, պատանեկություն, հասուն տարիք) և սոցիալականացման գործակալները (ընտանիք, դպրոց, աշխատանք, եկեղեցի, մշակույթ, ԶԼՄ և այլն) փոխլրացնում են միմյանց և փոխգործակցում են միմյանց հետ:

Ամերիկացի հետազոտող Դ. Օուենը նշում է, որ քաղաքական սոցիալականացումը մի գործընթաց է, որի միջոցով միմյանց են փոխանցվում քաղաքացիների կողմնորոշումները՝ պայմանավորված հասարակության քաղաքական, սոցիալական և տնտեսական ոլորտներում տեղի ունեցող տեղաշարժերով ինչպես ազգային-պետական, այնպես էլ միջազգային մակարդակներում: Քաղաքական սոցիալականացման ընթացքը և արդյունքները բնորոշող խնդիրները հիմնականում ի հայտ են գալիս անցումային շրջանում և ցնցումների ժամանակ, ինչը նկատելի է նաև մեր հասարակության դեպքում: Քաղաքական սոցիալականացման մասին խոր գիտելիքները կարող են թույլ տալ ավելի հստակ ընկալելու սոցիալականացման գործընթացը՝ հասարակության մեջ տեղի ունեցող փոփոխությունները և դրանց ազդեցությունը քաղաքական վարչակարգերի ժողովրդավարցման վրա: Համաձայն մեկ այլ ամերիկացի հետազոտող Գ. Ալմոնդի՝ քաղաքական սոցիալականացումը մեզ թույլ է տալիս ոչ միայն հասկանալ հասարակության քաղաքական մշակույթը կամ ենթամշակույթները, այլև հնարավորություն է տալիս առանձնացնելու հասարակության կայուն և ձևափոխված առանձին որակները:[93]

Ամերիկացի հետազոտող Դ. Օուենը իր՝ «Քաղաքական սոցիալականացումը 21-րդ դարում» աշխատության մեջ ընդգծում է, որ արդի շրջանում քաղաքական սոցիալականացման վերաբերյալ հետազոտություններում պետք է պատշաճ ուշադրություն դարձնել սոցիալականացման մակրո մակարդակին, որը ներառում է

---

[92]**Wasburn Ph.**A life Course Model of Political Socialization. Politics and Individual. 1994, Vol. 4, M 2, p. 1-26.

[93]**Almond G.Coleman James S.** The Politics of Developing Areas. Princeton University Press, NJ., 1960, p. 31.

գլոբալացման, տեխնիկական առաջընթացի՝ որպես սոցիալականացման նոր գործակալների հիմնախնդիրը:[94]

Քաղաքական սոցիալականացումը որոշ դեպքերում առանձնահատուկ գործընթաց է: Ինչպես նշում են Գ. Ալմոնդը և Ս. Վերբան՝ լայն իմաստով քաղաքական սոցիալականացումը քաղաքական մշակույթի փոխանցումն է նոր սերնդի քաղաքացիներին:[95] Քաղաքական սոցիալականացումը իր իսկ միկրո և մակրո մակարդակների փոխկապակցվածության արդյունքն է, որտեղ մակրո մակարդակի հիմնախնդիրը քաղաքական արժեքների, համոզմունքների, դիրքորոշումների, կարծիքների, ինչպես նաև քաղաքական վարքագծի փոխանցման գործընթացն է, այնինչ քաղաքական սոցիալականացման միկրո մակարդակն ուսումնասիրում է, թե ինչպես և ինչու է մարդը դառնում քաղաքացի: Այս պարագայում կարևոր է ընդգծել նաև իրավագիտակցության դերը, որը պայմանավորում է քաղաքական սոցիալականացման արդյունավետությունը այս երկու մակարդամներում:

Ամերիկացի հետազոտող Վ. Սապիրոյի պնդմամբ՝ քաղաքական սոցիալականցման մակրո մակարդակում կամ (քաղաքական համակարգի մակարդակում) քաղաքական սոցիալակացումը միջոց է, որի օգնությամբ քաղաքական օղակները քաղաքացիների մեջ սերմանում են իրենց քաղաքական կարգին համահունչ նորմեր և պրակտիկաներ:[96] Քաղաքական օղակները սոցիալականացման համապատասխան գործակալությունների՝ ընտանիքի, կրթական համակարգի, կրոնական կազմակերպությունների, լրատվամիջոցների, քաղաքական ինստիտուտների միջոցով մարդկանց հաղորդում են համապատասխան քաղաքական կարծրատիպային մտածողություն և վարքագիծ,

[94]**Owen D.**Political Socialization in the Twenty-first Century. Paper presented for presentation at “The Future of Civic Education in the 21st Century” conference cosponsored by the Center for Civic Education and the Bundeszentrale fur politische Bildung, James Madison’s Montpelier, September 21-26, 2008, p. 3.

[95]**Almond, G., Sidney V.**The Civic Culture: Political Attitudes and Democracy in Five Nations. SAGE Publications, May 1, 1989, Political Science, p.153.

[96]**Sapiro V.** Not Your Parents Political Socialization: Introduction for a New Generation. Annual Review of Political Science, vol. 7, 2004, p. 5.

իրավունքներ և նորմեր, ինչպես նաև քաղաքական ավանդույթներ:[97] Քաղաքական սոցիալականացման մակրո մակարդակում ուսումնասիրվում են նաև քաղաքացիների մոտ քաղաքական կողմնորոշումների և պրակտիկաների ձևավորման հարցերը, որոնք ներգործում են ժողովրդավարական փոխակերպումների գործընթացի վրա՝[98] ձևավորելով «ժողովրդավարական իրավագիտակցություն»:

Քաղաքական սոցիալականացման միկրո (կամ անհատական) մակարդակը ներառում է այն կառույցները և գործընթացները, որոնց միջոցով մարդիկ ստանում են քաղաքական գիտելիքներ ու հմտություններ և կառուցում են իրենց սեփական փոխհարաբերությունները քաղաքական համատեքստում:[99] Քաղաքական սոցիալականացման արդյունքում անհատները ձեռք են բերում քաղաքական համակարգի գործառնության մասին գիտելիքներ, յուրացնում են քաղաքական արժեհամակարգը և գաղափարախոսությունը, սկսում են ընկալել դրա խորհրդանիշները և ավանդույթները: Նրանք տեղեկատվություն են ձեռք բերում քաղաքական գործընթացների ակտիվ կամ պասիվ մասնակիցների դերերի մասին և կարող են մասնակցել քաղաքական և քաղաքացիական կյանքին:

Ամերիկացի հետազոտող Վ. Սապիրոն քաղաքական սոցիալականացման գլխավոր խնդիրների շարքում առանձնացնում է մարդկանց մոտ քաղաքական կողմնորոշումների և հմտությունների ձևավորման հիմնախնդիրը:[100] Նա անդրադառնում է նաև քաղաքական սոցիալականացման գործընթացի վրա գլոբալացման գործոնի ազդեցությանը և դրա հետևանքներին՝ նշելով, որ այդ դաշտում հետազոտությունները սակավաթիվ են և հիմնականում ընդգրկում են մակերեսային հարցեր: Նա գտնում է, որ գլոբալացումը առաջ է բերում սոցիալականացման ավելի լայն շրջանակներ, որոնք ավելի մեծ հնարավորություններ են տալիս մարդկանց ինքնության ընտրության համար՝ առանց

---

[97]**Beck Paul A.**The Role of Agents in Political Socialization.In Stanley Allen Renshon (ed.) Handbook of Political Socialization Theory and Research. The Free Press, New York, 1977, p. 115-142.

[98] Նույնտեղում, էջ19:

[99]Նույնտեղում, էջ 3:

[100]Նույն տեղում, էջ 5:

հիմնվելու ազգային-ցեղային գործոնի վրա: Նրանք կարող են ուղղորդվել տեղականից դեպի ընդհանուրը, պետականից դեպի վերազգայինը և այլն:[101]

Նկատենք, որ Սապիրոյի վերոնշյալ գաղափարը իրատեսական է արդի գլոբալացման պայմաններում: Սակայն այն հաճախ ազգային պետություններին, որոնք որդեգրել են ժողովրդավարացման ուղին, գցում է մոլորությունների մեջ, քանի որ օտար քաղաքական, մշակութային արժեհամակարգը և՛ դժվար է յուրացնել, և՛ միևնույն ժամանակ հարց է առաջանում, արդյո՞ք դա ճշմարիտ է, քանի որ այդ դեպքում ազգային-մշակութային բազմաթիվ արժեքներ ստիպված պետք է իրենց տեղը զիջեն նոր, օտար արժեքներին, որի դեպքում արդեն իսկ դժվար է դառնում խոսել ամբողջական ազգ-պետության լինելիության մասին: Մեր համոզմամբ՝ քաղաքական սոցիալականացումն առանց ազգային ինստիտուտների ներգրավման չի կարող լինել արդյունավետ:

Արևմտյան հետազոտողների շարքում կարևոր է նաև առանձնացնել Մ. Հուգին, ով քաղաքական սոցիալակցման արդյունավետությունը ժողովրդավարական համակարգերում տեսնում է սերնդափոխության գործընթացում՝ նշելով, որ արդի ժողովրդավարությունները պետք է հետզհետե հարմարվեն և ավելի հանդուրժող դառնան քննադատական ավելի խոր որակներ ունեցող քաղաքացիների հանդեպ, ովքեր հանդիսանում են քաղաքական սոցիալականացման կարևոր գործոն: Ինչպես բազմաթիվ այլ հեղինակներ՝ Հուգը ևս այս գործընթացում առանձնացնում է երիտասարդների դերը որպես քաղաքական դիրքորոշումների և վարքագծի դրսևորման հիմնական դերակատարի, որը դժվարությամբ է կոնսենսուսի հանգում ավագ սերնդի քաղաքական կողմնորոշումների հետ: Հուգի կարծիքով՝ սերնդափոխությունը սոցիալ-քաղաքական փոփոխությունների հիմնաքարն է, որը պետք է հաշվի առնի քաղաքական ինստիտուտների դիրքորոշումները:[102]

[101]Նույն տեղում, էջ 7:
[102]**Hooghe M.** Political Socialization and the Future of Politics. Acta Politica, Leuven, 2004, p. 331.

Եթե ժողովրդավարության պայմաններում քաղաքացիականության համար առաջանում է որևէ սպառնալիք, ապա երիտասարդներն առաջինն են նկատում այդ վտանգը:[103]

Ուշագրավ են նաև ֆրանսիացի հետազոտող Լ. Մուլենի՝ քաղաքական սոցիալականցման հիմնախնդրի վերաբերյալ տեսակետները, որտեղ սոցիալականացման գործում հետազոտողը կարևորում է քաղաքական կոնսենսուսի հիմնախնդիրը: Նա նշում է, որ ցանկացած սոցիալականացման հիմքում ընկած է կոնսենսուսը, առանց որի տվյալ գործընթացը կարող է լինել առավել երկարատև: Հեղինակը նկատում է, որ պոլիարխիկ ժողովրդավարություններում քաղաքական կոնսենսուսը մեծապես կոնֆլիկտային է, քանի որ սոցիալականացման գործընթացը կոորդինացված և համաչափ չէ: Դա պայմանավորված է տարբեր խմբերի կողմից ոչ համաչափ մասնակցությամբ:[104] Վերոնշյալ գաղափարները հիմք են ստեղծում ընկալելու նաև մեր երկրում տեղի ունեցող քաղաքական սոցիալականացման գործընթացը, որը նույնպես ընթանում է կոնֆլիկտային քաղաքական կոնսենսուսի պայմաններում: Նկատենք, որ այս պարագայում կոնֆլիկտը ապահովում է քաղաքացիների իրավագիտակցության մակարդակի բարձրացում, քանի որ քաղաքացիական ակտիվության և նախաձեռնողականության միջոցով է հնարավոր դառնում պատշաճ կերպով իրացնել և պաշտպանել սեփական քաղաքական և քաղաքացիական իրավունքները: Ուստի կոնֆլիկտային քաղաքական կոնսենսուսը նպաստում է նաև քաղաքացիական հասարակության ձևավորման և կայացման գործընթացին:

Քաղաքական սոցիալակացման գործընթացը տարբեր հասարակություններում ընթանում է տարակերպ, և, միևնույն ժամանակ, չի կարելի առանց սխալմունքների սոցիալականացման որևէ մոդել կիրառել բոլոր տիպի հասարակություններում: Այս գործում խիստ կարևոր նշանակություն ունեն առաջին հերթին ազգային, մշակութային արժեհամակարգերը, որոնք չի կարելի անտեսել քաղաքական սոցիալականացման

---

[103]**Hooghe M.** Political Socialization and the Future of Politics. Acta Politica, Leuven, 2004, p. 334.

[104]**Moulin L.** Socialisation et consensus politique, Pouvoirs. Revue française d'études constitutionnelles et politiques. N. 5, Seuil, 1978, p. 103,108,109.

գործընթացի ժամանակ: Այս կապակցությամբ Հուզը իրավացիորեն նշում է, որ քաղաքական սոցիալականացման գործընթացն ազգային և մշակութային առանձնահատկությունների տեսանկյունից ուսումնասիրելը առավել արդիական է նոր ժողովրդավարությունների համար, որտեղ այդ գործընթացը շատ հաճախ տեղի է ունենում լուրջ ցնցումների ուղեկցությամբ:[105]

Քաղաքական սոցիալականացման գործում ամենակարևոր դերակատարությունն ունի երիտասարդությունը, և այս մասին իրավացիորեն նշում են բազմաթիվ հետազոտողներ: Սակայն հարկ է նկատել, որ երիտասարդների քաղաքական սոցիալականացումը կարող է տեղի ունենալ երկու ճանապարհով, ինչը որոշ հեղինակներ (օրինակ՝ Դ. Օուենը, Ռ. Դալտոնը[106] և այլք) դասակարգում են քաղաքական գործունեություն և քաղաքացիական մասնակցություն կատեգորիաների: Քաղաքական գործունեությունը ենթադրում է մասնակցություն քաղաքական ինստիտուտների գործունեությանը, ինչպես օրինակ՝ քվեարկություն, թեկնածության առաջադրում, ընտրարշավ, հանրահավաք, անդամակցություն կուսակցությանը, քաղաքական բանավեճեր և այլն: Քաղաքական գործունեությունը՝ որպես քաղաքացի-սուբյեկտ, կապված է պարտավորությունների կատարման, որոշակի նորմերի պահպանման, իրավունքների իրագործման ձևական պարտականությունների հետ: Այն ենթադրում է նաև քաղաքական փոխադարձ հանդուրժողականություն: Քաղաքական սոցիալականացման այս ձևը ենթադրում է սահմանափակ քաղաքական մասնակցություն՝ հիմնված միայն սահմանված համապատասխան չափորոշիչների վրա, որոնք համահունչ են գործող քաղաքական կարգին: Այս դեպքում քաղաքացիների իրավագիտակցությունը գտնվում է պասիվ վիճակում:

[105]**Hooghe M.** Political Socialization and the Future of Politics. Acta Politica, Leuven, 2004, p. 331- 341.

[106] 1. **Owen D.** Political Socialization in the Twenty-first Century. Paper presented for presentation at “The Future of Civic Education in the 21st Century” conference cosponsored by the Center for Civic Education and the Bundeszentrale fur politische Bildung, James Madison’s Montpelier, September 21-26, 2008, 23 p., 2. **Dalton, Russell J.**The Good Citizen. How a Younger Generation Is Reshaping American Politics, , CQ Press., Washington D.C., 2008, 200 p.

Քաղաքացիական ակտիվությունը կոչված է քաղաքացիների կյանքում քաղաքական գիտելիքները, հմտությունները, արժեքները զարգացնելուն, համադրելուն և ամբողջացնելուն: Այն ենթադրում է կամավոր աշխատանք որևէ խնդիր լուծելու կամ մյուսներին օգնելու համար: Քաղաքացիական ակտիվության օրինակներ կարող են լինել ոչ ընտրական գործողությունները, կամավոր հասարակական աշխատանքները, որևէ անձին փաստաբանական օգնություն ցուցաբերելը, բնապահպանական ակցիաները և այլն: Քաղաքացիական ակտիվության հետ կապված նորմերը գերակա են էթնիկ, բարոյական և այլ պարտավորությունների նկատմամբ և խրախուսում են փոխադարձ հարգանք անհատների միջև: Այն երիտասարդները, ովքեր առաջնորդվում են այս ուղիով, ավելի շատ են հակված պայքարի և ունեն բողոքական վարքագիծ:[107] Այս դեպքում քաղաքացիների իրավագիտակցությունը կարող է ունենալ ավելի լայն դրսևորումներ:

Ավելի քան քսան տարի ՀՀ-ում տեղի է ունենում հասարակական-քաղաքական համակարգի փոխակերպում: Այս ընթացքում տեղի են ունեցել բազմաթիվ փոփոխություններ. փոխվել են իշխանական ինստիտուտները, քաղաքական վարչակարգը, հասարակական-քաղաքական համակարգը և այլն: Այս կերպափոխումների ընթացքում սերունդների ճակատագրերը եղել են տարբեր: Եթե երիտասարդ սերնդի մոտ քաղաքական սոցիալականացման գործընթացը, այսինքն՝ նոր արժեքների յուրացումը եղել է բնական երևույթ, ապա ավագ սերունդը, որը քաղաքականապես սոցիալականացվել է խորհրդային իշխանության տարիներին, դժվարությամբ է հարմարվում նոր իրականությանը: Ավագ և միջին սերնդի ներկայացուցիչները հասարակության քաղաքական համակարգի փոխակերպման արդյունքում ստիպված եղան սովորել սկզբունքորեն նոր քաղաքական բառապաշար և յուրացնել քաղաքական վարքագծի սկզբունքորեն նոր մոդելներ:

[107] Owen D. Political Socialization in the Twenty-first Century. Paper presented for presentation at “The Future of Civic Education in the 21st Century” conference cosponsored by the Center for Civic Education and the Bundeszentrale fur politische Bildung, James Madison’s Montpelier, September 21-26, 2008, p. 9.

Այս դեպքում տեղի է ունենում նախկին կուտակված փորձի և գիտելիքների վերաիմաստավորում, ինչն էլ Ե. Շեստոպալն անվանում է բնակչության ավագ սերնդի վերասոցիալականացում:[108]

Քաղաքական սոցիալականացման գործում քաղաքական գործունեության և քաղաքացիական ակտիվության միջև փոխհարաբերությունները ստեղծում են բանավեճերի հիմքեր: Հաճախ դժվար է լինում առանձնացնել քաղաքական սոցիալականացման այս երկու ձևերը, քանի որ երկուսն էլ կարող են ունենալ քաղաքական բնույթ: Սակայն քաղաքացիական ակտիվությունը դիտվում է որպես «հրավեր» դեպի քաղաքական-մասնակցային կյանք, որն անհատներին հաղորդում է փորձ, կազմակերպչական, հաղորդակցական որակներ, ինչպես նաև քաղաքական կյանք մուտք գործելու համար ֆինանսներ հայթայթելու հմտություններ: Կամավորությունը նպաստում է հասարակության մեջ տարատեսակ խմբերի միավորմանը համագործակցության նպատակով, որը կարող է հանգեցնել որոշակի քաղաքական գործողությունների: Կամավորությունը այս պարագայում կատարում է քաղաքական սոցիալականացման գործակալի դեր, որն էլ իր հերթին կարող է խրախուսել քաղաքական մասնակցությունը և նախընտրական ներգրավվածությունը:[109]

Մեկ այլ բանավեճ ծավալվում է այն հարցի շուրջ, որ քաղաքացիական ակտիվությունը շատ չնչին, եթե ոչ ընդհանրապես, որևէ կապ չունի քաղաքական գործունեության կամ ժողովրդավար քաղաքացիների դաստիարակության հետ: Այս առումով ուշագրավ է Է. Թեյս-Մորսի և Ջ. Հիբինգի տեսակետը, ովքեր պնդում են, որ կամավոր խմբերը հիանալի ծառայություն են մատուցում հասարակությանը և ունեն անվիճելի կարևորություն, սակայն նրանց ազդեցությունը ժողովրդավարական քաղաքականության վրա անորոշ է և հնարավոր է, որ նույնիսկ բացասական է: Ըստ հեղինակների՝ շատերն են ցանկանում զբաղվել հասարակական գործունեությամբ և դա

---

[108]**Шестопал Е.** Политическая психология: Учебник для вузов. ИНФРА, М., 2002, с.137.

[109]**Owen D.** Political Socialization in the Twenty-first Century. Paper presented for presentation at “The Future of Civic Education in the 21st Century” conference cosponsored by the Center for Civic Education and the Bundeszentrale fur politische Bildung, James Madison’s Montpelier, September 21-26, 2008, p. 10-11.

կարող են անել իրենց համայնքներում՝ խուսափելով արատավոր քաղաքական պրակտիկայից, քանի որ ոչ բոլոր խմբերն են, որ հետապնդում են բացառապես ժողովրդավարական-քաղաքացիական նպատակներ:[110]

Քաղաքական սոցիալականացման գործում՝ որպես քաղաքացիական գիտակցության ձևավորման աղբյուր, մեծ է սոցիալականացման գործակալությունների դերը, որոնք ժամանակի ընթացքում փոփոխվում և զինվում են նորանոր, առավել արդյունավետ միջոցներով: Քաղաքական սոցիալականացման գործակալությունների թիվն արագորեն աճում է, հատկապես՝ համացանցի օգնությամբ:

Այսօր քաղաքագիտական հետազոտություններում մեծ ուշադրություն է դարձվում տեղեկատվական հասարակությունում տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությամբ առաջացող քաղաքական սոցիալականացման նոր ձևերին, մեխանիզմներին, գործակալներին և գործակալություններին:

Տեղեկատվական հասարակությունում նորագույն տեղեկատվական տեխնոլագիաների զարգացումը փոխում է քաղաքական սոցիալականացման մասին ավանդական պատկերացումները, քանի որ տեղեկատվական հասարակությունում ստեղծվում են սկզբունքորեն նոր հնարավորություններ ժողովրդավարական քաղաքական մասնակցության, հասարական-քաղաքական կյանքի կազմակերպման համար: Փոխվում են քաղաքական և քաղաքացիական մասնակցության նախկին ձևերը, քաղաքական սոցիալականացման ավանդական գործակալներին և գործակալություններին միանում են նախկինում գոյություն չունեցող նոր գործակալներ և գործակալություններ:

Այսօր համացանցն իրավամբ ստանձնել է անհատի, հասարակության տարբեր խմբերի իրավագիտակցության ձևավորման, քաղաքական սոցիալականացման առաջնային գործակալներից մեկի դերը: Այս գաղափարը հիմնավորող փաստերը բազմաթիվ են: Շնորհիվ համացանցի՝ տեղեկատվական հասարակության տեսաբաններն արդեն խոսում են վիրտուալ կուսակցությունների, վիրտուալ կամ ցանցային

[110]**Theiss-Morse E., Hibbing J.** Citizenship and Civic Engageme. Annual Review of Political Science, vol. 8, 2005, p 244.

քաղաքականության ստեղծման մասին: Նշենք, որ կուսակցությունները քաղաքական սոցիալականացման կարևոր գործակալություններից են:

Համացանցը նկատելիորեն ընդլայնում է անհատների և հասարակական կազմակերպությունների քաղաքական գործունեության շառավիղը: Համացանցի օգտագործման շնորհիվ քաղաքական գործընթացի ցանկացած մասնակից գործնականում կարող է ուղարկել իր հաղորդագրությունները անսահմանափակ թվով պոտենցիալ հասցեատերերի: Արդյունքում՝ ձևավորվում է մի իրավիճակ, որը վերաիմաստավորում է անձի իրավագիտակցության, քաղաքական մասնակցության դերը և, հետևապես, քաղաքական սոցիալականացման հնարավորությունների մասին հնացած պատկերացումները: Նման մասնակցությունը ընկալվում է որպես առանձին անձանց՝ քաղաքական որոշումների ձևակերպման և ընդունման գործընթացի վրա ազդելու նախաձեռնություն:

Ժողովրդավարական հասարակությունում պարտադիր է քաղաքացիական վերահսկողությունը պետության գործունեության նկատմամբ, ինչը խթանում է այն ենթակառուցվածքի զարգացումը, որն ի զորու է զսպելու չինովնիկների կամայականություններն ու չարաշահումները:

Համացանցի ի հայտ գալը ծնունդ տվեց բազմաթիվ լավատեսական հույսերի՝ կապված առավել կատարյալ սոցիալական կարգի ձևավորման հետ: Ենթադրվում էր, որ տեղեկատվության համընդհանուր դյուրամատչելիությունը աստիճանաբար կկրճատի սոցիալական անհավասարությունը, պետության գործառույթները առավելագույնս կկրճատվեն, իսկ իշխանական ինստիտուտների նկատմամբ հասարակության վերահսկողությունը կտրուկ կմեծանա:[111] Սակայն այս լավատեսական միտումներից բացի նկատվեցին նաև պետության կողմից քաղաքացիների նկատմամբ վերահսկողության նոր միջոցներ՝ կապված տեղեկատվական տեխնոլոգիաների հետ:

Համացանցը՝ որպես քաղաքական սոցիալականացման գործակալ, կարող է նպաստել քաղաքական մասնակցության մակարդակի նվազման միտումների

[111] **Սուքիասյան Հ.** Տեղեկատվական հասարակություն. սոցիալ-քաղաքական հիմնախնդիրներ, Սարվարդ հրատ., Եր., 2009, էջ 111-116:

հաղթահարմանը, քանի որ այն հեշտացնում է քաղաքացու և իշխանության միջև ուղղակի շփումների հնարավորությունը: Համացանցի շնորհիվ քաղաքացին դառնում է ոչ միայն տեղեկատվության սպառող, այլև՝ արտադրող և տարածող, ինչի արդյունքում մենախոսական ռեժիմից անցում է կատարվում բազմակողմ քաղաքական և քաղաքացիական խոսույթի: Արդյունքում՝ շրջանառվող տեղեկատվական հոսքերի ծավալները գործնականում ավելի լայն հնարավորություններ են ստեղծում իրավագիտակցության ձևավորման և դրա դրսևորման համար: Ի տարբերություն քաղաքական սոցիալականացման ավանդական գործակալությունների հիերարխիկ բնույթի, որտեղ տվյալ գործընթացը երկարատև է և խիստ հաջորդական, համացանցի միջոցով տեղի ունեցող քաղաքական սոցիալականացումը հաղթահարում է հիերարխիայի, ժամանակի և հաջորդականության գործոնները՝ դյուրին դարձնելով և արագացնելով նաև իրավագիտակցության ձևավորման գործընթացը:

Այսպիսով, դիտարկելով իրավագիտակցությունը քաղաքական սոցիալականացման գործում՝ կարող ենք պնդել, որ այս երկու երևույթներն ունեն փոխլրացնող բնույթ: Այն գործընթացները, որոնք ձևավորում են իրավագիտակցություն, ուղղակիորեն նպաստում են քաղաքական սոցիալականացմանը: Արդյունքում՝ դրսևորվում է այս երկու գործընթացների միջև փոխլրացման առաջին կապը: Բացի այդ՝ հարկ է նկատել, որ այս երկու երևույթները նաև անմիջականորեն փոխներազդում են: Իրավագիտակցությունը նպաստում է քաղաքական սոցիալականացման գործընթացին, իսկ քաղաքական սոցիալականացումն էլ իր հերթին փոխլրացնող կապով ազդում է իրավագիտակցության վրա:

## 2.2. Քաղաքացիական անհնազանդությունը որպես իրավագիտակցության դրսևորում

Քաղաքացիական անհնազանդության և իրավագիտակցության հարաբերակցության ուսումնասիրությունը արդի քաղաքական զարգացումների շրջանակներում այլևս դարձել է խիստ կարևոր: Արդի ժողովրդավարական հասարակություններում քաղաքացիների

շահերի, իրավունքների և ազատությունների ներկայացման և պաշտպանության հարցը քաղաքացիական հասարակության առաջնահերթ խնդիրներից է: Ուստի ժողովրդավարության պայմաններում քաղաքական մասնակցությունը և ակտիվությունը կարող են ունենալ տարբեր դրսևորումներ, որոնց շարքում իր ուրույն տեղն ու նշանակությունն ունի քաղաքացիական անհնազանդությունը: Սակայն այս երևույթը, ի տարբերություն ժողովրդավարության պայմաններում քաղաքական ակտիվության դրսևորման այլ ձևերի, կարող է հիմնվել նաև իրավական սկզբունքների և նորմերի վրա: Հետևապես՝ իրավագիտակցության դերը քաղաքացիական անհնազանդության դեպքում չի կարող անտեսվել: Ժողովրդավարության այս երկու հիմնարար հասկացությունները գտնվում են սերտ կապի մեջ, և հարկ է առաջանում ուսումնասիրել դրանց փոխհարաբերակցության եզրերը, ձևերը, ինչպես նաև նրանց փոխազդեցությունը:

Քաղաքացիական անհնազանդության գաղափարն առաջին անգամ շրջանառության մեջ է դրվել 19-րդ դարում արևմտյան քաղաքական տեսության շրջանակներում ամերիկացի մտածող, բարոյագետ Հ. Տորոյի կողմից: Հեղինակն իր աշխատանքում կոչ էր անում հրաժարվել հարկերը վճարելուց՝ որպես պետական այրերի անարդյունավետ քաղաքականության նկատմամբ բողոքի դրսևորում: Այսպիսի վարքագիծն ուղեկցվում էր ոչ բռնի գործողություններով:[112]

Մեր օրերում քաղաքացիական անհնազանդության հայեցակարգը զարգացում է ստացել սոցիալական փիլիսոփայության մասնագետ Ջ. Ռոուլզի աշխատություններում: Համաձայն Ռոուլզի՝ քաղաքացիական անհնազանդությունը հրապարակային, ոչ բռնի, գիտակցված քաղաքական գործունեություն է, որի ընթացքում խախտվում է օրենքը պետական քաղաքականության կամ հենց օրենքների փոփոխության նպատակով: Սրանից ելնելով՝ հեղինակը հաստատում է, որ քաղաքացիական անհնազանդությունն անօգուտ է և անիմաստ փակ հասարակություններում, որտեղ իշխանությունն ունի ավտորիտար բնույթ:[113]

---

[112]**Торо Г.** О гражданском неповиновении. Торо Г. Д. Высшие законы: Пер. с англ./Общ. ред., предисл., сост. Н. Е. Покровского,Республика, М., 2001, 412 с.

[113]**Rawls J.** A Theory of Justice. Cambridge, Ma., The Balknap Press of Harvard U.P.,1971, p. 364.

Իրադրությունը բոլորովին այլ է ժողովրդավարական հասարակություններում: Նման հասարակությունում անարդարությունը նշանակում է ինչ-որ մեկի իրավունքների խախտում, իսկ այս դեպքում քաղաքացիական պարտքը հենց այդ խախտված իրավունքների պաշտպանումն ու վերականգնումն է: Քաղաքացիական անհնազանդությունը հնարավորություն է տալիս հակազդել անարդարությանը հանուն օրենքի: Ռոուլզը քաղաքացիական անհնազանդության հասկացությունը դիտարկում է որպես սահմանադրական ժողովրդարության լրացուցիչ տեսություն:[114]

Քաղաքացիական անհնազանդության ժամանակակից հայեցակարգը զարգացում է ստացել 20-րդ դարում հատկապես Մ. Գանդիի գաղափարների և քաղաքական փորձի ազդեցության ներքո: Գանդիի փորձն իրեն թույլ տվեց հաստատել, որ լայն զանգվածները միավորվելով կարող են խաղաղ ճանապարհով հասնել այն ամենին, ինչին կարելի է հասնել հեղափոխության ճանապարհով, սակայն, ի տարբերություն հեղափոխությունների, քաղաքացիական անհնազանդությունը պետությանը լուրջ վնասներ չի պատճառում. դրանք չեն ուղեկցվում զոհերով և հասարակության համար այլ անցանկալի հետևանքներով:[115] Դա նշանակում է, որ գոյություն ունի սահման, որից հետո մեծամասնության տիրապետման վրա հիմնված իշխանությանը հաջորդաբար հնազանդվելը կարող է հանգեցնել անարդարության: Խնդիրն այն է, թե ինչպես պահպանել սահմանադրական կարգի (հասարակական դաշինք) և անարդարության զգացողության միջև համերաշխությունը կամ ինչպես Գանդին է ասում, ինչպես հաշտեցնել լոյալությունը «սատյագրահայի» (ձգտում դեպի արդարություն, ճշմարտություն) հետ:[116] Այս դեպքում կարևոր է գիտակցել, որ «հասարակական դաշինք» և «քաղաքացիական անհնազարդություն» հասկացություններն ամենևին իրար չեն հակասում:

---

[114]**Апресян Р.** Гражданское неповиновение - в политической теории и социальной практике (Джон Ролз и Мохандас Ганди), Насилие и ненасилие: Философия, политика, этика / Под ред. Р. Г. Апресяна, МИОС, М., 2003, с. 54-70.

[115]**Жиро Т.** Политология. Пер. с полского, изд. Гуманитарныйцентр, Харь, 2006, с. 119-120.

[116]**Gandhi M.** The Essential Writings of Mahatma Gandhi. Ed. by Raghavan Iyer. Delhi, Oxford U.P., 1996, p. 330.

Ի դեպ՝ ինչպես իրավամբ նշում է Հ. Արենդտը, քաղաքացիական անհնազանդությունը դրսևորվում է այն ժամանակ, երբ քաղաքացիների մի զգալի զանգված գալիս է այն գիտակցության, որ փոփոխությունների իրականացման նորմալ մեթոդներն անարդյունավետ են, իսկ քաղաքացիների բողոքները լսելի չեն և չեն արժանանում ուշադրության: Կամ էլ՝ հակառակը, երբ կառավարությունը ցանկանում է բարեփոխումներ իրականացնել և պատրաստ է դրան, սակայն նրա՝ այդ գործողությունները կատարելու մեխանիզմները ունեն լեգիտիմության և սահմանադրականության խնդիր:[117]

Է. Արատոն նշում է, որ քաղաքացիական հասարակության ինստիտուցիոնալացման որոշ ձևեր թույլ են տալիս, որպեսզի ձևավորվեն շարժումներ և նախաձեռնություններ, որոնք իրենց հերթին կարող են նպատակաուղղված լինել կամ չլինել ինստիտուցիոնալացման հաջորդ թռիչքին. տարբերություն, որը գոյություն ունի հեղափոխության և քաղաքացիականանհնազանդության միջև: Քաղաքացիականանհնազանդությունը,զուգորդվածսոցիալականշարժումներովկամնախա ձեռնություններով,ներկայացնում էքաղաքացիականհասարակության ներսում տեղի ունեցող հավաքական գործողություններիարտաքինսահմանները նկզալիորեն տարբերվում է քաղաքացիականհասարակությունից՝ որպեսկազմակերպվածշարժում:[118]

Արդյո՞ք հնարավոր է քաղաքացիական անհնազանդությունը ուղղակի իմաստով: Խոսքն այն մասին է, որ նման գործողությունները հնարավոր են միայն իրավական պետությունում, երբ քաղաքացիների իրավագիտակցությունը բարձր է, և նրանք գիտեն, թե իրենց գործողություններին ինչ պատիժներ կարող են հետևել: Այսպիսով՝ քաղաքացիական անհնազանդության ակցիաների կազմակերպումը և հաջողությունը կախված է այն բանից, թե որքանով է պետությունը իրավական և ինչպիսին է քաղաքացիների իրավագիտակցության մակարդակը:

---

[117] **Жиро Т.** Политология. Пер. с полского, изд. Гуманитарный центр, Харь., 2006, с. 119.

[118] **Арато Э.** Концепция гражданского общества: восхождение, упадок ивоссоздание направления для дальнейших исследований.Данная статья продолжает цикл публикаций НДИ в журнале "Полис" (см. "Полис", 1993, №№ 2-6; 1994, №№ 1-6; 1995, №№ 1-2), с. 4.

Բողոքի արտահայտման այսպիսի ձևն օրինական է և կարող է դրսևորել ինչպես դատավարության (այդ թվում՝ հասնել մինչև Մարդու իրավունքների միջազգային դատարան), այնպես էլ ցույցերի, գործադուլների, բոյկոտի, հանրահավաքների, հանրաքվեների և այլ ձևերով:[119] Քաղաքացիական ակտիվության այս ձևն ուղղակի կապված է քաղաքացիների իրավագիտակցության մակարդակի հետ, որը հիմք է հանդիսանում նման վարքագծի ձևավորման, պայքարի մեխանիզմների ընտության և այլ տեխնոլոգիաների կիրառման համար: Պետության իրավագիտակից քաղաքացիներն են առաջին հերթին նախաձեռնում սեփական իրավունքների և ազատությունների պաշտպանության համար պայքարը, որը կարող է դրսևորվել քաղաքացիական անհնազանդության տեսքով:

Քաղաքացիական անհնազանդության քաղաքական և իրավական ասպեկտների հետազոտության արդիականությունը պայմանավորված է վերջինիս իրավական լեգիտիմության և քաղաքական լեգիտիմության ապացուցման խնդրով, քանի որ քաղաքացիական անհնազանդությունը՝ որպես քաղաքական վարքագիծ, հիմնվում է նաև իրավագիտակցության վրա, ինչը թույլ է տալիս սահմանել քաղաքացիական անհնազանդությունը որպես կոնվենցիոնալ քաղաքական մասնակցության ձև:

Քաղաքացիական անհնազանդությունը դրսևորվում է մարդկանց բողոքական գործողություններում՝ պայմանավորված գործող համակարգի թերություններով, իսկ այդ գործողությունների նպատակը քաղաքացիների սահմանադրական իրավունքների և ազատությունների համար պայքարն է: Անհնազանդության չափն ուղղակիորեն կապված է այն բանի հետ, թե որքանով է քաղաքական համակարգը հաշվի առնում ինքնին հասարակության շահերը:[120]

Սոցիալական շարժումներն ու քաղաքացիական նախաձեռնությունները՝ որպես իրավագիտակցության դրսևորում, ունեն իրավական բնույթ: Եթե չեն բավարարվում դրանց

---

[119] **Деметрадзе М.**Политико-правовые аспектыгражданского неповиновениякак способ обеспечения правовой ответственности государства передобществом/ с. 1. *Электронная библиотека «Гражданское общество».* http://www.civisbook.ru/files/File/Demetr_pol-prav.pdf /28.03.2014/.

[120] **Апресян Р.** Гражданское неповиновение. Этика: Энциклопедический словарь. Гардарики .М., 2001, с. 93-94.

սոցիալական, տնտեսական, իրավական, մշակութային և քաղաքական պահանջները, այս դեպքում, քաղաքացիական նախաձեռնությունները և հավաքագրման գործողությունները կարող են ազդել քաղաքականության վրա՝ որպես ժողովրդավարական սկզբունքների և նորմերի ամրապնդման գործոն: Արդյունքում՝ ժողովրդավարության վերլուծության խնդիրը պետական քաղաքականության մակարդակից տեղափոխվում է քաղաքացիական հասարակության մակարդակ, երբ իշխանությունը հայտնվում է վերջինիս նկատմամբ կախյալ վիճակում: Հենց այս գործոնն է քաղաքացիական անհնազանդությանը և դիմադրությանը հաղորդում սոցիալապես կողմնորոշված բնույթ, քանի որ ընդլայնում է քաղաքացիների իրավունքները և անկախությունը՝ դրանք ուղղելով ժողովրդավարական քաղաքական մշակույթի կենսունակության ապահովմանը:[121]

Ըստ այդմ՝ ենթադրվում է, որ քաղաքական մշակույթը և քաղաքացիական հասարակության ինստիտուտներն ունեն պետության նկատմամբ որոշակի ինքնուրույնություն: Առանց սեփական իրավունքների և ազատությունների իմացության, առանց դրանց պաշտպանության իրավական մեխանիզմների գիտակցման և գործադրման, քաղաքացիական անհնազանդությունը կարող է լինել ոչ իրավական, ոչ նպատակաուղղված և միևնույն ժամանակ կարող է հեշտորեն և արագ ճնշվել քաղաքական իշխանության կողմից:

Միևնույն ժամանակ քաղաքացիական անհնազանդությունը՝ որպես քաղաքացիների իրավագիտակցության վրա հիմնված սոցիալական շարժում, հանդիսանում է քաղաքացիների ինքնապաշտպանության միջոց՝ նպատակ ունենալով վերացնել հասարակության մեջ առկա ամեն տեսակի անիրավություն և ապօրինություն:

Ի. Իլյինն այս առումով առաջ է քաշում իրավագիտակցության առավել կարևոր կատեգորիաներից մեկը, որը գործում է բնական և գործող, դրական իրավունքի միջև կոնֆլիկտի պայմաններում. քաղաքացիական անհնազանդության ակտը, որը պայմանավորվում է «իրավունքի անմիջական զգացումով և սեփական բնական-իրավական պարտականության գիտակցությամբ»: Հետևապես՝ Իլյինը քաղաքացիական

[121] **Calabrese A.** Virtual nonviolence? Civil Disobedience and Political Violence in the Information Age. Info,Vol. 6, N. 5, 2004, p. 326.

անհնազանդության ակտին տալիս է բացառապես իրավական բնույթ: Հետազոտողը իրավամբ քաղաքացիական անհնազանդությունը դիտում է որպես նոր իրավունքի համար պայքարի միջոց:[122]

Քաղաքացիական անհնազանդության կառուցվածքը և նպատակները նրան հաղորդում են ինստիտուցիոնալ և լեգիտիմ բնույթ՝ ընդգծելով մարդկանց բողոքական հավաքագրման և նրանց հավաքական գործողությունների պատճառներն ու ազդակները:

Պահանջների ռացիոնալության աստիճանը, դրանց համապատասխանությունը սահմանադրական նորմերին ու սկզբունքներին, միջազգային իրավունքին, կողմնորոշում են տվյալ խմբերին դեպի ինստիտուցիոնալ արժեքներ, որոնք ունեն համապարփակ ուժ: Այդ իսկ պատճառով չի կարելի քաղաքացիական անհնազարդությունը դիտել որպես սոցիալական կարգի կործանման աղբյուր, քանի որ այն իրավական երևույթ է և հենվում է քաղաքացիների իրավագիտակցության վրա:

Քաղաքացիական անհնազանդության՝ որպես սոցիալական շարժման օբյեկտ են հանդիսանում պետական և քաղաքացիական հասարակության ինստիտուտները, իսկ վերջինիս սուբյեկտը այն իրավագիտակից խմբերն են, անհատները, կոլեկտիվները և վերջապես հասարակությունը, որոնք զգում են քաղաքացիների իրավունքների և ազատությունների անբավարար վիճակը և պայքարում են դրանց վերականգնման համար:

Վերջին շրջանում Հայաստանում ևս կարելի է նկատել քաղաքացիական անհնազանդության փորձեր, որոնք երբեմն հասնում են իրենց նպատակին, քանի որ քաղաքացիների որոշ զանգվածի՝ հիմնականում երիտասարդների մոտ այսօր ձևավորվում է ժողովրդավարական իրավագիտակցության պատշաճ մակարդակ սեփական իրավունքների, ազատությունների, շահերի պաշտպանության և պայքարի համար:

Քաղաքացիական անհնազանդությունը կարող է առաջանալ տարբեր ոլորտներում առկա խնդիրների պատճառով՝ իրավական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային, որոնք հանգեցնում են հասարակական տարատեսակ խեղումների և

---

[122]**Рязанцев С.** Духовно-нравственные основания правосознания в философии права И.А. Ильина (часть автореферата), Тула, 2008, 139 с.,http://www.dissercat.com/content/dukhovno-nravstvennye-osnovaniya-pravosoznaniya-v-filosofii-prava-ia-ilina#ixzz2xQazoImM /31.03.2014/.

ստեղծում քաղաքացիական դիմադրության նախադրյալներ:[123] Քաղաքացիների նմանատիպ ակտիվությունը նախ և առաջ հենվում է սահմանադրական երաշխիքների վրա՝ խոսքի ազատություն, միավորումներ կազմելու ազատություն, սեփական պահանջների ներկայացում, կազմակերպական բնույթի գործունեության առավել առաջանցիկ ձևերի ստեղծում և այլն: Այն քաղաքացիները, ովքեր գիտակցում են վերը նշված նորմերի անհրաժեշտությունը և կարևորությունը ժողովրդավարական հասարակության կայացման և կենսագործունեության համար, առավելապես օժտված են քաղաքացիական անհնազանդության ներուժով:

Փաստորեն, քաղաքացիական անհնազանդությունը քաղաքացիական իրավունքների և ազատությունների իրավական նորմի որոշակի զենեզիսն է որպես նորմաստեղծ գործոն: Այս ամենը վկայում է իրավագիտակցության դերի և նշանակության կարևորության մասին, առանց որի քաղաքացիական անհնազանդությունը կզրկվի իր ամենակարևոր՝ այն է իրավական իմաստավորումից:

Քաղաքական համակարգի գործառնության համար կարևոր են նաև իրավական նորմերը, քանի որ իրավական համակարգի ոչ արդյունավետ գործառնությունը պայմանավորում է նաև քաղաքական համակարգի աղճատումը. վերջինս ևս կորցնում է իր ինստիտուցիոնալ կարգավիճակը: Այս ամենը ի հայտ է գալիս ոչ ժողովրդավարական համակարգերում և ցածր իրավագիտակցության պայմաններում, երբ որոշումներն ընդունվում են ոչ թե իրավական, այլ կամայական հիմքերով:

Քաղաքականության ոլորտում իրականացված բարեփոխումները չեն կարող հանգեցնել դրական արդյունքների, եթե իրավական համակարգի ոչ կոմպետենտությունը աղավաղում է այդ բոլոր գործընթացները: Հետևաբար՝ հարկ է բարեփոխել ոչ միայն իրավական, այլև քաղաքական ինստիտուտները, ինչպես նաև այն միջոցները, որոնց օգնությամբ իրացվում են քաղաքական և իրավական նորմերը:

---

[123] **Деметрадзе М.**Политико-правовые аспектыгражданского неповиновениякак способ обеспечения правовой ответственности государства передобществом/ с. 4. *Электронная библиотека «Гражданское общество».* http://www.civisbook.ru/files/File/Demetr_pol-prav.pdf /28.03.2014/.

Միայն բարձր իրավագիտակցության ձևավորման պայմաններում է հնարավոր դառնում վերը նշված բարեփոխումների արդյունավետ իրականացումը: Հակառակ դեպքում արդեն քաղաքականության անարդյունավետ գործառնությանը կարող են բնորոշ լինել հետևյալ տարրերը՝ քաղաքական գործիչների պատասխանատվության, հստակ քաղաքական ծրագրերի և դրանց իրականացման, հասարակության և պետության միջև պայմանագրային սկզբունքների բացակայությունը, ինչպես նաև իրականացվող քաղաքական կուրսի անհամապատասխանությունը հասարակական շահին և պահանջներին:[124]

Այսպիսի իրավիճակը խախտում է ոչ միայն քաղաքացիների իրավունքների և ազատությունների համընդհանուր սկզբունքները, այլև նրանց սահմանադրական, սոցիալական, տնտեսական, մշակութային իրավունքները և ազատությունները, ինչի արդյունքում պետական ապարատը չի հետևում իր կողմից ստանձնված պատասատխանատվությանը, չի համարվում նշված իրավունքների երաշխավորը և խոչընդոտում է դրանց ապահովմանը: Այս ամենը քաղաքացիներին օրինական իրավունք է տալիս իրականացնել քաղաքացիական անհնազանդություն, քանի որ նրանք, գիտակցելով իրենց իրավունքների ոտնահարման փաստը և դրանց վերականգնման անհրաժեշտությունը, սկսում են ինքնակազմակերպման սկզբունքով պայքարել հանուն դրանց պաշտպանության:

Անարդյունավետ տեղեկատվական քաղաքականության դեպքում ԶԼՄ-ների գործառնությունն ուղղված է ոչ թե հասարակության կայունության ապահովմանը և քաղաքացիների կենսագործունեության սոցիալ-մշակութային խնդիրների վերհանմանը, այլ նրանց մանիպուլյացիայի ենթարկելուն: Այս ամենը ԶԼՄ-ների նկատմամբ ձևավորում է

[124]**Деметрадзе М.**Политико-правовые аспектыгражданского неповиновениякак способ обеспечения правовой ответственности государства передобществом/ с.18. *Электронная библиотека «Гражданское общество».* http://www.civisbook.ru/files/File/Demetr_pol-prav.pdf /28.03.2014/.

անվստահություն, քանի որ նրանք վերածվում են իշխանության գործիքի՝ դառնալով քաղաքացիական անհնազանդության առաջացման օրինական աղբյուր:[125]

Այդպիսի օրինակներ կարելի է գտնել նաև մեր իրականության մեջ: Բնապահպանական քաղաքականության թերի գործառնության և բնապահպանական նորմերի խախտման հետևանքով այսօր Հայաստանում ձևավորվել և ակտիվ գործում են բազմաթիվ քաղաքացիական նախաձեռնություններ, որոնց նպատակը մարդկանց՝ առողջ բնապահպանական միջավայրում ապրելու իրավունքի պաշտպանությունն է: Այդ ակտիվիստներն առանձնանում են իրենց բարձր իրավագիտակցությամբ և իրենց պայքարը իրականացնում են ժողովրդավարական հասարակությանը հատուկ իրավական պայքարի շրջանակներում: Բնապահպան ակտիվիստները պայքարել և պայքարում են Թեղուտի, Ամուլսարի, Թռչկանի, Մաշտոցի պուրակի, հանքարդյունաբերության և բնապահպանական այլ խնդրիների համար, մշակութային ոլորտի ակտիվիստները պայքարում էին Փակ շուկայի, այլ մշակութային արժեքների համար: Քաղաքացիական ակտիվության այս բոլոր ձևերը վկայում են պայքարող ակտիվիստների բարձր իրավագիտակցության մասին, քանի որ միայն իրավագիտակցության այսպիսի մակարդակ ունեցող քաղաքացին է ի զորու հետամուտ լինել իր խաթարված իրավունքների վերականգնմանը:

Պետության և հասարակության միջև ինտեգրատիվ գործառույթը ապահովում է նրանց միջև գործընկերային հարաբերությունները՝ հիմնվելով ազատական-ժողովրդավարական արժեքների վրա: Տվյալ գործառույթի թերացումը հանգեցնում է հակառակ ազդեցության՝ ապաինտեգրատիվ գործառույթի, որի դեպքում ընդունվող օրենքերը, իրականացվող քաղաքական գործընթացները որևէ կապ չունեն քաղաքացիների ընդհանուր շահերի, իրավունքների և ազատությունների հետ: Տեղակատվության փոխանակումը կրում է պատվիրված բնույթ, մշտապես ստեղծվում է ներքին կամ

---

[125]**Деметрадзе М.**Политико-правовые аспектыгражданского неповиновениякак способ обеспечения правовой ответственности государства передобществом/ с. 18. *Электронная библиотека «Гражданское общество».* http://www.civisbook.ru/files/File/Demetr_pol-prav.pdf /28.03.2014/.

արտաքին թշնամու կերպար, հաշվի չի առնվում քաղաքացիների՝ իրենց սոցիալական խնդիրները լուծելու շահագրգռվածությունը: Պետության և հասարակության միջև առաջացած դատարկ տարածությունը լրացվում է այնպիսի տեղեկատվությամբ, որի նպատակը քաղաքացիների ուշադրության շեղումն է սոցիալական խնդիրներից և այլն:[126]

Երբ պետությունը խախտում է իրավունքը և չի վարում քաղաքացիների շահերից բխող քաղաքականություն, ապա այս դեպքում քաղաքացիական անհնազանդությունը կարելի է համարել լեգիտիմ, քանի որ քաղաքացիներն իրավունք ունեն պաշտպանելու իրենց իրավունքները, որոնք, անխոս, խախտվում են պետության կողմից: Իսկ քաղաքացիներին անհնազանդության դրդող ուժը նրանց իրավագիտակցությունն է, որի առկայության դեպքում է միայն հնարավոր իրապես պայքարել պետության կողմից խախտված հասարակական պայմանագրի ապահովման համար:

Հարկ է ընդգծել, որ քաղաքացիական անհնազանդությունը բարձր քաղաքական մշակույթ և բարձր իրավագիտակցություն ունեցող քաղաքացիների իրավական բողոքի հավաքական արտահայտությունն է, որը նպաստում է պետության և հասարակության միջև խաթարված կապի, սոցիալական արդարության վերականգնմանը և անհավասարության մեղմմանը:

Քաղաքացիական անհնազանդությունը կարող է դրսևորվել մի քանի ձևերով, որոնցից են ցույցերը՝ որպես քաղաքական համակարգի վրա ճնշում գործադրելու և դրան հակազդելու միջոց: Ցույցերն իրենց հերթին կարող են ունենալ դրսևորման տարբեր ձևեր՝ զանգվածային երթեր, բոյկոտ, հասարակական շինությունների գրավում և այլն: Ցույցի շրջանակներում մարդիկ կարող են փակել փողոցները, շինությունները և այլն, որոնք հիմնականում «ինքնապաշտպանական» բնույթի գործողություններ են:[127] ՀՀ-ում վերջին շրջանում կարելի է նկատել քաղաքացիների կողմից փողոցների փակման բազմաթիվ օրինակներ: 2013 թ. մայիսին Արմավիրի մարզում որոշ գյուղերի բնակիչներ փակել էին Երևան-Արմավիր մայրուղին՝ պահանջելով պետությունից փոխհատուցել կարկուտի

---

[126] **Деметрадзе М.** Политико-правовые аспектыгражданского неповиновения.Полис, N 4, М., 2007, с. 93.

[127] **Жиро Т.** Политология. Пер. с полского, изд. Гуманитарный центр, Хар., 2006, с. 97.

պառճառով իրենց հասցված գյուղատնտեսական վնասը:[128] 2014 թ. մարտին նույնը տեղի ունեցավ Արագածոտնի մարզում, որտեղ բնակիչները, փակելով Երևան-Ապարան ճանապարհը, պահանջում էին դադարեցնել ՀԷԿ-ի կառուցման շինաշխատանքները:[129] Նշենք, որ քաղաքացիական անհնազանդության վերը նշված փորձերը մասամբ ունեցել են դրական արդյունքներ, քանի որ պետությունը մասնակիորեն բավարարել է բնակիչների պահանջները:

Դատական քննությունը ևս կարող է դառնալ քաղաքացիական անհնազանդության ինստիտուտի ձևերից մեկը: Դատական բողոքարկումը որոշակի գործողությունների կամ քաղաքական նորմերի վերաբերյալ դժգոհության արտահայտման մեթոդ է, որն օգտագործվում է որոշ խմբերի կողմից քաղաքական գործընթացների վրա ճնշում գործադրելու նպատակով: Դատական պատասխանատվության և քննության կարող են ներկայացվել ցանկացած պաշտոնյա, հիմնարկություն, օրենք, քաղաքական որոշում և գործընթաց (օրինակ՝ քվեարկության արդյունքները), որոնք չեն արտահայտում քաղաքացիների շահերը և կատարում են հակաիրավական գործունեություն:[130] ՀՀ-ում ևս ընտրությունների արդյունքները վիճարկվել են դատական կարգով: 2013 թ. ՀՀ նախագահի ընտրություններից հետո Ր. Հովհաննիսյանը դիմեց Սահմանադրական դատարան՝ նախագահական ընտրությունների վերաբերյալ ԿԸՀ-ի ներկայացրած արդյունքները չեղյալ հայտարարելու պահանջով,[131] սակայն արդյունքում պահանջը չբավարարվեց, և ընտրության արդյունքները չփոփոխվեցին:

Քաղաքացիական անհնազանդության ուժը նրանում է, որ այն ապահովվում է քաղաքացիների կողմից իշխանության նկատմամբ ճնշումը հասարակության և

---

[128] *1. Արմավիրցիները կարկուտի հասցրած վնասի համաչափ փոխհատուցում են պահանջում*, /20.05.2013/, http://www.oratert.com, *2. Կարկուտից տուժած արմավիրցիները պահանջում են սառեցնել վարկերը*, /17.05.2013/, http://new.ilur.am/, 3. *ԱրմավիրցիներըփակելենճանապարհըդեպիԵրևան*, /20.05.2013/, http://emedia.am.

[129] *Լարված իրավիճակ Արագածոտնի մարզում. գյուղացիները կրկին փակել են ճանապարհը*, /14.03.2014/, http://m.news.am/arm/news/198933.html.

[130] **Жиро Т.** Политология. Пер. с полского, изд. Гуманитарный центр, Хар., 2006, с. 96-97.

[131] *Ր. Հովհաննիսյանը դիմել է Սահմանադրական դատարան*, pressing.am/view_post.php?id=1726/04.03.2013/.

իշխանության միջև ուղիղ, հետադարձ և հորիզոնական կապերի միջոցով: Հենց այս ձևն է բնորոշում քաղաքացիականության սոցիալական բաղադրիչը:[132]

Քաղաքացիականության սոցիալական բաղադրիչը, որի հիմքում սոցիալական իրավունքների գիտակցման և դրանց պաշտպանության անհրաժեշտությունն է, իր դրսևորումն ունեցավ նաև հայ իրականության մեջ: Վերջին շրջանում մեր հասարակության մեջ քաղաքացիական անհնազանդության փորձերն ավելի հաճախակի են դարձել: Վերը նշված տեսական մոտեցումների համաձայն՝ դրանք կարող են պայմանավորված լինել պետության կողմից հասարակության լայն զանգվածների շահերին և պահանջներին ոչ համարժեք քաղաքականությամբ: Քաղաքացիական անհնազանդության փորձերից մի քանիսն արդեն իրենց ընդհանուր գծերով ներկայացվել են, սակայն իր կազմակերպվածության, գործառնության, տեխնոլոգիաների ընտրության և կիրառման տեսանկյունից կարելի է առանձնացնել «Դեմ եմ» քաղաքացիական շարժումը, որը, ձևավորվելով 2013 թ. հոկտեմբերին,[133] շարունակում է իր քաղաքացիական անհնազանդության պայքարը՝ դեմ լինելով կենսաթոշակային նոր համակարգին: Այս շարժման հիմնական պահանջը «Կուտակային կենսաթոշակների մասին ՀՀ օրենքում»[134] առկա «պարտադիր» բաղադրիչի վերացումն է:

«Դեմ եմ» շարժումն իր քաղաքացիական անհնազանդության իրականացման համար օգտագործում է տեղեկատվական, հավաքագրման, սոցիալականացման համար անհրաժեշտ բոլոր միջոցները՝ համացանց, թռուցիկներ, պաստառներ, տարբեր ֆլեշ մոբեր, հանրահավաքներ, երթեր, ցույցեր, որոնք ունեն իրավական հիմնավորում և համապատասխանում են Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված մարդու իրավունքների և ազատությունների սկզբունքներին: Շարժման կողմից բողոքի արտահայտման եղանակները դուրս չեն գալիս իրավական դաշտից, ուստի պետական

---

[132] **Деметрадзе М.**Политико-правовые аспектыгражданского неповиновениякак способ обеспечения правовой ответственности государства передобществом/ с. 32-33. *Электронная библиотека «Гражданское общество».* http://www.civisbook.ru/files/File/Demetr_pol-prav.pdf /28.03.2014/.

[133] «Դեմ եմ» շարժման կայքէջ՝ http://dem.am/page/47/ /31.03.2014/.

[134] Կուտակային կենսաթոշակների մասին ՀՀ օրենք, http://www.arlis.am/documentview.aspx?docID=64546 /31.03.2014/.

մարմինները միջամտում են այդ ակցիաներին նվազագույն չափով և չեն կարողանում այն ի սպառ ճնշել: Քաղաքացիական անհնազանդության դրսևորման այսպիսի ճանապարհը խոսում է շարժման կազմակերպիչների և հետևորդների բարձր իրավագիտակցության մասին, քանի որ ժողովրդավարական հասարակություններում քաղաքական ակտիվությունը կարող է լինել արդյունավետ, եթե հիմնվում է իրավունքի գիտակցման և դրա պաշտպանության համար իրականացվող պայքարի վրա:

Հարկ է նկատել, որ, ի տարբերություն այլ քաղաքացիական նախաձեռնությունների, «Դեմ եմ» շարժումն առանձնանում է իր հասարակական հնչեղությամբ և հանդիսանում է քաղաքացիական անհնազանդության առավել տիպային և արդյունավետ օրինակ: Այս շարժումն արդի քաղաքական տեխնոլոգիաների կիրառմամբ ստեղծել է բոլոր անհրաժեշտ պայմանները հասարակության հետ տեղեկատվության ազատ և ուղղակի փոխանակման համար՝ առանձին կայքէջ, էջեր տարբեր սոցիալական ցանցերում և այլն: Գիտակցելով շարժման ընդհանուր վարքագծի իրավական հետևանքները՝ տվյալ քաղաքացիական նախաձեռնությունը իրականացնում է պետական մարմինների վրա առավել ազդեցիկ և միևնույն ժամանակ առավել մեղմ իրավախախտում պարունակող գործողություններ, որոնք սահմանափակվում են միայն վարչական տույժերով (օրինակ՝ մեքենաների երթեր ձայնային ազդանշանի ուղեկցությամբ): Կատարվող ակցիաների իրավական հետևանքների գիտակցումը և այդ տեսանկյունից առավել արդյունավետ միջոցների ընտրությունը ևս խոսում են «Դեմ եմ» շարժման անդամների բարձր իրավագիտակցության մասին: Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ տվյալ շարժումը կարողացավ նաև իր ձայնը լսելի դարձնել օրենսդիր մարմնում, երբ խորհրդարանական ընդդիմադիր խմբակցություններն արտահերթ նիստ հրավիրեցին խնդրո առարկա օրենքի վերանայման պահանջով, որը, սակայն, բոյկոտեց խորհրդարանական մեծամասնությունը: Այնուամենայնիվ, քաղաքացիական անհնազանդությունը չնահանջեց և հետամուտ եղավ, որպեսզի օրենքի սահմանադրականության հարցը ընդդիմադիր խմբակցությունները բարձրացնեն Սահմանադրական դատարանում: Այս իրողությունը ցույց է տալիս, որ քաղաքացիական անհնազանդությունը որպես սուբյեկտ հանդիսանում է միջնորդ

հասարակության, քաղաքացիական հասարակության և պետության միջև: Այս տեսանկյունից կարելի է հիմնավորել տվյալ շարժման համապատասխանությունը քաղաքացիական անհնազանդության դրսևորման տեսական ձևերին, այսինքն՝ ցույցեր, երթեր, բողոքի և իրազեկման ակցիաներ և վերջապես խնդրի բարձրացում պետության գերագույն դատական ատյանում: Ի դեպ՝ քաղաքացիական անհնազանդության հաջողություններից էր նաև ՍԴ-ի կողմից գործող օրենքի «պարտադիր» բաղադրիչի ժամանակավոր կասեցումը մինչև օրենքի սահմանադրականության հարցի որոշումը: Հետևապես՝ տվյալ շարժումը, իր հիմքում ունենալով հասարակության լայն շերտերի շահերի ներկայացման և պաշտպանության առաքելությունը և նրանց իրավունքների և ազատությունների գիտակցումը, կարողանում է հետամուտ լինել պետության և հասարակության միջև անմիջական կապի վերականգնմանը և ապահովմանը, որը շատ հաճախ խզվում է հենց պետության կողմից:

Հարկ է ընդգծել, որ շարժումը չի անձնավորում և չի քաղաքականացնում պայքարը՝ այն պահելով զուտ քաղաքացիների իրավական պահանջների դաշտում: Ըստ էության՝ պայքարը ոչ թե քաղաքական է՝ պայքար իշխանության համար, այլ ուղղված է բացառապես տվյալ օրենքի «պարտադիր» բաղադրիչի դեմ: Հետևապես՝ նման մարտավարության ընտրությունը և դրա իրականացումը շարժումը դարձնում են պակաս խոցելի: Շարժումը, ի տարբերություն ընդդիմադիր քաղաքական ուժերի, չի պահանջում պաշտոնյաների հեռացում կամ որևէ քաղաքական ինստիտուտի լուծարում: Նրա պահանջը խիստ իրավական է, այդ իսկ պատճառով նաև լեգիտիմ: Շարժման ճանաչումը հասարակության մեծամասնության կողմից նրան հաղորդում է լեգիտիմություն, ինչը ստիպում է իշխանությանը, այնուամենայնիվ, հաշվի նստել քաղաքացիական անհնազանդության հետ: Աղյունքում՝ նույնիսկ հանրապետության նախագահը նշեց, որ բնակչության 80 %-ը դժգոհ է կուտակային օրենքի «պարտադիր» բաղադրիչի մասին որոշումից,[135] սակայն այն կիրառվելու է: Գործադիր մարմնի կողմից ևս եղան

[135] Սերժ Սարգսյան. «Ամեն ինչ լավ է լինելու», http://www.azatutyun.am/content/article/25265207.html /15.02.2014/.

երկխոսության առաջարկներ,[136] սակայն դրանք մերժվեցին քննարկման համար անհրաժեշտ պահանջները հստակ արտահայտող օրակարգի բացակայության պատճառով:

Կարևոր է ընդունել այն փաստը, որ երբ որևէ քաղաքացիական անհնազանդություն կազմակերպվում է բարձր իրավագիտակցության և հասուն քաղաքական մշակույթի հիմքերով, այլ լինում է առավել արդյունավետ: Ասվածի վառ ապացույցը Մ. Գանդիի կամ Մ. Լյութեր Քինգի պայքարի օրինակներն են: «Դեմ եմ» շարժումը ևս որդեգրել է քաղաքացիական պայքարի իրավական, լեգիտիմ և խաղաղ ճանապարհը, որի դեպքում հաջողության հասնելու հավանականությունը ավելի է մեծանում: Իսկ քաղաքագիտության տեսանկյունից քաղաքական համակարգի արդյունավետ գործառնության համար անհրաժեշտ է, որպեսզի իշխանությունը արձագանքի հասարակության պահանջներին, ինչը հստակ ներկայացված է Իսթոնի՝ քաղաքական համակարգի մոդելում:[137] Ուստի քաղաքական իշխանության կողմից քաղաքացիական անհնազանդության հետ փոխզիջման չգնալը կարող է ավելի խորացնել «Դեմ եմ» շարժման պայքարը և հանգեցնել անհնազանդության ավելի կտրուկ դրսևորումների, ինպիսիք են՝ տուրքերի և հարկերի վճարումներից հրաժարումը, զանգվածային գործադուլները, բազմաթիվ ծառայություններից չօգտվելը և այլն:

Այսպիսով՝ կարելի է միանշանակ պնդել, որ քաղաքացիական անհնազանդությունը և իրավագիտակցությունը սերտ փոխկապակցված հասարակական երևույթներ են, որոնց համատեղ և հավասարարժեք կիրառումը քաղաքական գործընթացներում կարող է հանգեցնել հասարակական առաջընթացի: Այս երկու հասկացությունների սերտ կապն առավել արդյունավետ դրսևորվում է ժողովրդավարական հասարակություններում, որտեղ քաղաքացիական անհնազանդությունը, հիմնվելով քաղաքացիների հավաքական իրավագիտակցության վրա, կարող է հասնել իր արդյունքին խաղաղ միջոցներով: Մեր երկրում այս ինստիտուտի գործառնությունը, միանշանակ, ժողովրդավարության

---

[136] Վարչապետը «Դեմ եմ»-ին հրավիրում է երկխոսության, http://www.a1plus.am/1305545.html /19.03.2014/.

[137] **Хейвуд Э.** Политология. Учебник для студентов вузов /Пер. с англ. под ред. Г.Г. Водолазова, В.Ю. Вельского. М., ЮНИТИ-ДАНА, 2005, (Серия «Зарубежный учебник»),с. 24.

ձեռքբերում է, քանի որ միայն ազատական պայմաններում համապատասխան կրթությունն է հնարավորություն տալիս ձևավորել իսկապես պահանջատեր քաղաքացի, ով գիտի իր կոչումը, ճանաչում է իր իրավունքները և ազատությունները, ունի համապատասխան իրավագիտակցություն և պատրաստ է այն դրսևորել քաղաքացիական անհնազանդության միջոցով, եթե պետությունը անտեսում կամ ոտնահարում է նրա շահերը, իրավունքները և ազատությունները: Հետևապես՝ վերջին շրջանում ՀՀ-ում տեղի ունեցող քաղաքացիական անհնազանդության ակտերը կարելի է որակել որպես դրական քաղաքական զարգացումներ՝ հանուն իրավական պետության ձևավորման, որտեղ քաղաքացու շահը գերակա է, իսկ իշխանությունը սահմանափակվում է իրավունքով:

## 2.3 Քաղաքացիական հասարակության ձևավորման գործում իրավագիտակցության դերը

Քաղաքացիական հասարակությունը ազատ ու հավասար անհատների հարաբերությունների տնտեսական, հոգևոր, մշակութային, բարոյական, կրոնական և այլ բազմատեսակությունն է շուկայական հարաբերությունների և իրավական-ժողովրդավարական պետության պայմաններում: Քաղաքացիական հասարակությունը պատմականորեն ձևավորված և արմատացած ինքնակառավարմամբ դրսևորումների և բարձր իրավագիտակցությամբ օժտված մարդկանց ամբողջականություն է, որը ստեղծվել է քաղաքացիների կողմից սեփական շահերի պաշտպանության նպատակով,[138] և պաշտպանված է ավանդույթներով, բարոյական նորմերով և օրենքով:[139]

Քաղաքացիական հասարակությունը ենթադրում է բազմաթիվ և տարատեսակ անկախ միությունների, կազմակերպությունների և այլ հաստատությունների գոյություն, որոնք արդյունավետ հիմք են ծառայում պետական մարմինների ոտնձգությունների դեմ

---

[138]**Пузенцова Ю.** вопросу о прогнозах развития гражданскогообщества в современной России. Известия высших учебных заведений.Поволжский регион. 2013, № 1, с. 44. http://izvuz_on.pnzgu.ru/files/izvuz_on.pnzgu.ru/5113.pdf /31.03.2014/.

[139]**Марзак Г.** К вопросу о взаимодействии гражданского общества и правового государства. Новый юридический журнал. М., № 3, 2013, с 12-13. http://www.new.law-books.ru/index.php?page=prava-cheloveka /11.02.2014/.

պայքարի համար։ «Քաղաքացիական հասարակության» հայեցակարգը ենթադրում է իշխանությունից անկախ և հասարակության զարգացման համար հիմք հանդիսացող մարդկանց ակտիվության բոլոր տեսակի օրինական ձևերի իրականացումը և փոխկապվածությունը։[140] Այդ ինստիտուտները մարդկանց կազմակերպված միություններն են, որոնց գործողություններն ուղղված են որոշակի նպատակների իրականացմանը, սեփական կամ ընդհանուր խնդիրների և շահերի իրացմանը։ Առաջին հերթին դրանք քաղաքացիների կոլեկտիվ գործողություններով կոնսոլիդացված ոչ կառավարական կազմակերպություններն են, որոնց նաև անվանում են քաղաքացիական նախաձեռնություններ։

Այսպիսի հասարակության հիմնական հատկանիշը անհատի տնտեսական, քաղաքական և հոգևոր ազատությունն է։ Քաղաքացիական հասարակությունը կենսունակ է միայն սոցիալական բոլոր բնագավառներում անհատի ակտիվ վարքագծի և համապատասխան իրավագիտակցության առկայության պայմաններում։

Իր հերթին, պետությունը կոչված է պաշտպանելու օրենքի գերակայությունը, պայքարելու հանցավորության դեմ, ինչպես նաև քաղաքացիների համար սեփական իրավունքներն ու ազատությունները ազատ և առանց խոչընդոտի իրացնելու անհրաժեշտ պայմաններ ստեղծելու համար։

Հարկ է սակայն նշել, որ քաղաքացիական հասարակության գոյության և արդյունավետ գործառնության համար անհրաժեշտ են ոչ միայն պետությունից անկախ քաղաքական և հասարակական կազմակերպություններ, այլև դրանց կարողությունը և հնարավորությունը արդյունավետ կերպով համագործակցելու իշխանության մարմինների հետ։ Ընդ որում՝ ակտիվիստական մշակույթի տեսակարար կշռի մեխանիկական աճը պարզապես այդ ակտիվիստների կամ նրանց խմբերի և կողմնակիցների թվի աճով բացատրելը վտանգավոր է, քանի որ դա իրականում չի փոխում քաղաքական գործընթացի

[140]**Рябев В.** К вопросу о взаимодействии государства и гражданского общества в современной России. Журнал социологии и социальной антропологии. Т. VIII, № 2, СПб., 2005, с. 5-21. http://www.old.jourssa.ru/2005/2/1aRiabev.pdf /11.01.2014/.

բնույթը:[141] Առանց քաղաքացիական հասարակության գործառնության սահմանների ինստիտուցիոնալացման, առանց հասարակական խմբերի և առաջնորդների պատրաստակամության հետևելու ընդունված խաղի կանոններին, առանց իրավագիտակցության համապատասխան մակարդակի, հասարակության համար իշխանության վրա ազդելու ուղիների բացակայության պայմաններում ժողովրդավարական քաղաքական համակարգի գործունեությունը կարող է կաթվածահար լինել:

Ջ. Գրեի կարծիքով՝ քաղաքացիական հասարակությունը ոչ կառավարական կազմակերպությունների ամբողջություն է և ունի բավականաչափ ներուժ հակակշռելու պետությանը, չունի սեփական շահերի իրացման համար պետության երաշխավորության կարիք և ունակ է պետությանը թույլ չտալ իշխելու իր վրա:[142] Կարծում ենք՝ քաղաքացիական հասարակության դերի և հնարավորությունների վերաբերյալ Է. Գրեի այս բացարձականացված տեսակետն այնքան էլ հիմնավորված չէ:

Քաղաքացիական հասարակությունը զարգանում կամ առաջանում է ազգային պետության սահմաններում: Ազգությունը մարդկանց տալիս է ընդհանուր ինքնություն, ինչը նրանց հնարավորություն է տալիս համագործակցաբար ստեղծել սեփական աշխարհը: Իսկ քաղաքացիությունը նրանց համար պարզապես պրակտիկ միջոց է այդ ամենն իրացնելու համար:[143] Այս տեսակետը հիմնավորող ևս մեկ փաստարկ կարող է դիտարկվել Ս. Բերմանի տեսակետը, ով նշում է, որ ուժեղ և ակտիվ քաղաքացիական հասարակության առկայությունը դեռևս բավարար չէ ժողովրդավարության ամրապնդման հաջողության համար, քանի որ, արտահայտելով և պաշտպանելով քաղաքացիների շահերը, նրանց իրավունքները, քաղաքացիական հասարակության ինստիտուտները միայնակ չեն կարող բավարարել հասարակության մեծ մասի կարիքները:[144]

[141]**Рябев В.** Гражданское общество современной России: проблемыи перспективы становления.ВестникМГТУ, М., том 13, №2, 2010, с. 441.

[142]**Gray J.**Our Way. In the “Conditions of Liberty: Civil Society and its Rivals” by edit. ofGellner E. L. Hamish Hamilton, 1994, p. 8-9. http://www.lrb.co.uk/v16/n18/john-gray/our-way /22.03.2014/.

[143]**Жиро Т.**Политология. Пер. с полского. Изд-во Гуманитарный центр, Хар., 2006, с. 42.

[144]**Berman S.** Civil Society and the Collapse of the Weimar Republic. World Politics, 1997, vol. 49, p. 426.

90-ականների սկզբներին սկսեցին լույս տեսնել «Քաղաքացիական հասարակություն» բազմաբովանդակ հասկացությամբ բազմաքանակ ժողովածուներ: Ինչպես պարզվեց՝ «քաղաքացիական հասարակությունը» շատ ընդհանուր, նույնիսկ վերացական եզրույթներից մեկն է: Պարզվում է՝ ցանկացած սոցիալական համակարգի ցանկացած թերություն կարելի է բացատրել թույլ քաղաքացիական հասարակության առկայությամբ: Նույն կերպ այդ թերությունները կարելի է բացատրել բարքերի անկումով, ազգային քաղաքական մշակույթի առանձնահատկություններով և այլն: Այս շարքը կարելի է շարունակել:[145]

Ամեն ինչ «քաղաքացիական հասարակության» հայեցակարգի միջոցով բացատրելու տարածված միտումը հանգեցնում է երևույթների և իրադարձությունների ամբողջական և ճշգրիտ ընկալման համար խոչընդոտների:[146]

Որոշ հեղինակներ նույնիսկ կարծում են, որ քաղաքացիական ակտիվությունը, ընդհակառակը, հաճախ նպաստում է հասարակության հատվածականացմանը և խորացնում հակասությունները, այլ ոչ թե համախմբում հասարակությունը: Եվ իսկապես, բազմաթիվ հետխորհրդային երկրներում հասարակությունն այսօր ավելի շատ հատվածականացված է, քան պլյուրալիստական: Քաղաքացիական հասարակության ակտիվությունը չի կարող հիմք դառնալ ազգային ընդհանրության և միասնության ձևավորման համար: Քաղաքացիական ակտիվությունը չի կարող ինքնին ծառայել որպես գործոն քաղաքական համախմբման և ընդհանուր շահի ձևավորման համար, որի կարիքն ունի հասարակությունը:[147] Դա կարող է անել միայն ուժեղ և արդյունավետ

---

http://isites.harvard.edu/fs/docs/icb.topic793411.files/Wk%2011_Nov%2012th/Berman_1997_Weimar_Civil_Society.pdf /29.03.2014/.

[145] **Гончаров В.** Гражданское общество как идеологема. Гражданское общество: первые шаги / Под редакцией А.Ю.Сунгурова. СПб., Норма, 1999, с. 34.

[146] Նույն տեղում, էջ 34.-35:

[147] **Berman S.** Civil Society and the Collapse of the Weimar Republic. World Politics, 1997, vol. 49, p. 426. http://isites.harvard.edu/fs/docs/icb.topic793411.files/Wk%2011_Nov%2012th/Berman_1997_Weimar_Civil_Society.pdf /29.03.2014/.

պետությունը,[148]և ոչինչ այնքան չի վնասում քաղաքացիական հասարակության կառույցներին, որքան լեթարգիական պետությունը:[149]

Այն պատկերացումները, որ անկախ կազմակերպություններում ընդգրկված զանգվածները, որոնք պայքարում են իրենց շահերի համար, կարող են նմանատիպ քաղաքացիական ներգրավվածությամբ ձևավորել ժողովրդավարական քաղաքացիական հասարակություն՝ առաջնորդվելով իրավական ժողովրդավարական պետության սկզբունքներով, սխալ պատկերացում է: Հայտնի ամերիկացի սոցիոլոգ Գ. Վալերշտայնն այս հարցում ունի շատ ավելի կտրուկ մոտեցում, ըստ որի՝ քաղաքացիական հասարակությունը կարող է գոյություն ունենալ միայն այնքանով, որքանով գոյություն ունի պետությունը, և միայն ուժեղ պետությունն է, որ կարող է նպաստել քաղաքացիական հասարակությանը, քանի որ, ըստ էության, քաղաքացիական հասարակություն նշանակում է ոչ այլ ինչ, քան պետության շրջանակներում սեփական նպատակների և շահերի համար պայքարող քաղաքացիների կազմակերպություն, որոնք պետության հետ ունեն անուղղակի քաղաքական հարաբերություններ:[150] Սակայն պետք է նշել, որ քաղաքացիական հասարակությունը ծառայում է որպես զսպող գործոն նաև պետության կողմից պոտենցիալ կազմաքանդող ուժի դեմ և խափանում է վտանգավոր դասերի առաջացումը:[151]

Այս առումով՝ Ս. Բերմանն առաջ է քաշում մի հարց, թե որ դեպքում է քաղաքացիական հասարակության ակտիվությունը արտադրում սոցիալական կապիտալ և որ դեպքում ոչ սոցիալական կապիտալ: Նրա կարծիքով՝ դա մեծապես կախված է քաղաքական համատեքստից: Եթե երկրի քաղաքական ինստիտուտները ունակ են վերահասցեագրել հասարակության դժգոհությունը, ապա այս պարագայում հասարակական կազմակերպությունները, ամենայն հավանականությամբ, կկատարեն

---

[148]**Линецкий А.**Институты гражданского общества в общественных трансформациях: теория и практика посткоммунистических стран. ПОЛИТЭКС, 2007.

http://www.politex.info/content/view/119/30/ /11.02.2014/.

[149]**Caroters Th.** Civil Society. Foreign Policy, Winter, 1999-2000, p. 26.

http://carnegieendowment.org/pdf/CivilSociety.pdf/29.03.2014/.

[150]**Валлерстайн И.** После либерализма: Пер. с англ. Под ред. Б. Ю. Кагарлицкого. М., Едиториал УРСС, 2003, с. 10.

[151]Նույնտեղում, էջ 10:

կայունության և ժողովրդավարության ամրապնդման գործառույթ: Իսկ եթե քաղաքական ինստիտուտները թույլ են կամ էլ գործող քաղաքական ռեժիմը արդյունավետ չէ կամ էլ ոչ լեգիտիմ է, ապա քաղաքացիական հասարակության ակտիվությունը կարող է լինել որպես այլընտրանք դժգոհ քաղաքացիների համար, և նման իրավիճակներում հասարակական կազմակերպությունները կարող են ոչնչացնել քաղաքական կայունությունը և ունենալ բացասական ազդեցություն ժողովրդավարության զարգացման վրա՝ խորացնելով սոցիալական դժգոհությունները և հակասությունները: Նման պայմաններում ուժեղացող քաղաքացիական հասարակությունը դառնում է քաղաքական ինստիտուտների ճգնաժամի պատճառ և վտանգում է քաղաքական կայունությունը և բուն ժողովրդավարությունը:[152]

Քաղաքացիական հասարակությունը մի կառույց է, որը զենետիկորեն և գործառնական իմաստով առաջացել է հասարակության և պետության հետ փոխգործակցության համար որպես ինստիտուտ, որը կոչված է վերահսկելու պետությանը և թույլ չտալու, որպեսզի պետությունը հասարակական կյանքում պլյուրալիզմը հանգեցնի բացառապես քաղաքական չափման: Սակայն պետության և քաղաքացիական հասարակության փոխգործակցությունն անընդհատ առաջացնում և վերարտադրում է նոր հակասություններ՝ կապված քաղաքացիական հասարակության շահերի պլյուրալիզմի և պետական ինքնիշխանության (մոնոլիտ) միջև:[153] Այս հակասությունը, որպես հետևանք, գրեթե միշտ ենթադրում է որոշակի կոնֆլիկտ: Եվ այսօր շատ կարևոր է ուսումնասիրել կոնֆլիկտի դերը պետության և քաղաքացիական հասարակության համագործակցության համակարգում գործառնական իմաստով, որը թույլ է տալիս այս երկու սուբյեկտներին իրացնել իրենց ներուժը՝ կանխելու հասարակության լճացումը և հակազդելու քաղաքական համակարգի ավտորիտար միտումներին: Վերջին տարիներին ավելի ու ավելի է սրվել քաղաքական իշխանության և հասարակության պլյուրալիստական շահերի միջև կոնֆլիկտը: Քաղաքական իշխանության մոնոպոլիզացումը բողոքը տեղափոխում է փողոց.

---

[152]**Berman S.** Civil Society and the Collapse of the Weimar Republic. World Politics, 1997, vol. 49, p. 427. http://isites.harvard.edu/fs/docs/icb.topic793411.files/Wk%2011_Nov%2012th/Berman_1997_Weimar_Civil_Society.pdf /29.03.2014/.

[153]**Никовская Л.** Трансформация в России в контексте социального конфликта. М., В 2-х ч. Ч. 2. Ключ-С, 2004, с. 432-442.

այդպիսով իշխանության և «ընդվզող փողոցի» միջև առաջանում են էլ ավելի սուր կոնֆլիկտներ:

Ի՞նչ է կոնֆլիկտը: Կոնֆլիկտը սոցիալական փոխգործակցության հատուկ ձև է, որը կարող է տեղի ունենալ առճակատման ձևով. սա կոնֆլիկտի ապակառուցողական դրսևորումն է: Կոնֆլիկտը կարող է տեղի ունենալ համագործակցության, ներդաշնակության, գործընկերության ձևով, որը ներկայացնում է արդեն փոխգործակցության կառուցողական ձևը: Եվ եթե քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները պետության հետ փոխգործակցում են ապակառուցողական կոնֆլիկտի ձևաչափով, ապա պետությունը պարտավոր է վարչական կամ նույնիսկ ուժային ռեսուրսների գործադրմամբ կայունացնել և հավասարակշռել հասարակությունը նրա բնականոն կենսագործունեությունն ապահովելու համար:[154] Վայնշտեյնի կարծիքով՝ Ռուսաստանում տարբեր հասարակական կազմակերպությունների առաջնորդները կարծում են, որ պայքարը հանուն քաղաքացիական հասարակության միաժամանակ պետք է լինի պայքար պետության դեմ, և որ քաղաքացիական հասարակության ամրապնդման և հասարակական-քաղաքական կյանքում նրա դերի ուժեղացման համար անհրաժեշտ է համապատասխանաբար պետական իշխանության ազդեցության նվազեցում:[155] Գիտական գրականության մեջ սա անվանում են խեղաթյուրված իրավագիտակցություն: Կարծում ենք՝ ապակառուցողական կոնֆլիկտը վտանգավոր է ոչ միայն պետության ներքին կայունության համար, այլև վտանգում է բուն քաղաքացիական հասարակության ազատ գործունեությունը: Քանի որ, այս պարագայում բնական են դառնում պետության ջանքերն՝ ուղղված քաղաքացիական հասարակության զարգացման վրա մասնակի «վերահսկողություն» իրականացնելու համար: Բացի այդ, հասարակական

[154]**Никовская Л.** Гражданское общество и протесты: что за ними стоит? Мониторинг общественного мнения, № 4 (110), М., 2012, с. 5-13.http://wciom.ru/fileadmin/Monitoring/110/2012_110_01_nikolskaya.pdf. /13.02.2014/.

[155]**Линецкий А.**Институты гражданского общества в общественных трансформациях: теория и практика посткоммунистических стран. ПОЛИТЭКС, 2007.http://www.politex.info/content/view/119/30/ /11.02.2014/.

կազմակերպությունների ինքնավար բնույթը չի բացառում երբեմն իշխանությունների համար դրանց գործողությունների անկանխատեսելի բնույթը:[156]

Իսկ եթե կառավարությունը և քաղաքացիական հասարակությունը երկխոսության մեջ են մտնում կառուցողական ձևաչափով, ապա նրանց միջև ձևավորվում և զարգանում է գործընկերությունը, ինչն էլ այսօր անվանում են սոցիալական գործընկերություն:[157]

Քաղաքագիտության մեջ կա տարածված տեսակետ, ըստ որի՝ երկրի՝ քաղաքական արդիականացման ճանապարհին ամենակարևոր ցուցանիշը քաղաքական ինստիտուտների շարքում օրենսդիր իշխանության գործունեությունն է: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ ժողովրդավարական պետություններում խորհրդարանը ներկայացնում է բնակչության բոլոր խմբերի շահերը, որոնք այդ հաստատության միջոցով հնարավորություն ունեն ազդելու որոշումների ընդունման գործընթացի վրա: Այսինքն՝ կարելի է ասել, որ խորհրդարանը ոչ միայն քաղաքական, այլև քաղաքացիական հասարակության ինստիտուտ է: Հայաստանի Հանրապետությունում սոցիալական կառուցվածքը չի համապատասխանում Ազգային Ժողովում ձևավորված սոցիալական կառուցվածքին, այսինքն՝ աղքատ հատվածը գրեթե ներկայացված չէ Ազգային Ժողովում. սա ակնհայտ հակասություն է և կարող է լուրջ բացասական հետևանքներ ունենալ:

Այս դեպքում ստացվում է այնպես, որ, կարծես թե, քաղաքական էլիտան ապրում է «իրեն համար», իսկ ժողովուրդը «իրեն համար»:[158]

Այստեղ վտանգը նրանում է, որ հասարակության այդ հատվածը կարող է այլևս հույսը չկապել պետական ինստիտուտների հետ: Արդյունքում՝ մասնակցությունը ընտրություններին կնվազի, և, հակառակը, կարող է մեծանալ մասնակցությունը

---

[156]**ՀովհաննիսյանՀ.** Հասարակական համակարգի զարգացման հիմնախնդիրները: Եր., Նորավանք, 2003, էջ 20:

[157]**Никовская Л.** Гражданское общество и протесты: что за ними стоит? Мониторинг общественного мнения, № 4 (110), М., 2012, с. 5-13.http://wciom.ru/fileadmin/Monitoring/110/2012_110_01_nikolskaya.pdf. /13.02.2014/.

[158]**ЛевинИ.** "Политический класс" и гражданскоеобщество в современной России. Под общ. ред. Т. И. М.,Заславской. 1997. с. 132-137.

քաղաքացիական նախաձեռնություններին: Սա նշանակում է, որ քաղաքական կամ քաղաքացիական գործընթացը տեղափոխվում է «փողոց», ինչն իր հետևանքները կարող է ունենալ: Այս պարագայում կարող է նկատվել քաղաքացիական նախաձեռնությունների կամ քաղաքացիական զանգվածային բողոքների մեխանիկական աճ, ինչի պայմաններում կարող է ստեղծվել տպավորություն, որ քաղաքացիական հասարակությունը կարծես թե ձևավորվել է կամ ընթանում է ճիշտ ուղղությամբ: Նշենք, որ սա շատ թյուր պատկերացում է և նույնիսկ՝ վտանգավոր: Չի կարելի քաղաքական կամ քաղաքացիական մշակույթը չափել բացառապես քաղաքացիների ակտիվության մակարդակով. պետք է հասկանալ, թե այդ ակտիվությունը ինչով է պայմանավորված:

Հանուն արդարության պետք է, իհարկե, նաև նշել, որ հասարակության մեջ ձևավորվող անհավասարությունը կապված է նաև սոցիալական ակտիվության և հասարակության առավել հաջողակ հատվածի՝ տնտեսական գործունեության մեջ ներգրավվածության աստիճանի հետ: Նրանց նյութական բարեկեցությունը հաճախ նրանց ընտրության և նրանց նախաձեռնողական վարքագծի արդյունք է:[159]

Ըստ Ի. Խալիի՝ ժամանակակից սոցիալ-տնտեսական անհավասարությունը պայմանավորված է անհատի ներքին հնարավորություններով (հոգեբանական, ֆիզիոլոգիական, տարիքային, մասնագիտական որակավորման մակարդակով) նոր պայմաններին հարմարվելու ունակություններով:[160] Այս ամենին պետք է ավելացնել իրավագիտակցության դերը: Բարձր իրավագիտակցություն ունեցող քաղաքացիները, որպես կանոն, առավել նախաձեռնողական են, նրանք առավելագույնս ընդգրկված են հասարակական-քաղաքական գործընթացներում: Հասարակության որոշ շերտերի մոտ ցածր իրավագիտակցությունը, միգուցե, պայմանավորված է անհատական և այլ շարժառիթներով: Օրինակ՝ ռուս հետազոտող Ս. Նեստերովան նշում է, որ նոր քաղաքական մշակույթի ձևավորման պայմաններում տեղի է ունենում քաղաքական

---

[159] **Козырева П.** Особенности социальной самоидентификации и субъективной мобильности. Россия реформирующаяся: Ежегодник-2003. Отв. ред. Л.М. Дробижева. М., Институт социологии РАН, 2003, с. 130-131.

[160] **Халий И.** Институты гражданского общества в современной России. К методологии изучения. **с.** 268. *Перепечатка с сайта Института социологии РАН* http://www.civisbook.ru/files/File/Khaliyy.pdf/05.05.2014 /.

վերաստցիալականացման գործընթաց: Հեղինակի կարծիքով՝ պետական պատերնալիզմը, որը նա համարում է ռուսական քաղաքական մշակույթի առանձնահատուկ գիծ, նպաստում է մարդկանց մոտ սեփական երկրի նկատմամբ պատասխանատվության բացակայությանը: Քաղաքացիական հասարակության կայացման դժվարությունը և մարդկանց մոտ ժողովրդավարական-քաղաքացիական իրավագիտակցության բացակայությունը կապված է տոտալիտարիզմի ժառանգության հետ և, առաջին հերթին, սոցիալական պատասխանատվության բացակայության հետ:[161] «Ժողովրդավարության արդյունավետ կենսագործունեության համար անհրաժեշտ է քաղաքացիների կոմպետենտության և իրավագիտակցության որոշակի մակարդակ:[162] Սակայն հարկ է նշել, որ համակարգային փոխակերպումը ապացուցում է, որ պատմական գործընթացը չի կարելի արհեստականորեն արագացնել. բնապատմական զարգացման օրենքները, որոնք հիմնված են աստիճանական փոփոխությունների վրա, հնարավոր չէ փոխել:[163] Մշակութային արդիականացման բնական ընթացքի արհեստական արագացումը մեծ սպառնալիք է հասարակության արմատական վերափոխման ճանապարհին: Այս իսկ պատճառով՝ ձևավորվող ակտիվ քաղաքացիականության մշակույթը դեռ երկար ժամանակ կարող է գոյակցել քաղաքական գործունեության ավանդական չափանիշների հետ՝ երբեմն միահյուսվելով դրանց, երբեմն էլ դիմակայելով դրանց: Քաղաքացիական հասարակության որևէ մոդել հնարավոր չէ և չպետք փոխառել, այն պետք է ձևավորվի ավանդական մշակույթի հիման վրա:

Ժամանակակից Հայաստանի Հանրապետության քաղաքացիների իրավագիտակցությունն ունի մի շարք առանձնահատկություններ, որոնք, երբեմն, խոսում են բնավ էլ դրա ոչ դրական կողմերի մասին: Նախ քաղաքացիները միշտ չէ, որ հավատում են գործող օրենքների սոցիալական արդարությանը, որը կարող է հանգեցնել նաև

---

[161]**Рябев В.** Гражданское общество современной России: проблемыи перспективы становления.Вестник МГТУ, том 13, №2, М., 2010, с. 442.

[162]**Пузенцова Ю.** вопросу о прогнозах развития гражданскогообщества в современной России. Известия высших учебных заведений.Поволжский регион. 2013, № 1, с. 44.
http://izvuz_on.pnzgu.ru/files/izvuz_on.pnzgu.ru/5113.pdf /31.03.2014/

[163]**Бухарин Н., Довженко Н. Кузнецова З. и др.**Демократическое правовое государство и гражданское общество в странах Центрально-Восточной Европы. Наука,М., 2005, с. 3.

իրավական նիհիլիզմի, ինչն էլ հասարակությանը տանում է քաղաքացիական պայքարի: Քաղաքացիները կամավոր կերպով ենթարկվում են քաղաքական ինստիտուտների կողմից ընդունված որոշումներին այն դեպքում, երբ նրանց գործողությունները համարում են արդար:

Այս պարագայում առավելապես կարևորվում է քաղաքացիական հասարակության միջնորդությունը քաղաքացիների և պետության միջև, որը կարող է նպաստել հասարակության անդամների մոտ որոշումների արդարության ընդունմանը:[164] Կարծում ենք՝ այս համատեքստում արդիական է նշել Դ. Կոենի և Է. Արատոյի այն տեսակետը, որ քաղաքացիական հասարակությունը գտնվում է լեգալության և լեգիտիմության միջև:[165]

Օրինակ՝ Ի. Նեվաժնիյը նշում է, որ ռուսների իրավագիտակցությունը կարելի է վերագրել, այսպես կոչված, ազգային կամ զանգվածային իրավագիտակցությանը, որին այս պահին առավելապես բնորոշ է իրավական նիհիլիզմը: Ա. Կակոնը առաջարկում է իրավագիտակցություն հասկացության հետ օգտագործել «իրավական մտածելակերպ» հասկացությունը, որը նա նույնացնում է «ազգային բնավորություն» հասկացության հետ:[166] Ինչպես նշում է Ի. Պետրուլևիչը՝ ռուսների համար «օրենք» հասկացության հիմքը առաջին հերթին «արդարություն» հասկացությունն է (ի տարբերություն «արևմտյան» մտածելակերպի, որի համար ելակետային է համարվում առաջին հերթին «կարգ ու կանոն» հասկացությունը):[167]

---

[164] **Линецкий А.** Институты гражданского общества в общественных трансформациях: теория и практика посткоммунистических стран. ПОЛИТЭКС, 2007. http://www.politex.info/content/view/119/30/ /11.02.2014/.

[165] **Коэн Д., Арато Э.** Гражданское общество иполитическая теория. Весь Мир, М., 2003, с. 102.

[166] **Михайлова О., Петрулевич И., Романко О., Целиковский С.** Особенности правосознания и проблемы формирования гражданского общества в современной России // Теория и практика общественного развития, 2012, № 12.http://teoria-practica.ru/-4-2013/history/petrulevich-mikhaylova-romanko-tselikovskiy.pdf /25.02.2014/.

[167] **Михайлова О., Петрулевич И., Романко О., Целиковский С.** Особенности правосознания и проблемы формирования гражданского общества в современной России // Теория и практика общественного развития. 2012, № 12.http://teoria-practica.ru/-4-2013/history/petrulevich-mikhaylova-romanko-tselikovskiy.pdf/25.02.2014/.

Կարծում ենք՝ ռուսների իրավագիտակցության վերաբերյալ Պետրուլևիչի այս տեսակետը համադրելի է նաև հայ իրողությունների հետ: Հայ հասարակության համար ևս «օրենք»-ը առաջին հերթին ընկալվում է որպես «արդարություն»:

Այս համատեքստում առավելապես կարևորվում է պետության և քաղաքացիական հասարակության փոխհարաբերությունների հիմնախնդիրը:

Քաղաքացիական հասարակության և պետության փոխհարաբերությունները կարելի է կառուցել պետության կառավարման ցանկացած ձևում, սակայն այն պայմանով, որ կառավարման այդ ձևը թույլ է տալիս քաղաքականապես ակտիվ բնակչությանը վերահսկել պետական իշխանության գործունեությունը:[168]

Իր հերթին, քաղաքացիական հասարակությունը պետք է դիմակայի պետության դերի բացարձականացման բոլոր հնարավոր միտումներին:

Իրավական պետության մեջ իշխանությունը պետք է ենթարկվի օրենքին, ինչը ժամանակակից պայմաններում թերևս հնարավոր է միայն քաղաքացիական վերահսկողության պայմաններում: Ինչպես արդարացիորեն նշում են Վ. Լուչինը և Ն. Բաբրովը՝ «հասարակության կողմից իշխանությանը վերահսկելու կարողությունը հենց քաղաքացիական հասարակության գոյության նշանն է:[169]

Պետության և քաղաքացիական հասարակության փոխհարաբերությունների վերաբերյալ կան տարածված տարբեր մոտեցումներ:

Արևմտյան քաղաքագիտության մեջ ազատականժողովրդավարական ավանդույթի համաձայն՝ շեշտը դրվում է քաղաքացիական հասարակության ազատության և անկախության գաղափարի վրա, որը ձևավորում է մի շարք պաշտպանական կառույցներ և մեխանիզմներ անհատի և պետության միջև:

---

[168] **Марзак Г.** К вопросу о взаимодействии гражданского общества и правового государства. Права человека и гражданское общество. 2012, с. 15. http://www.new.law-books.ru/index.php?page=prava-cheloveka /11.02.2014/.

[169] **Марзак Г.** К вопросу о взаимодействии гражданского общества и правового государства. Права человека и гражданское общество. 2012, с. 15. http://www.new.law-books.ru/index.php?page=prava-cheloveka /11.02.2014/.

Պոզիտիվ-լիբերալ հայեցակարգի տեսանկյունից՝ բավարար չէ պարզապես երաշխավորել մարդկանց ազատությունը, անհրաժեշտ է նաև պետության միջամտությունը, որը պետք է ապահովի այդ նույն ազատությունից օգտվելու անհրաժեշտ ռեսուրսները:[170]

Սոցիալ-ժողովրդավարական ավանդույթը հիմնված է այն համոզմունքի վրա, որ քաղաքական կյանքի ժողովրդավարացումը պետք է սկսի քաղաքացիական հասարակության ժողովրդավարացումից: Այստեղ հաշվի է առնվում այն հանգամանքը, որ քաղաքացիական հասարակության որոշ ինստիտուտներ՝ առաջին հերթին շուկան, կարող են դրսևորել էքսպանսիոնիզմ, ինչը կործանարար է քաղաքացիական հասարակության մյուս տարրերի համար: Համաձայն այս տեսակետի՝ պետությունը, որպես ժողովրդավարական կառավարման և առանձին ինստիտուտների էքսպանսիոնիզմը ճնշելու երաշխավոր, պետք է մասնակցի քաղաքացիական ինստիտուտների բնականոն գործունեության ապահովման գործում:[171] Ցանկացած բարդության հասարակության մեջ խմբերի համեմատական հզորությունը փոփոխվում է: Որպեսզի այդ հասարակությունը պահպանի իր միասնությունը, յուրաքանչյուր խմբի հզորությունը պետք է իրականացվի քաղաքական ինստիտուտների միջոցով, որոնք այդ խմբերի հզորության կամ ուժի ուղղությունը ուղղորդում են այնպես, որ խմբերից մեկի գերակայությունը համադրելի լինի մյուսների շահերին:[172]

Սակայն, ինչպես նշում է Գ. Մարզակը, դժվար թե որևէ մեկը վիճի այն տեսակետի հետ, որ քաղաքացիական հասարակությունը առաջին հերթին ազատ հասարակությունն է՝ հիմնված տնտեսական, քաղաքական և մշակութային հարաբերությունների բազմազանության վրա, իսկ իրավական պետությունն այն պետությունն է, որտեղ բացառվում է տոտալիտարիզմը և մարդկանց նկատմամբ բռնությունը: Ընդ որում՝ ինչպես քաղաքացիական հասարակությունում, այնպես էլ՝ իրավական պետությունում

---

[170]**Рябев В**. К вопросу о взаимодействии государства и гражданского общества в современной России. http://www.old.jourssa.ru/2005/2/1aRiabev.pdf /11.01.2014/.
[171]**Рябев В**. К вопросу о взаимодействии государства и гражданского общества в современной России. http://www.old.jourssa.ru/2005/2/1aRiabev.pdf /11.01.2014/.
[172]**Хантингтон С.** Политический порядок в меняющихся обществах. Прогресс-Традиция, 2004, М., с.22.

կենտրոնական տեղը զբաղեցնում են մարդու իրավունքներն ու ազատությունները:[173] Իրավական պետության վերաբերյալ այս տեսակետին հակառակ տեսակետ է ներկայացնում Կ. Ռյաբեվը՝ հիմնվելով գերմանական հայեցակարգի վրա: Իրավական պետության գաղափարը սկիզբ է առնում գերմանական իրավաքաղաքական մտքում և ի սկզբանե նշանակում էր պետական վարչակազմի սահմանափակում օրենքով և իրավունքով, ընդ որում՝ պետությունը կարող է լինել նաև ավտորիտար, քանի որ իրավական պետության հայեցակարգը չի սահմանափակում այն, թե ով և ինչ օրենքներ է ընդունում և ինչքանով են այդ օրենքները տարածվում մարդու իրավունքների վրա: Սա նշանակում է, որ իրավական պետությունը կարող է լինել ինչպես ավտորիտար, այնպես էլ տոտալիտար (երբ օրենքները տարածվում են հանրային և մասնավոր կյանքի բոլոր բնագավառների վրա):[174] Այս համատեքստում կարելի է ասել, որ միզուցե հիմնավորված չէ այն տարածված տեսակետը, ըստ որի՝ իրավական պետությունը անպայմանորեն ենթադրում է քաղաքացիական հասարակության առկայություն: Հետևաբար, քաղաքացիական հասարակության կարևորագույն առանձնահատկությունը օրենքի գերակայությունն է, որը շատ ավելի լայն է, քան իրավական պետության գաղափարը:

Քաղաքացիական հասարակությունը օբյեկտիվ իրականություն է և ոչ մի իշխանություն չի կարող այն վերացնել: Քաղաքական իշխանությունը կարող է խոչընդոտել քաղաքացիական հասարակության գործունեությունը, կեղծել գործընթացը, հասցնել նվազագույնի անհատների և սոցիալական խմբերի ինքնուրույնությունն ու անկախությունը: Բայց նա չի կարող վերացնել մարդկանց նյութական և հոգևոր կյանքը, ուժով վերացնել սոցիալական խմբերը, որոնք մարդու կյանքի կազմակերպման հիմնական ձևերն են, վերացնել մարդկանց սոցիալական ակտիվությունը: Իսկ ովքեր կփորձեն

---

[173]**Марзак Г.** К вопросу о взаимодействии гражданского общества и правового государства. Права человека и гражданское общество. 2012, с. 15. http://www.new.law-books.ru/index.php?page=prava-cheloveka /11.02.2014/.

[174]**Рябев В**. К вопросу *о* взаимодействии государства *и* гражданского общества *в* современной России. http://www.old.jourssa.ru/2005/2/1aRiabev.pdf /11.01.2014/.

ապացուցել հակառակը, կնշանակի, որ նրանք համաձայնում են քաղաքականության և պետության ամենազորության իդեալիստական կարծրատիպի հետ։[175]

Այս պարագայում ակնհայտ է դառնում այն, որ քաղաքացիական հասարակության դերի անտեսումը պարզապես վտանգավոր է պետության կայունության համար։ Անհրաժեշտ է, որպեսզի քաղաքական իշխանությունը ձևավորվող քաղաքացիական հասարակության հետ միասին ձևավորեն փոխհարաբերությունների նոր մոդելներ, պետք է վերացվեն իշխանության և հասարակության միջև արգելքները։ Նշենք, որ սա իր հերթին անպայմանորեն կնպաստի հասարակության մոտ իշխանության լեգիտիմության բարձրացմանը։

[175] **Пряхин А.**Взаимодействие гражданского общества *и* государства*:* теоретико-методологический аспект *(№ 8, 2011).* http://teoria-practica.ru/-8-2011/politics/pryakhin.pdf /11.01.2014/.

# ԳԼՈՒԽ 3. ԻՐԱՎԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ

## 3.1. ՀՀ-ում պետության և քաղաքացիական հասարակության խոսույթում իրավագիտակցության դրսևորումը

Իրավագիտակցությունը մեծ կարևորություն ունի իշխանության և հասարակության միջև փոխհարաբերություններում: Իհարկե, ժողովրդավարական հասարակություններում այս խնդիրը, ի տարբերություն ավտորիտար և ամբողջատիրական վարչակարգերի, պայմանավորվում է իշխանության և քաղաքացիական հասարակության միջև ձևավորվող խոսույթով, որը համարվում է հաղորդակցության լավագույն ուղին,[176] քանի որ արտահայտում է հասարակության լայն շերտերի շահերը և որոնում դրանց համադրման փոխզիջումային մեխանիզմներ: Այս գործընթացում իրավագիտակցությունը՝ որպես հասարակական գիտակցության ձև, պայմանավորում է այս ինստիտուտների միջև խոսույթի արդյունավետությունը, քանի որ թե՛ իշխանությունը, թե՛ քաղաքացիական հասարակությունը օժտված են որոշակի իրավագիտակցությամբ, որի մակարդակից է կախված նրանց միջև փոխհարաբերակցության և խոսույթի որակը, հետևապես՝ նաև արդյունավետությունը, ինչն իր հերթին նպաստում է նաև իշխանության լեգիտիմության բարձրացմանը, եթե վերջինս առավելապես հաշվի է առնում հասարակական շահը և դիրքորոշումներն իր կողմից կայացվող որոշումներում:

Իրավագիտակցության խնդրի ուսումնասիրությունը իշխանություն-քաղաքացիական հասարակություն խոսույթում թույլ է տալիս որոշակիորեն վեր հանել իրավագիտակցության մակարդակը գործնական քաղաքական գործընթացներում, քանի որ խոսույթի վերլուծությունը հնարավորություն է տալիս համադրել քաղաքական հաղորդակցության խոսքային և գործնական ասպեկտները, որոնց համապատասխանությունը ցույց է տալիս իրավագիտակցության կարևորությունը և

[176] **Ордуханян Э.**Политический дискурс как средство политической коммуникации, Философия, политика, культура, М., Прогресс-Традиция, 2011, с. 222-231.

նշանակությունը քաղաքական գործընթացների վրա վերջինիս ազդեցության տեսանկյունից:

Ուստի մեր կարծիքով՝ անհրաժեշտ է ժամանակակից ՀՀ-ում քաղաքացիական հասարակության ձևավորման հիմքերի գործընթացը դիտարկել քաղաքացիական մշակույթի ձևավորման, քաղաքացիական իրավագիտակցության կայացման և զանգվածային գիտակցության մեջ հասարակական արդարության արժեքների ամրապնդման համատեքստում:

Քաղաքացիական հասարակության կայացումը բարդ սոցիալական գործընթաց է, որտեղ միաժամանակ քաղաքակրթվում են և՛ քաղաքացին, և՛ հասարակության անդամների միջև հարաբերությունները, և՛ ինքնին հասարակությունը, և՛ պետությունը, և, իհարկե, պետության, հասարակության և անհատի միջև հարաբերությունները,[177] որտեղ կարևոր դերակատարություն ունի իրավագիտակցությունը որպես համասոցիալական երևույթ: Այդպիսի զարգացման պայմանն է քաղաքացիական հասարակության բոլոր բաղադրատարրերի՝ անհատի, հասարակության, իշխանության և պետության հավասարակշռությունը:

Ուշագրավ է քաղաքացիական հասարակության վերաբերյալ Հաբերմասի սահմանումը, ով այն դիտում է որպես պետությունից և շուկայից առանձնացված գործող հատուկ ոլորտ, որը հեղինակն անվանում է հանրային ոլորտ, որտեղ էլ տեղի է ունենում պետության, բիզնեսի և քաղաքացիական հասարակության միջև երկխոսությունը (խոսույթը): Այդ երկխոսությունը կրում է ոչ թե միջանձնային, այլ միջսուբյեկտային բնույթ: Դա ոչ թե տարբեր անձերի միջև հաղորդակցությունն է, այլ հասարակական կազմակերպությունների և ինստիտուտների, առևտրային կառույցների և պետական իշխանության մարմինների միջև փոխգործակցությունը: Երկխոսության այդպիսի ընկալումը կրում է միջնորդավորված, փոխաբերական բնույթ: Դա հաղորդակցություն է, որը տեղի է ունենում այլ միջոցներով: Խոսքը չի վերաբերում միջանձնային լեզվական հաղորդակցությանը «երկխոսություն» բառի ավանդական ընկալման իմաստով: Տվյալ

[177] **Кравченко И**. Концепция гражданского общества в философском развитии / И. Кравченко // М., Политические исследования, № 5., 1991, с. 128-129.

համաձայնեցված գործընթաց մեզ թույլ է տալիս խոսել միջսուբյեկտային երկխոսության հատուկ տարատեսակների մասին, որոնցից է նաև պետության և քաղաքացիական հասարակության միջև երկխոսությունը:[178]

Այս երկու ինստիտուտների միջև երկխոսության արդյունավետության տեսանկյունից հարկ է անդրադառնալ քաղաքացիական հասարակության կայացման գործում մեծ կարևորություն ունեցող ժողովրդավարության դելիբերատիվ մոդելին, որտեղ քաղաքացիական հասարակության կայացման գործում կարևորագույն դեր են կատարում քննարկումները, բանավեճերը, հանրային լսումները, հասարակական կարծիքի հարցումները և հաղորդակցության ցանկացած այլ ժողովրդավարական միջոց: «Դելիբերատիվ ժողովրդավարություն» եզրույթի հեղինակ Բեսեթը կարծում է, որ դելիբերատիվ գործընթացն ունակ է ընդունել ամենատարբեր ձևերը: «Դա կարող է լինել գաղափարակիցների համագործակցության համաձայնեցված գործընթաց, կարող է լինել մի գործընթաց, որը բովանդակում է խոր արմատացած կոնֆլիկտներ հիմնական խնդիրների և սկզբունքների վերաբերյալ: Այն կարող է ավարտվել միաձայն կարծիքով, կարող է վեր հանել սուր տարակարծություններ, որոնք դժվար է կարգավորել: Այն կարող է տատանվել հանգիստ քննարկումից մինչև կարծիքների հուզական փոխանակման միջակայքում: Դա կարող է լինել բաց հանրային քննարկում կամ ուղղակի բանավեճ: Մասնակցությունը դրանցում կարող է լինել սահմանափակ կամ ներառել շահագրգիռ խմբերի գաղափարները և կարծիքները:[179] Սակայն այս մոդելի առավելությունը մշտական խոսույթի առկայությունն է պետության և քաղաքացիական հասարակության փոխհարաբերություններում, որը կարող է վեր հանել կողմերի իրավագիտակցության աստիճանը և բնույթը:

Հարկ է նկատել, որ դելիբերատիվ ժողովրդավարության մեկ այլ տեսաբան Հաբերմասն իր քաղաքական փիլիսոփայության մեջ շեշտում է «խոսույթ» եզրույթը, որը

[178] **Зайцев А.** Диалог государства и гражданского общества как социально- политическая категория, «Социум и власть», №1(33), 2012, с.30.

[179] **Бессет Дж.** Тихий голос разума. Делиберативная демократия и американская система государственной власти /пер. с англ. Ю. Шпакова/, М., РОССПЭН, 2011, с. 75-76.

նույնացնում է երկխոսության հետ: Ինչպես գրում են Ռուսակովան և Ռուսակովը. «Ըստ Հաբերմասի՝ խոսույթը երկխոսություն է, որի ընթացքում տեղի է ունենում վիճահարույց հարցերի համադրում ընդհանուր համաձայնության հասնելու համար»:[180] Սակայն հարկ է նշել, որ որոշ հեղինակներ չեն սահմանափակում խոսույթի նշանակությունը միայն երկխոսության շրջանակներում, այլ այն դիտում են որպես ավելի լայն և բազմակողմ երևույթ, որը կարող է լինել և՛ մենախոսություն, և՛ երկխոսություն, և՛ ունենալ հաղորդակցության բազմաթիվ սուբյեկտներ:[181]

Պետության և քաղաքացիական հասարակության միջև փոխգործակցության ոլորտում սոցիալական երկխոսության տարատեսակները տարբերվում են միմյանցից լարվածության տարբեր աստիճաններով: Որքան բարձր է օտարման, չընկալման, անօրինության մակարդակը, այնքան սուր է խոսութային հաղորդակցությունը: Եվ հակառակը, որքան կարգավորված և մշակված են պետության և քաղաքացիական հասարակության փոխգործողության ոլորտում կոգնիտիվ (ճանաչողական) գործընթացները, այնքան հանգիստ և կառուցողական է նրանց միջև հաղորդակցությունը, որը տեղի է ունենում երկխոսության այս կամ այն ձևի ուղեկցությամբ: Նույնիսկ ամենասուր երկխոսությունը հանդես է գալիս որպես ոչ այդքան կոնֆլիկտածին գործոն, որքան հաշտեցնող գործընթաց, որը թույլ է տալիս իր դերակատարներին ավելի լավ հասկանալ միմյանց, ճշտել դիրքորոշումները, ներթափանցել խնդրի էության մեջ: Այդպիսի երկխոսությունը պահանջում է զարգացած քաղաքական և իրավական մշակույթ: Հաջողությունը այս հարցում պայմանավորվում է հաղորդակցության ճիշտ ընտրված մարտավարությամբ և ռազմավարությամբ, որտեղ ընդդիմախոսներին պիտակավորելը, վիրավորելը կամ հրատապ թեմաներից խուսափելը, շփման մերժումը, լռությունը կարող են ավելի սրել առանց այդ էլ դժվար սոցիալ-քաղաքական իրավիճակը պետության և քաղաքացիական հասարակության կառույցների փոխհարաբերակցության ոլորտում: Եվ

---

[180]**Русакова О, Русаков В.** PR дискурс: теоретико-методологический анализ. О.Ф.Русакова, В.М. Русаков, Екатеринбург,УрО РАН Институт международных связей. 2008. с. 64.

[181]**Օրդուխանյանէ.** Քաղաքական խոսույթը և նրա դրսևորման ձևերը, Կանթեղ գիտական հոդվածների ժողովածու, 3(36), Եր,Ասողիկ հրատ., 2008, էջ 188-193:

հակառակը՝ երկխոսության սուբյեկտների հաղորդակցական բանիմացությունը, սոցիալական ինտերակցիայի մեթոդներին տիրապետելը, ճիշտ ընտրված մարտավարությունը և ռազմավարությունը, փաստարկված խոսույթը, ուրիշի կարծիքը հարգելը, արժանի ձևով ընդդիմախոսելու ունակությունը կարող են փոխել իրավիճակը ավելի բարենպաստ ուղղության:[182]

Ինչպես նշում է Պետկոն. «Շատ կարևոր է քաղաքացիական հասարակության կառույցների դերը տարբեր հակամարտող խմբերի միջև երկխոսության կազմակերպման և իրականացման համար: Պարզ է, եթե այս կամ այն պատճառներով առաջացել են որոշակի կոնֆլիկտներ, ապա այդ կոնֆլիկտների կողմերից մեկն ամենայն հավանականությամբ իշխանություննն է իր համապատասխան ներկայացուցիչներով: Այդպիսի դեպքերում ամենալավ միջնորդի դերը կարող է կատարել քաղաքացիական հասարակությունը, քանի որ միայն նա կարող է վայելել վստահություն և արտահայտել ոչ թե մասնավոր և կուսակցական, այլ ընդհանուր, ազգային շահեր»:[183] Սա նշանակում է, որ իշխանության հետ երկխոսության համար բավականին կարևոր է քաղաքացիական հասարակության կազմակերպվածության մակարդակը և նրա կառուցողական բնույթը ազգային-պետական շահի տեսանկյունից:

Ուսումնասիրելով ՀՀ-ում պետության և քաղաքացիական հասարակության միջև երկխոսությունը՝ հարկ է նշել, որ մեզ մոտ ձևավորվել է զարգացման այնպիսի ձև, որտեղ տվյալ երկխոսության մեջ վճռորոշ դերը պատկանում է պետությանը: Այս իսկ պատճառով՝ կարելի է ասել, որ ՀՀ-ում ձևավորվում է «իշխանակենտրոն» մշակույթ, քանի որ հասարակական հարաբերությունների համակարգում իշխանությունը, պետությունը մշտապես զբաղվում են կենտրոնական դիրք՝ ի տարբերություն արևմտյան կամ եվրոպական մշակույթի, որը «մարդակենտրոն» է, քանի որ այնտեղ կենտրոնում մարդն է,

---

[182]**Зайцев А.** Диалог государства и гражданского общества как социально-политическая категория, «Социум и власть».-2012.-№1(33), с.33.

[183]**Петко Г.** Культура конфликта и диалога во взаимодействии власти и гражданского общества как фактор политической модернизации постсоциалистических стран Европы, с. 53.

http://lockeclub.org/wp-content/uploads/2013/06/Kultura_konflikta_vo_vzaimodejstvii_vlasti_i_GO_Tezisy_k_simpoziumu_2011.pdf /03.05.2014/.

այլ ոչ թե իշխանությունը: Մարդը հանդես է գալիս որպես ամեն ինչի չափ: Մարդուց է սկսվում ամեն ինչ: Այդպիսի հասարակություններում առաջնային դեր ունի նաև անհատի իրավագիտակցությունը, քանի որ իշխանությունը սահմանափակվում է իրավունքով: Այս մոտեցումները, ըստ էության, ծայրահեղություններ են: Սակայն առավել կարևոր է նրանց միջև բնական հավասարակշռությունը, որն անհրաժեշտ է օրգանական պետություն ստեղծելու համար, որտեղ իշխանությունը և քաղաքացիական հասարակությունը զարգանում են ներդաշնակ: ՀՀ օրինակում իշխանության գերակա դերը պայմանավորվում է նաև քաղաքացիական հասարակության անկազմակերպվածությամբ, քանի որ այն ակտիվանում է հատվածաբար, ուստի լրջագույն արդյունքների ակնկալումն այսօր դեռ իրատեսական չէ:

ՀՀ-ում, որը կանգնած է կայուն զարգացման խնդրի անհրաժեշտության առջև, հարկ է կիրառել իրավիճակին համապատասխանող հայեցակարգային գործողություններ, որոնք թույլ կտան լուծել առկա հասարակական-քաղաքական խնդիրները: Հետևաբար՝ այս դեպքում առավել արդյունավետ կարող է լինել տրանսֆորմացիոն հակասական գործընթացների ուսումնասիրության կոնֆլիկտաբանական մոտեցումը, որը թույլ կտա գտնել լարման այն կետերը, որտեղ կուտակվում է փոփոխությունների էներգիան և առաջարկել ստեղծված իրավիճակի կարգավորման այլընտրանքային ուղիներ: Դա հաստատում է այն դատողությունը, որ կոնֆլիկտը՝ որպես սոցիալական փոխգործակցության հատուկ ձև, նախապես ներառված է հասարակական-քաղաքական գործընթացների մեջ և հանդես է գալիս որպես սոցիալ-քաղաքական սուբյեկտների ակտիվ ինքնորոշման և սոցիալական դինամիկայի գործոն:[184]

Եթե խորամուխ լինենք ՀՀ-ում հասարակական-քաղաքական կոնֆլիկտի էության մեջ, ապա կտեսնենք, որ ստեղծված իրավիճակի պատճառն այն է, որ արդիականացման գործընթացը չի եղել ինքնուրույն գործընթաց: Նրա շարժող ուժը միշտ եղել է պետությունը,

---

[184] **Никовская Л.** Разнообразие и сложность вызовов для взаимодействия власти и гражданского общества в контексте задач модернизации: место, роль и культура конфликта, с. 6. http://lockeclub.org/wp-content/uploads/2013/06/Kultura_konflikta_vo_vzaimodejstvii_vlasti_i_GO_Tezisy_k_simpoziumu_2011.pdf /03.05.2014/.

որը ծայրահեղ իրավիճակներում մոբիլիզացրել է առաջընթացի համար բոլոր ուժերը, իսկ հետո միանգամից սպառվել է: Այստեղ խոսքը վերաբերում է «հավեհաս արդիականացմանը», որն ըստ Սորդեի՝ նման է «քառանկյուն անիվի շարժմանը»,[185] այսինքն՝ պետությունը, հավաքելով և կենտրոնացնելով բոլոր ուժերը, կարողանում է շրջել քառանկյուն անիվը 90 աստիճանով՝ սպառելով ուժերը, որոնց վերալիցքավորման համար անհրաժեշտ է լինում տևական ժամանակ: Ստացվում է, որ այսպիսի արդիականացումը տեղի է ունենում կտրուկ, բայց բավականին դանդաղ փոփոխություններով, ինչը մեծապես բնորոշ է մեր երկրում ստեղծված հասարակական-քաղաքական իրավիճակին: Օրինակ՝ 1990-ականներին որպես տնտեսական արդիականացում կարելի է դիտարկել սեփականաշնորհման գործընթացը: Սա նման է քառանկյուն անիվը 90 աստիճանով շրջելուն: Այսպիսի շարժման հիմնական խնդիրն այն է, որ հասարակության սոցիալական կառուցվածքը դժվար է հարմարվում այդ փոփոխություններին: Արդիականացման այս ձևի հաջողությունը կախված է հասարակական և քաղաքական ինստիտուտների արդյունավետությունից, որոնք կարող են համարժեք արձագանքել կտրուկ փոփոխություններին և հավասարակշռել ցնցումները: Այսպիսի զարգացումներում իր դերակատարությունն է ունեցել նաև պետական և հասարակական մարմինների իրավագիտակցությունը, որը, իհարկե, հետխորհրդային առաջին տարիներին չէր կարող լինել պատշաճ մակարդակի, քանի որ և՛ իշխանությունը, և՛ հասարակությունը դեռևս չէին յուրացրել ժողովրդավարական և ազատական նոր արժեքների ոչ թե ձևական, այլ բովանդակային կողմը: Հետևապես՝ այս ինստիտուտների միջև գոյություն չուներ իրական երկխոսությունը, ինչը թույլ կտար լուծել առկա խնդիրները առավել սակավ կորուստներով:

Այսպիսի իրավիճակի համար բազմաթիվ հետազոտողներ որպես այլընտրանք են առաջարկում տրանսֆորմացիոն դաշտի վրա ազդեցության այլ կենտրոններ: Այդ կենտրոնները նրանք հիմնականում տեսնում են քաղաքացիական հասարակության կառույցներում, հասարակության ինքնակազմակերպման և ինքնագործունեության

[185] **Вернек Содре Н.** Бразилия: анализ «модели развития». М., Наука, 1976. 345 с.

գործընթացների վերակենդանացման մեջ:[186] Սակայն այդ ժամանակաշրջանում պետության և հասարակության միջև չեն ձևավորվել դինամիկ հավասարակշռություն և փոխգործակցության արդյունավետ ինստիտուցիոնալ ուղիներ, որոնք թույլ կտային լուծել ինչպես պետության և հասարակության ներսում, այնպես էլ նրանց միջև առաջացած հակասությունները երկխոսության միջոցով:

Հետևապես այսօր էլ ՀՀ-ում հասարակական առաջընթացի կարևոր պայմաններից է քաղաքացիական հասարակության և պետության, սոցիումի և իշխանության միջև մշտական երկխոսությունը, ինչպես նաև անհատի քաղաքացիական ինքնակազմակերպումը, որը չի կարող լինել արդյունավետ առանց համապատասխան իրավագիտակցության: Արդիականացումը կարող է հաջող լինել միայն ընդհանուր ազգային երկու ինստիտուտների՝ արդյունավետ պետական ապարատի և կառուցողական քաղաքացիական հասարակության առկայության դեպքում, որոնք միասին կարող են առաջ մղել զարգացման գործընթացը հասարակության համար անվտանգ ճանապարհով: Այս մոտեցումը կարող է թույլ տալ բացառել իշխանության և հասարակության, էլիտայի և ժողովրդի միջև ապաներդաշնակեցումը, որը հանգեցրել է զանգվածային սոցիալական կոնֆլիկտների՝ հատկապես ընտրական գործընթացներից հետո և սոցիալ-տնտեսական փոփոխությունների դաշտում:

Ինչպես նշում է Գիդենսը. «Քաղաքացիական հասարակության և պետության միջև փոխգործակցության բնույթն այսօր համարվում է քաղաքական արդիականացման ճակատագիրը որոշող կարևորագույն գործոն, քանի որ քաղաքացիական հասարակությունը, նրա նախաձեռնողական ուժերի ակտիվացումը դիտվում են որպես

[186]**Никовская Л.** Разнообразие и сложность вызовов для взаимодействия власти и гражданского общества в контексте задач модернизации: место, роль и культура конфликта, с. 9. http://lockeclub.org/wp-content/uploads/2013/06/Kultura_konflikta_vo_vzaimodejstvii_vlasti_i_GO_Tezisy_k_simpoziumu_2011.pdf /03.05.2014/.

ժողովրդավարական քաղաքական ինստիտուտների անկենսունակության դեմ հակաթույն և որպես դրանց նորացման աղբյուր»:[187]

Ուշագրավ է նաև Նիկովսկայայի տեսակետը, ով նշում է, որ քաղաքացիական հասարակության կառուցվածքային արդի տարրերը, կապված նոր հասարակական շարժումների հետ, որոնց հիմքում ընկած են, այսպես կոչված, «երրորդ սեկտորի» կազմակերպությունները, որոնք իրենց հերթին հենվում են կազմակերպման ցանցային սկզբունքի, ժողովրդավարության ուղիղ ձևերի վրա, որոշակի կասկածներ են հարուցում քաղաքական գործընթացների վրա քաղաքացիական հասարակության ազդեցության հարցում: Սակայն բազմաթիվ այլ հեղինակներ ուշադիր հետևում են կամավորականության և սոցիալական ակտիվության այլ, ոչ ավանդական ձևերի զարգացմանը: Հենց Արևմուտքում է սկսել ակտիվորեն զարգանալ սոցիալական գործընկերությունը որպես հասարակության երեք ինքնուրույն ուժերի՝ պետության, բիզնեսի և ոչ առևտրային սեկտորի փոխգործակցություն՝ հանուն սոցիալ-քաղաքական և տնտեսական խնդիրների լուծման: Ավելին՝ ոչ առևտրային կազմակերպությունները սկսել են իրականացնել հասարակական երկխոսության նախաձեռնողի գործառույթը: 1990-ական թվականներին ոչ կառավարական սեկտորը զգալի առաջքայլ կատարեց քաղաքական որոշումներում քաղաքացիների մասնակցության բարձրացման ուղղությամբ՝ թողնելով հասարակական կարծիքի ձևավորման վրա իրական ազդեցություն:[188] Հարկ է նկատել, որ ՀՀ-ում ևս այսօր ոչ կառավարական սեկտորը, միավորելով հասարակության սոցիալ-նորարարական ներուժը, դարձել է քաղաքացիական հասարակության ամենաշարժունակ տարրը և դարձել է պետական կառավարման ոլորտում քաղաքացիական շահերի ներկայացման նախաձեռնողը, ինչը փաստում է

---

[187] **Giddens A.** The Third Way.The Renewal of Social Democracy. Politypress, Cambridge,1998,p. p. 78.

[188] **Никовская Л.** Разнообразие и сложность вызовов для взаимодействия власти и гражданского общества в контексте задач модернизации: место, роль и культура конфликта, с. 10-11. http://lockeclub.org/wp-content/uploads/2013/06/Kultura_konflikta_vo_vzaimodejstvii_vlasti_i_GO_Tezisy_k_simpoziumu_2011.pdf /03.05.2014/.

քաղաքացիական հասարակության տվյալ սեկտորի մոտ իրավագիտակցության բարձրացման մասին:

Քաղաքական մակարդակում նոր հասարակական կազմակերպությունները Հայաստանում դեռևս իրենց հակադրում են ավանդական քաղաքական կազմակերպություններին՝ շեշտադրելով «ոչ քաղաքական քաղաքականության» սկզբունքը: Հասարակության մի մասի մոտ «սոցիալական հոգնածության» հաղթահարման և ակտիվության բարձրացման միտումը վկայում է այն մասին, որ քաղաքացիական նախաձեռնությունները և մտադրությունները սկսում են ձևավորվել իշխանությունից անկախ: Սա ևս փաստում է պետության և քաղաքացիական հասարակության միջև իրական երկխոսության բացակայության մասին, ինչը խոչընդոտում է օրգանական պետության ստեղծմանը:

Այսպիսով՝ կարելի է նշել, որ ՀՀ-ում քաղաքացիական հասարակության և իշխանության շահերը հիմնականում տարուղղորդված են: Հենց այդ ինստիտուտների միջև հարաբերությունների սահմանումով է պայմանավորվում քաղաքական արդիականացման բարդ կոնֆլիկտային իրավիճակը մեր երկրում:

Հարկ է նկատել, որ ՀՀ-ում վերջին տարիների իրողությունները բավականին հեռու են բաց քաղաքական վարչակարգից: Չնայած այն բանին, որ ժողովրդավարությունը ենթադրում է կոնֆլիկտների լուծման ինստիտուցիոնալացված համակարգ, հայկական քաղաքական իրականության մեջ այդ գաղափարի բովանդակությունը էապես ձևախեղված է: Քաղաքական տարածության պետականացումը նշանակում է ազատ քաղաքական մրցակցության մերժում և կոնֆլիկտների՝ որպես զարգացման աղբյուրների և գործոնների վերացում: Քաղաքական գործընթացը ՀՀ-ում հետզհետե վերածվել է վարչական վերահսկողության գոտու, քանի որ ձևավորվել է քաղաքական որոշումների ընդունման էլիտար, հասարակության համար փակ մեխանիզմ: Քաղաքական գործընթացի վերահսկման հարցում իշխանության համար գործիք է դարձել պետական ապարատը, որը չի դիմում իրական փոխզիջումների և հաղորդակցության այլ բարդ ձևերի, որոնք անհրաժեշտ են քաղաքական ընդդիմախոսների հետ շփումների համար:

Սակայն առանց այլընտրանքի՝ նպատակների ընտրության մեխանիզմը ավարտվում է քաղաքականության այլասերմամբ, որը դառնում է սոցիալական հարաբերությունների կարգավորման ձև: «Կառավարվող» ժողովրդավարական վարչակարգը բարձրացնում է անկանխատեսելի զարգացման վտանգը: Այսպիսի դեպքերում բողոքական ներուժը կուտակվում է երկար և գաղտնի ձևով, իսկ հետո հանկարծակի դուրս է ժայթքում մեծապես քայքայիչ ձևերով:[189] Զանգվածային բողոքները 1996, 2003, 2008, 2013, 2014 թվականներին, կապված ընտրական գործընթացների և սոցիալ-տնտեսական խնդիրների հետ, մեր հասարակական և քաղաքական համակարգի վնասակարության ապացույցն են, որը փորձում է պահպանել կայունությունը «սինկրետիկ» (միաձուլված) իշխանության միջոցով, որը վճռական ազդեցություն է թողնում սոցիալական կյանքի գրեթե բոլոր ոլորտներում:

Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ միայն պետությունն է, որը, որպես հանրային ոլորտի գլխավոր դերակատար, որոշում է կառավարման գործընթացներում բնակչության ընդգրկման աստիճանը և բնույթը: Այսինքն՝ չնայած հասարակության ակտիվությանը և կոմպետենտությանը՝ ընդհանուր կառավարման բոլոր տարբերակները որոշվում են իշխող վարչակարգի և լուծվող խնդիրների բնույթով: Նույնիսկ ժողովրդավարական պետություններում կառավարման ոլորտի վերաբերյալ իշխանության և հասարակության միջև գոյություն ունի երկխոսության հնարավորության որոշակի շրջան (այսինքն՝ իշխանության նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունը, որպես կանոն, տեղի է ունենում լեգիտիմության կտրուկ անկման պայմաններում):[190] Պետության գերակա դերն ամբողջությամբ ապացուցում է նաև ՀՀ-ում ձևավորված իրավիճակը, որտեղ

---

[189]**Никовская Л**. Разнообразие и сложность вызовов для взаимодействия власти и гражданского общества в контексте задач модернизации: место, роль и культура конфликта, с. 3. http://lockeclub.org/wp-content/uploads/2013/06/Kultura_konflikta_vo_vzaimodejstvii_vlasti_i_GO_Tezisy_k_simpoziumu_2011.pdf /03.05.2014/.

[190]**Соловьев А.** Диалог государства с обществом: проблемы и направления, с. 16. http://lockeclub.org/wp-content/uploads/2013/06/Kultura_konflikta_vo_vzaimodejstvii_vlasti_i_GO_Tezisy_k_simpoziumu_2011.pdf /03.05.2014/.

ձևավորվել է պետության և հասարակության փոխգործակցության այնպիսի մոդել, որը տարբերվում է իշխանության և կառավարման գործընթացներում քաղաքացիական մասնակցության նկատմամբ սկզբունքային անհանդուրժողականությամբ՝ չնայած այն բանին, որ դա քաղաքացիների քաղաքացիական և քաղաքական իրավունքների մի մասն է: Ասվածի ապացույցը բոլոր տեսակի քաղաքացիական նախաձեռնությունների խիստ վերահսկողությունն ու դրանց բնականոն ընթացքի խոչընդոտումն է ուժային մարմինների կողմից: Պետության և հասարակության միջև քաղաքական երկխոսությունը գտնվում է վարչական կարգավորման դաշտում, ինչպես նաև ուղիղ ոստիկանական վերահսկողության ներքո: Քաղաքացիական մասնակցության նկատմամբ անհանդուրժողականության այսպիսի մթնոլորտում բանակցային տեխնոլոգիաները, պետական գործերում հասարակության ներգրավման միջոցները, քաղաքական խոսույթը և հասարակական գործերի համատեղ իրականացման այլ ձևերը եղել են կամ ոչ կառուցողական, կամ նույնիսկ չեն էլ ձևավորվել:

Հարկ է նկատել, որ իշխող վարչակարգը իրականում հետաքրքրված չէ քաղաքացիական հասարակության կոմպետենտության և իշխանական-կառավարչական կարգավիճակի բարձրացմամբ: Այսպիսի դեպքերում հասարակությունը զրկվում է իր շահերի ներկայացման ինքնիշխան իրավունքներից և դառնում է անարդյունավետ կառավարման համակարգի պատանդը: Այդպիսով՝ քաղաքական վարչակարգը հետզհետե կորցնում է իր համահասարակական բնույթը՝ զրկելով իրեն նորարարական ներուժից, որն առկա է հասարակական պոտենցյալում:

Իհարկե, այսօր քաղաքացիների որոշակի հատվածի մոտ իրավագիտակցության բարձրացման պայմաններում ձևավորվող քաղաքացիական շահերի ներկայացման նոր ձևերի դեմ իշխանությունը երբեմն լինում է անուժ, քանի որ այդ նոր ձևերը բնորոշ են քաղաքականության տեղեկատվական տարածությանը: Խոսքը վերաբերում է բլոգներին, ինտերակտիվ ֆորումներին, այսինքն՝ քաղաքացիական ակտիվության նոր ձևերին, որոնք օգտագործվում են քաղաքականության վիրտուալ դաշտում և որոշ դեպքերում խարխլում են ձևավորված կարգի հիմքերը: Բնակչության կիբերակտիվության օրինակները դառնում

են քաղաքացիական ակտիվության կենդանացման աղբյուրներ՝ ստիպելով նույնիսկ իշխանության ներկայացուցիչներին գործել այդ դաշտում ինտերակտիվ երկխսության կանոններով:

Սակայն, նոր տեղեկատվական տեխնոլոգիաների ներուժը չի կարող բավարար լինել ընդանուր իրավիճակի փոփոխության համար, քանի որ լավագույն դեպքում դրանք կարող են հանդես գալ որպես իրավիճակի առողջացման մասնակի աղբյուրներ: Քաղաքական գործընթացներում քաղաքացիների դերակատարության մեջ լուրջ փոփոխություններ չեն կարող լինել այնքան ժամանակ, մինչև որ չփոփոխվեն քաղաքական էլիտայի վարչաքաղաքական դիրքորոշումները, որոնք հիմնականում ուղղված են քաղաքական իշխանության կորպորատիվ շահերի ամրապնդմանը: Այս տեսանկյունից՝ իրավական անարդարության, կոռուպցիայի, ինչպես նաև իշխող վարչակարգի բացասական դրսևորումների աղբյուրը քաղաքական բյուրոկրատիայի վարքագիծն է, երբ քաղաքական իշխանությունը սերտաճում է տնտեսական իշխանության հետ:[191]

Այս դեպքում հարկ է ընդգծել Սոլովյովի այն միտքը, որ հասարակությանը իշխանության և կառավարման գործընթացներից դուրս մղելու այս կենտրոնական մեխանիզմը կոտրելու համար պետությանը անհրաժեշտ են ոչ թե մասնակի, այլ համակարգային փոփոխություններ հասարակության հետ ունեցած հաղորդակցության մեխանիզմների տեսանկյունից: Այս հանգամանքը թույլ է տալիս քաղաքացիական կառույցներին անհրաժեշտության դեպքում ոչ միայն առաջ տանել սեփական օրակարգը, այլև ընտրել պետության հետ շփման ավելի տարատեսակ ռազմավարություններ:[192]

---

[191]**Соловьев А.** Диалог государства с обществом: проблемы и направления, с. 17. http://lockeclub.org/wp-content/uploads/2013/06/Kultura_konflikta_vo_vzaimodejstvii_vlasti_i_GO_Tezisy_k_simpoziumu_2011.pdf /03.05.2014/.

[192]**Соловьев А.** Диалог государства с обществом: проблемы и направления, с. 17-18. http://lockeclub.org/wp-content/uploads/2013/06/Kultura_konflikta_vo_vzaimodejstvii_vlasti_i_GO_Tezisy_k_simpoziumu_2011.pdf /03.05.2014/.

Այս դեպքում պետք չէ մոռանալ, որ բնակչությունը միշտ հնարավորություն ունի ուղղակի ճնշում գործադրել կառավարության վրա (ինչպես տեղի ունեցավ տրանսպորտի գնի թանկացման, պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման դեպքերում, որոնք ցույց տվեցին, թե որքան արագ է յուրացնում արմատական երիտասարդությունը քաղաքացիական անհնազանդության նոր մեթոդները՝ հանուն սեփական շահերի և իրավունքների պաշտպանության, ինչը փաստում է նրանց մոտ բարձր իրավագիտակցության մասին):

Եթե ավելի խիստ դատենք, ապա ՀՀ-ում շարքային քաղաքացու և իշխանության միջև հարաբերությունները լի են եղել դրամատիզմով: Դրանք զարգացել են՝ *էլիտային ամեն ինչ, իսկ քաղաքացուն ոչինչ* սկզբունքով: Սակայն այս իրավիճակը չի կարող երկար պահպանվել, քանի որ սոցիալ-տնտեսական զրկանքները և դժվարությունները ստիպում են քաղաքացիներին դառնալ ավելի իրավագիտակից և պաշտպանել իրենց շահերը պետական ոտնահարումներից: Արդյունքում էլ՝ ձևավորվում են քաղաքացիական անհնազանդության տարատեսակ դրսևորումներ, որոնք վկայում են քաղաքացիների կողմից սեփական իրավունքների և շահերի պաշտպանության առաջնահերթության գիտակցության ձևավորման մասին: Այս ամենը նպաստում է վերջիններիս մոտ իրավագիտակցության բարձրացմանը:

Քաղաքացու և իշխանության միջև խզման պատճառը օրենքի և արդարության պակասն ու կամայական դրսևորումներն են: Այս իսկ պատճառով քաղաքացիները սկսել են էլ ավելի քիչ վստահել իշխանական էլիտային: Իսկ ինչպես ցույց է տալիս քաղաքական պատմությունը՝ առանց հասարակության կողմից իշխանության նկատմամբ վստահության չի կարող լինել խաղաղություն: Վստահությունը հիմնվում է հարգանքի և արդարության վրա, որի բացակայության դեպքում իշխանության լեգիտիմությունը կտրուկ նվազում է: Այսպիսի իրավիճակը բնորոշ է նաև մեր հասարակությանը:

Հարկ է նկատել, որ պետության և քաղաքացիական հասարակության փոխհարաբերություններում հնարավոր են երկու տարբեր սխեմաներ: Առաջին սխեմայի դեպքում իշխանությունը վատ է վերաբերում քաղաքացիական հասարակության

կամավորական միություններին և ամեն կերպ խոչընդոտում է դրանց գործունեությունը: Սա կարող է հանգեցնել երկու հետևանքի. առաջինը՝ կամավորական միությունները սկսում են, իրենց հերթին, կտրուկ կերպով քննադատել իշխանությանը, և արդյունքում առաջանում է «դիսիդենտական» քաղաքացիական հասարակություն: Նմանօրինակ քաղաքացիական հասարակության տարրեր (հենց տարրեր, քանի որ ամբողջական քաղաքացիական հասարակության մասին այստեղ խոսել չի կարելի) կային Խորհրդային Միության տարիներին:[193]

Երկրորդ սխեմայի, այսինքն՝ կամավորական կազմակերպությունների և պետության համագործակցության դեպքում քաղաքացիական հասարակությունը կզարգանա առանց խոչընդոտների:[194]

Նկատենք, որ բազմաթիվ հասարակական կազմակերպություններ տիրապետում են լրացուցիչ մասնագիտական տեղեկատվության, ինչն անհրաժեշտ է պետական մարմիններին պատշաճ և առավել արդյունավետ կերպով կառավարման և բնակչության կարիքների բավարարման համար: Ի դեպ՝ հասարակական կազմակերպություններն ավելի մոտ են բնակչությանը և ավելի շատ են կապված վերջինիս հետ, քան պետական կառավարման մարմինները:[195]

Սա ևս մեկ ապացույց է այն բանի, որ քաղաքական գործընթացի տեսանկյունից քաղաքացիական հասարակությունն ավելի լավ է պատկերացնում իրերի իրական վիճակը և իշխանության հետ համագործակցությամբ կարող է նպաստել օրգանական պետության ձևավորմանը: Այսինքն՝ իշխանության և քաղաքացիական հասարակության միջև պետք է լինի ինտերակտիվ կապ օրգանական պետություն ստեղծելու համար:

«Ինտերակտիվ քաղաքականությունը» միակողմանի «վերևից-ներքև» սկզբունքով իշխանական հարաբերություն չէ, այլ քաղաքական գործընթացի և, ընդհանրապես,

---

[193] **БарабашевА.**Соотношение государственного управления и местного самоуправления в гражданском обществе, Формирование гражданского общества.Гражданское общество: первые шаги / Под редакцией СПб.,А.Ю.Сунгурова, 1999, с.43.

[194] Նույն տեղում, էջ 44:

[195] **Мерсиянова И.**Государственное управление и самоуправления в гражданском обществеФормирование гражданского общества.Гражданское общество: первые шаги / Под редакцией СПб.,А.Ю.Сунгурова, 1999, с.47.

քաղաքական որոշումների ընդունման գործընթացի սուբյեկտների սոցիալական փոխգործակցության որոշակի ձև:[196]

Պետության և քաղաքացիական հասարակության փոխադարձ ինքնավարության դեպքում տարբեր ոլորտներում պետության կարգավորիչ ազդեցության բացակայության պայմաններում (իհարկե, ազդեցությունը պետք է լինի ժողովրդավարական վերահսկողության ներքո)՝ նույնիսկ ամենաժամանակակից և բարձր կազմակերպված քաղաքացիական հասարակությունում ձևավորվում է վակուում, որը շատ արագ լրացվում է քրեական կառուցվածքներով և նոմենկլատուրային էլիտայով:[197]

Քաղաքացիական հասարակության և իշխանության միջև ինտերակտիվ կապը կարևոր պայման է հասարակական-քաղաքական մշտական խոսույթի ապահովման համար, որն իր հերթին կարող է նպաստել նաև իշխանության լեգիտիմության ամրապնդմանը: Եթե քաղաքացիական հասարակության և իշխանության միջև բացակայում է կառուցողական (կամ ընդհանրապես) խոսույթը, ապա դա նպաստում է հասարակության օտարմանը: Հասարակության օտարումը իշխանությունից ավտորիտար պրակտիկայի վառ օրինակ է:

Ավտորիտարիզմն անխուսափելիորեն կազմաքանդում է հակադարձ կապերը, այսինքն՝ «ներքևից», քաղաքացիական հասարակությունից եկող ուղերձ-հաղորդումները գործերի իրական վիճակի մասին: Արդյունքում կառավարումը դառնում է անբովանդակ, ինչը հանգեցնում է պետության և հասարակության փոխօտարման խորացմանը: Հակադարձ կապերի աճը, ընդհակառակը, կարող է ոչ միայն մեղմացնել փոխօտարումը, այլև նվազեցնել սխալներով լի կառավարչական ռիսկերը, նախադրյալներ ստեղծել արդիականացման նոր խնդիրների ձևակերպման, դրանց լեգիտիմացման համար:[198]

---

[196]**Виноградова Т.**“Открытость” процесса принятия политических решений как предпосылка и следствие реализации “интерактивной политики”(на примере бюджетного процесса Санкт-Петербурга).Формирование гражданского общества.Гражданское общество: первые шаги / Под редакцией СПб.,А.Ю.Сунгурова, 1999, с.53.

[197]Նույն տեղում, էջ 10:

[198]**Հարությունյան Մ.** Արդի հայ հասարակությունը և օտարված գիտակցության փիլիսոփայությունը, Եր, Նաիրի, 2014, էջ 224:

Որքան մեծ է օտարման աստիճանը, անըմբռնողությունը, այնքան սուր է հաղորդակցությունը: Եվ հակառակը, որքան կարգավորված են պետության և քաղաքացիական հասարակության փոխգործակցության ճանաչողական ընթացակարգերը, այնքան ավելի խաղաղ և կառուցողական է նրանց միջև հաղորդակցությունը: Նույնիսկ ամենասուր երկխոսությունը ունի ոչ այնքան կոնֆլիկտային, որքան հաշտեցնող բնույթ՝ հնարավորություն տալով իր դերակատարներին միմյանց ավելի լավ հասկանալ, հստակեցնել դիրքորոշումները, հասկանալ խնդիրների էությունը:[199]

Քաղաքացիական հասարակությունը, ըստ էության, պետք է անկախ լինի պետությունից: Սակայն այն գոյություն չունի մեկուսացման մեջ, և բացարձակ ազատությունն ու անկախությունը հնարավոր չեն: Ցանկացած հասարակության մեջ երրորդ սեկտորը կամ որ նույնն է՝ քաղաքացիական հասարակությունը կապված է այլ երկու սեկտորների՝ պետության և բիզնեսի հետ. տարբեր են միայն կապերի բնույթը և ինտենսիվությունը:[200] ՀՀ-ում, որտեղ քաղաքացիական հասարակությունը սկսեց արագ զարգանալ միայն վերջին տասնամյակում, դեռևս լիարժեքորեն չի դարձել անկախ, ուժեղ քաղաքական դերակատար, և կա որոշակի վտանգ, որ այն կարող է կախվածության մեջ ընկնել իշխանությունից:

Սրանից խուսափելու համար անհրաժեշտ է հստակ պատկերացնել, թե ո՞րն է իրականում իշխանության և քաղաքացիական հասարակության միջև կապի և երկխոսության տրամաբանությունը, և թե ո՞ր գործոններն են առավել մեծ ազդեցություն ունենում այդ հարաբերությունների վրա:

Կարծում ենք, որ այս երկու ինստիտուտների միջև երկխոսության և կապի կարևորությունը պայմանավորված է պետության զարգացման և հզորացման հրամայականով: Սակայն իրական հասարակական և քաղաքական գործընթացները միշտ չէ, որ ուղղորդվում են այս տրամաբանությամբ: ՀՀ-ում այսօր բավական տարածված են

---

[199]**Зайцев А.** Диалог государства и гражданского общества как социально- политическая категория, «Социум и власть», №1(33), 2012, с.32.

[200]**Белокурова Е.** Модели взаимодействия третьего сектора с региональными органами власти в России, Формирование гражданского общества.Гражданское общество: первые шаги / Под редакцией , СПб.,А.Ю.Сунгурова1999, с. 189.

տարատեսակ քաղաքացիական նախաձեռնություններ, որոնք երբեմն ազրեսիվ վարքագիծ են դրսևորում իշխանության նկատմամբ։ Այստեղ հարկ է նկատել, որ երբեմն քաղաքացիների մոտ պետությունը նույնացվում է իշխանության հետ, որը շատ վտանգավոր երևույթ է: Կա նաև մեկ այլ դրսևորում՝ ապատիա: Քաղաքացիների զգալի հատվածը անտարբեր է երկրում տիրող սոցիալական և քաղաքական գործընթացների նկատմամբ: Իսկ այդ հատվածը պոտենցիալ արտազաղթող հատվածն է:

Սակայն, ինչպես ցույց է տալիս քաղաքական պրակտիկան, ժողովրդավարական համակարգի շրջանակներում պետության և քաղաքացիական հասարակության միջև փոխհարաբերությունները պետք է կառուցվեն այլ սկզբունքների հիման վրա: Ժողովրդավարական համակարգում պետությունը և քաղաքացիական հասարակությունը շահագրգռված են փոխադարձ աջակցությամբ և զարգացմամբ, իրենց գործունեության արդյունավետության բարձրացմամբ:

Քաղաքացիական հասարակությունը առանց ուժեղ պետության չի կարող բավարարել հասարակության զգալի հատվածի պահանջները, իսկ պետությունն էլ պետք է քաղաքացիական հասարակության մեջ տեսնի ժողովրդավարության ձևավորման որոշակի դերակատարի: Այդ պատճառով՝ ժամանակակից արևմտյան հետազոտողները (Ջ. Էկիերտը, Օ. Էնկարսյոնը) գտնում են, որ պետության և քաղաքացիական հասարակության ուժը պետք է հավասարապես մեծանա: Քաղաքացիական հասարակությունը չպետք է հիմնվի նեղ, եսասիրական պահանջների վրա: Այն պետք է մտահոգված լինի ողջ հասարակության և նրա առանձին ինստիտուտների շահերի հավասարակշռության պահպանմամբ:[201]

Ժողովրդավարության իմաստն այն չէ, որ ժողովուրդը տիրապետի իշխանությանը, այլ այն, որ իշխող էլիտան լինի մշտապես փոփոխելի, հաշվի առնի իր ժողովրդի կարծիքը, այլ ոչ թե անտեսի այն հանուն իր եսասիրական պահանջների:

Հաշվի առնելով այս ամենը՝ կարևոր է նշել, որ այսօրվա առողջ ու ազդեցիկ քաղաքացիական հասարակությունը չի կարող գոյություն ունենալ առանց պետության և չի

---

[201] **Баранов Н.**Современная демократия: эволюционный подход. Балт. гос. техн. ун-т. СПб., 2007, с. 162.

կարող առանձնացված լինել պետությունից: Այն չպետք է խստորեն հակադրվի պետությանը:[202]

Այս գաղափարների գործնական կիրառությունը հնարավորություն կտա առողջացնել նաև իշխանության և քաղաքացիական հասարակության միջև խոսույթը ՀՀ-ում, որը կնպաստի ընդհանուր իրավագիտակցության բարձրացմանը: Չէ՞ որ առանց պետության (պետական մարմինների և ինստիտուտների)՝ քաղաքացիական հասարակությունը (և նրա ինստիտուտները) իր ժամանակակից իմաստով գոյություն ունենալ չի կարող: Քաղաքացիական հասարակությունը ուժ և զարգանալու հնարավորություն է ստանում հենց պետության հետ փոխգործակցության (երկխոսության և համագործակցության) կամ հակադրության (կոնֆլիկտի) պայմաններում, ինչը, ամենևին, չի նշանակում, որ քաղաքացիական հասարակության ինստիտուտները գործում են իրենց սեփական օրենքներով, որոնք տարբերվում են և կախված չեն ազգային օրենսդրական համակարգից և քաղաքական վարչակարգից: Դրա հետ մեկտեղ, քաղաքացիական հասարակությունը չի կարող մնալ քաղաքացիական, եթե այն չկարգավորվի քաղաքական մեթոդներով: Միայն պետությունն է, որը ղեկավարվում է լեգիտիմ իշխանության կողմից երկրում գործող օրենսդրության համաձայն, որը կարող է արդյունավետ կերպով պաշտպանել քաղաքացիական հասարակությանը անարդարություններից և ներդաշնակել վերջինիս մասնավոր շահերը համընդհանուր պետական և հանրային շահերի հետ:[203]

ՀՀ-ում միմյանց միջև երկխոսության և իրավագիտակցության բարձրացման համար քաղաքացիական հասարակությունը և պետությունը պետք է հանդես գան որպես մշակույթի հաստատություններ:

Մշակույթը և մասնավորապես՝ իրավական ու քաղաքական մշակույթը պետության և քաղաքացիական հասարակության զարգացման անհրաժեշտ պայմաններն են:

---

[202]**Пугачев В.**Плюрализм власти как важнейшее условие формирования гражданского общества, Формирование гражданского общества. Гражданское общество: первые шаги / СПб.,Под редакцией А.Ю.Сунгурова, 1999. с. 10.

[203]**Грудцына Л.** К вопросу о формировании государственной концепции развития гражданского общества в России // журнал «Экономика и право. XXI век» №1 (январь*март) 2010г. www.economy.law-books.ru/1-1-10/7-1-1-10.doc /18.07.2014/.

Պետականության քաղաքական փոխակերպումը, քաղաքացիական հասարակության ձևավորումը պետք է հիմնված լինեն իրավական մշակույթի վրա և արտահայտեն դրա էությունը:[204]

Մտնելով իշխանության հետ երկխոսության մեջ, պաշտպանելով մարդկանց իրավունքներն ու շահերը՝ քաղաքացիական, հասարակական կազմակերպություններն անխուսափելիորեն մտնում են քաղաքական գործընթացի մեջ:[205] Եվ ինչպես, մեջբերելով Լ. Նիկովսկայայի խոսքերը, նշում է Ա. Զայցևը. «Յուրաքանչյուր առանձին կազմակերպություն կարող է լինել ամբողջապես ապաքաղաքական, սակայն քաղաքացիական հասարակությունը գոյություն չունի քաղաքականությունից դուրս: Ավելին՝ այն իր հետ բերում է քաղաքականության մեջ նոր սկիզբ, իր ձևավորման սկզբից իսկ փոխում է ավանդական քաղաքական ուժերի կողմից ընդունված կանոններն ու պատկերացումները»:[206]

Այսպիսով՝ ուսումնասիրելով և վերլուծելով իրավագիտակցության դրսևորումը պետության և քաղաքացիական հասարակության խոսույթում՝ հանգում ենք այն եզրակացության, որ ՀՀ-ում այս երկու ինստիտուտների միջև թույլ երկխոսությունը, երբեմն նաև դրա բացակայությունը վկայում են հիմնականում ցածր իրավագիտակցության մասին՝ չնայած այն բանին, որ քաղաքացիական հատվածում կարելի է նկատել իրավագիտակցության բարձրացման որոշակի նախադրյալներ: Վերջին շրջանում այս երկու ինստիտուտների միջև քաղաքական խոսույթը վեր է հանում սեփական իրավունքների և շահերի ներկայացման և դրանց պաշտպանության համար քաղաքացիական տարբեր նախաձեռնությունների պայքարը, ինչը փաստում է հասարակության այդ հատվածի մոտ իրավագիտակցության մակարդակի որոշակի աճի մասին: Սակայն հարկ է նաև նկատել, որ այսօր դեռևս չի հաջողվում ձևավորել պետության

---

[204]**Грудцына Л.** К вопросу о формировании государственной концепции развития гражданского общества в России // журнал «Экономика и право. XXI век» №1 (январь*март) 2010г. www.economy.law-books.ru/1-1-10/7-1-1-10.doc /18.07.2014/.

[205]**Зайцев А.** Диалог государства и гражданского общества как социально- политическая категория, «Социум и власть», №1(33), 2012, с.32.

[206]Նույն տեղում, էջ 32-33:

և քաղաքացիական հասարակության միջև իրական երկխոսություն, ինչը, անկասկած, կարող է նպաստել հասարակական-քաղաքական ոլորտում լուրջ փոխզիջումային ձեռքբերումներին, որոնք կլինեն արդյունավետ ոչ միայն քաղաքական, այլ, ինչն առավել կարևոր է, ազգային-պետական շահի համար: Դա նշանակում է, որ պետության և քաղաքացիական հասարակության մոտ պետք է ձևավորել ընդհանուր և շատ դեպքերում համատեղելի և համահունչ իրավագիտակցություն, որը հիմքեր կստեղծի օրգանական պետության ձևավորման համար: Այսպիսի նպատակին հասնելու միակ ճանապարհը օրենքի, օրինականության նկատմամբ անաչառության և արդարացիության ապահովումն է բոլորի համար, ինչը, իհարկե, պետության գործառույթն է, իսկ քաղաքացիական հասարակությունը կարող է օժանդակել վերջինիս այդ գործում:

## 3.2. ՀՀ քաղաքական գործընթացներում քաղաքացիական հասարակության և իրավագիտակցության հիմնախնդիրները

Նախորդ գլխում մենք ուսումնասիրեցինք քաղաքացիական հասարակության վերաբերյալ հայեցակարգային հիմնախնդիրներ, ուսումնասիրեցինք քաղաքացիական հասարակության և իրավագիտակցության փոխառնչությունների և հասարակության իրավագիտակցության բարձրացման տեխնոլոգիական որոշ հարցեր:

Այս հիմքի վրա փորձենք դիտարկել հայ հասարակությունում քաղաքացիական հասարակության գործառնության բնույթի, ինչպես նաև վերջինիս մոտ իրավագիտակցության դրսևորման առանձնահատկությունները:

Հայաստանի Հանրապետությունում վերջին տասնամյակում քաղաքացիական նախաձեռնություններն ակտիվացել են, և կարելի է արձանագրել, որ դրանք գրանցել են նաև առանձին լուրջ հաջողություններ: Բավական է հիշել վերջին տարիների ընթացքում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կողմից լայն հասարակական և քաղաքական նշանակություն ունեցող խնդիրների վերաբերյալ կազմակերպված

բնապահպանական, մշակութային գործոնությունները: Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին (այո,՛ ներկայացուցիչներին, որովհետև խոսել ամբողջական քաղաքացիական հասարակության մասին դեռևս վաղ է) հաջողվեց ձախողել պետական և տեղական իշխանական մարմինների կողմից նախաձեռնված մի շարք ծրագրեր: Օրինակ՝ Մաշտոցի պուրակը, քաղաքային տրանսպորտի թանկացման ծրագիրը, և, մասնակիորեն, նաև վերջին շրջանում լայն հասարակական և քաղաքական արձագանք ստացած կենսաթոշակային բարեփոխումների ծրագիրը: Դիտարկման մեթոդը մեզ թույլ է տալիս վերոնշյալ իրողությունների հիման վրա փաստել ՀՀ-ում քաղաքացիականության մշակույթի և իրավագիտակցության ձևավորման որոշակի դրսևորումների մասին, ինչը, անկասկած, դրական գործընթաց է:

Բայց արդյո՞ք մենք կարող ենք խոսել ՀՀ-ում քաղաքացիական հասարակության ձևավորման լուրջ նախադրյալների մասին, քանի որ արձանագրված դրական միտումներին զուգահեռ հայ հասարակության մոտ հիմնականում տեսանելի է նաև իրավագիտակցության ցածր մակարդակ, և, ինչն ամենավտանգավորն է՝ ընդգծված իրավական նիհիլիզմ:

Հակասական այս միտումները հասկանալու և դրանց պատասխանելու համար կարծում ենք՝ անհրաժեշտ է խնդիրը դիտարկել իշխանության և քաղաքացիական հասարակության միջև կապի տրամաբանության շրջանակներում՝ պարզելու համար, թե ո՞ր գործոններ են առավել մեծ ազդեցություն ունենում այս հարաբերությունների վրա:

Ինչպես նշեցինք՝ քաղաքացիական շարժումները, տարբեր սոցիալ-քաղաքական հարցերի վերաբերյալ քաղաքացիական նախաձեռնություններն այսօր բավական լայն ընդգրկում ունեն և կրում են շարունակական բնույթ: Փորձենք հասկանալ՝ արդյո՞ք սա քաղաքացիական հասարակության ձևավորման նշան է, թե՞ դրա հիմքում ընկած են այլ գործոններ:

Ինչպես նշեցինք նախորդ գլխում՝ ոչ կառավարական կազմակերպությունների, քաղաքացիական նախաձեռնությունների թվի մեխանիկական աճը դեռևս ոչ մի կերպ չի կարող նշանակել քաղաքացիական հասարակության ձևավորման բավարար հիմք:

Այս գաղափարը հիմնավորող մեկ այլ օրինակ է Ա. Փորսուղյանի եզրահանգումն այն մասին, որ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների թվաքանակի աճը, ինչպես նաև նրանց կողմից տրամադրվող օժանդակության ծավալը չեն կարող լուծել Հարավային Կովկասի երկրներում քաղաքացիական հասարակության թույլ լինելու հիմնախնդիրը։[207]

Առաջին հերթին նշենք, որ քաղաքացիական հասարակության իմաստը պետության դեմ պայքարը չէ, այլ պետության հետ համագործակցելն է։

ՀՀ-ում քաղաքացիական նախաձեռնությունների թվի մեխանիկական աճը և դրանց հատուկ դերը, մեր կարծիքով, հիմնականում կախված է ընդհանուր քաղաքական համատեքստից։ Դիտարկենք դրանց պատճառները։

Պատճառներից մեկը, կարծում ենք, կուսակցությունների՝ որպես քաղաքացիական հասարակության ինստիտուտների գործառնության ցածր արդյունավետությունն է։ Ակնհայտ է, որ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները քաղաքական կուսակցությունների մոտ գրեթե չեն տեսնում հուսալի գործընկերոջ. արդյունքում ստացվում է մի իրավիճակ, երբ հենց կուսակցություններն են տարբեր հարցերով դիմում քաղաքացիական սեկտորին՝ որպես իրենց համար այս կամ այն խնդիրը լուծելու սոցիալական բազա։ Սրա պատճառներից է միգուցե նաև այն, որ, օրինակ, եթե Արևմուտքում կուսակցությունները ձևավորվել են «ներքևից» հասարակության բնական զարգացման արդյունքում, ապա հետխորհրդային ՀՀ-ում ֆորմալ բազմակուսակցական համակարգը հաստատվել է հիմնականում իշխանության կողմից՝ վերևից։

Այսօր, ինչպես նշում են սոցիոլոգները, հասարակական գիտակցության մեջ ժողովրդավարական արժեքների աստիճանական արմատավորումը տեղի չի ունենում կուսակցությունների միջոցով, որոնք ի վիճակի չեն և չեն ձգտում վերաձևակերպել ձևավորվող ժողովրդավարացման ներուժը ակտիվ քաղաքական պահանջների։ Փոխարենը սկսեց ձևավորվել «կադրային» կուսակցական համակարգ, որը չունի նշանակալի չափով սոցիալական բազա և ուղղված է էլիտայի ներկայացուցիչների միջոցով պահպանելու

---

[207] **Բեգլարյան Ա.** Քաղաքացիական հասարակության զարգացման գործընթացը Հայաստանում. Եր., Լրաբեր Հասարակական Գիտությունների, № 1, 2013, էջ 126։

ներիշխանական կապը և սոցիալական աջակցության մոբիլիզացիան՝ ձգտելով ընտրությունների միջոցով ինստիտուցիոնալացնել սեփական մասնակցությունը հրապարակային քաղաքականության մեջ:[208]

Եթե կուսակցությունների աշխատանքը հասարակության համար լայն նշանակություն ունեցող հարցերում արդյունավետ չէ, ապա պարզ է, որ քաղաքացիական հասարակությունը հույսը դնում է բացառապես իր վրա՝ տարբեր հարցեր լուծելու նպատակով շրջանցելով կուսակցություններին: Արդյունքում՝ ստացվում է մի իրավիճակ, երբ քաղաքացիներն իրենց հուզող խնդիրների լուծումը չեն տեսնում ինստիտուցիոնալ մակարդակում, և, բնականաբար, պայքարը տեղափոխվում է փողոց: Սա է, կարծում ենք, քաղաքացիական նախաձեռնությունների թվի մեխանիկական աճի պատճառներից մեկը:

Հաջորդ պատճառը, կարծում ենք, պետք է փնտրել քաղաքացիական հասարակության նկատմամբ իշխանության վերաբերմունքի մեջ:

Ընդհանուր առմամբ, ՀՀ-ում գործնականում իշխանությունը բացասական վերաբերմունք ունի քաղաքացիական հասարակության նկատմամբ: Դրա վկայությունն է այն, որ ոստիկանները գրեթե միշտ բախման մեջ են տարատեսակ քաղաքացիական նախաձեռնությունների հեղինակների և դրանց անդամների հետ:

Իշխանությունը դիտել և շարունակում է քաղաքացիական հասարակությունը, ինչպես և ընդդիմությունը դիտել ոչ թե որպես գործընկեր, այլ որպես իշխանությանը քննադատող կառույցներ, որոնք «անարդարացիորեն» փորձում են վերահսկել վարչական-բյուրոկրատական ապարատը: Այնպես որ, այստեղ կարելի է նույնիսկ խոսել ոչ թե իշխանության կողմից աջակցության բացակայության մասին, այլ, ընդհակառակը, իշխանական մարմինները հակադրվում են քաղաքացիական հասարակությանը:[209]

---

[208]**Кулик А.** Политические партии: опора демократии или костыль «режимной системы» постсоветской РоссииГражданское общество: первые шаги / СПб., Под редакцией А.Ю.Сунгурова. 1999, с. 126-127.

[209]**Баранов Н.** Ответственность гражданского общества // Государство и гражданское общество в России: новые практики взаимодействия: Коллективная монография. Волгоград: Волгоградское научное издательство, 2013. С.137-145.http://nicbar.narod.ru/statia89.htm /17/07/2014/.

Արդյունքում՝ սոցիալական շարժումները կարող են դրսևորել ռազմատենչ և խելացնոր պատկերացումներ քաղաքացիական պատասխանատվության վերաբերյալ կամ էլ խուսափել քաղաքացիական պատասխանատվությունից: Նրանց գործունեությունը կարող է հանգեցնել բռնության, եթե նրանք ընկել են հուսահատության մեջ՝ հանդիպելով քաղաքական համակարգի կողմից անհանդուրժողականության, անըմբռնողության կամ էլ ռեպրեսիվ պետական վերաբերմունքի: Եթե քաղաքական համակարգն ունի գոնե նվազագույն զգայունություն, ապա նրանք կարող են վերակենդանացնել քաղաքացիական և քաղաքական կյանքը՝ մոբիլիզացնելով մարդկանց և կազմակերպելով քննարկումներ:[210]

Ինչպես նշում են ամերիկացի հետազոտողներ Մ. Ֆոուլին և Բ. Էդվարդսը՝ «Այնտեղ, որտեղ պետությունը պատրաստ չէ համագործակցել, իսկ նրա ինստիտուտները ժողովրդավարական չեն և վատ են արձագանքում քաղաքացիների պահանջներին, ապա նման պարագաներում կոլեկտիվ գործողությունների բնույթը արմատապես տարբերվում է ուժեղ և ժողովրդավարական համակարգերից: Նման հասարակության մեջ պետական քաղաքականությունը ժխտում է քաղաքացիական նպատակներին հասնելու քաղաքացիների կազմակերպված ջանքերը երբեմն բացահայտ ճնշման միջոցով, երբեմն էլ՝ պարզապես անտեսելով դրանք: Նման դեպքերում առաջանում են քաղաքացիական միավորումների ավելի ագրեսիվ ձևեր, շարքային քաղաքացիները կամ ավելի ու ավելի են ներգրավվում պետության դեմ պայքարում կամ էլ դրսևորում են ապատիա»:[211]

Այս համատեքստում արդիական է դառնում Բ. Ֆլիվբերգի պնդումն առ այն, որ գործնականում ժողովրդավարության առաջընթացը հնարավոր է հիմնականում սահմանադրական և ինստիտուցիոնալ բարեփոխումների, իշխանական մեխանիզմների և դասերի արտոնությունների պրակտիկայի դեմ ուղիղ, երբեմն բռնի հակադրման միջոցով: «Ցանկանում եք մասնակցել քաղաքականությանը, սակայն դրա հնարավորությունները սահմանափակ են, ապա միավորվեք համանման հայացքների տեր մարդկանց հետ և

---

[210]**Barnes S., Kaase M.** Political Action: Mass Participation in Five. Western Democracies. Beverley Hills, CA: Sage, 1979. p. 40. http://www.u.arizona.edu/~mishler/PoliticalAction%20chapts%201-4.pdf /19/07/2014/.

[211]**Фоули М., Эдвардс Б.** Парадокс гражданского общества. Journal of Democracy, 1996, vol. 7, #3, p. 38-52http://old.russ.ru/journal/predely/97-11-25/fouli.htm /06.07.2014/.

պայքարեք հանուն այն բանի, ինչ ցանկանում եք: Օգտագործեք այն միջոցները, որոնք արդյունավետ են ձեր նպատակի համատեքստում, որպեսզի կարողանաք կոտրել այն մարդկանց դիրքորոշումները, ովքեր փորձում են սահմանափակել ձեր մասնակցությունը»:[212]

Այս տեսական գաղափարի գործնական կիրառումը մենք տեսնում ենք մեր հասարակությունում. քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները իրենց պայքարի կամ նախաձեռնությունների իմաստը տեսնում են ոչ թե իշխանության հետ համագործակցության մեջ, այլ հենց իշխանությանը հակադրվելու, իշխանության դեմ պայքարի մեջ՝ ինչը հասարակությունը և պետությունը պահում է մշտապես անկայուն վիճակում:

Իշխանության նման վերաբերմունքը քաղաքացիական նախաձեռնությունների նկատմամբ, մի գուցե, քաղաքացիական հասարակության մասին քաղաքական էլիտայի թյուր պատկերացումների հետևանք է: Իշխանությունը շարունակում է քաղաքացիական հասարակությունը դիտել որպես իր դեմ պայքարող հասարակություն և հիմնականում մերժում է քաղաքացիական հասարակության հետ երկխոսությունը: Այս վերաբերմունքը քաղաքացիական հասարակության մոտ առաջացնում է առավել ագրեսիվ վարքագիծ: Քաղաքացիական հասարակությունն էլ իր հերթին սկսում է հակադրվել պետությանը:

Հարկ է նշել, որ ՀՀ-ում հասարակություն-պետություն հարաբերությունների միջև խզումը պայմանավորված է նաև քաղաքականության նախաձեռնությամբ. քաղաքականության նախաձեռնումն իրականացվում է հիմնականում վերևից՝ իշխանական մարմինների կողմից:

Սակայն պետք է նշել, որ քաղաքականության նախաձեռնումը, նորքաղաքական միտքը կարող է առաջանալ քաղաքական համակարգի ցանկացած ոլորտում: Այն կարող է «շրջանառության մեջ դրվել վերևից»՝ պետության քաղաքական առաջնորդի կողմից, կառավարության կողմից, կառավարական ցանկացած մարմնի կողմից, սակայն կարող է «շրջանառության մեջ դրվել նաև ներքևից»՝ հասարակության կողմից, ԶԼՄ-ների կողմից,

[212]**Фливберг Б.** Рациональностьивласть: еще раз о кейс-стади. Социс, №1, 2007, с.69. (Баранов Н.Современная демократия: эволюционный подход /Н.А. Баранов; Балт. гос. техн. ун-т. СПб., 2007, с. 165-166).

քաղաքական կուսակցությունների, շահերի խմբերի, գիտնականների, գիտահետազոտական ինստիտուտների և այլնի կողմից: Ընդ որում՝ յուրօրինակ գաղափարների առաջադրումը քաղաքական առաջնորդների մենաշնորհը չէ. ավելին՝ քաղաքական առաջնորդները հազվադեպ են առաջարկում և նախաձեռնում իսկապեսնոր գաղափարներ: Բան նայն է, որ քաղաքականության նախաձեռնության գործում ավելի կարևոր դեր ունեն լրագրողները, գիտնականները, փիլիսոփաները. հենց նրանք են առաջադրում նոր գաղափարներ, որոնք այնուհետև վերցնում են քաղաքական գործիչները և կուսակցությունները:[213]

Հարկ ենք համարում ևս մեկ անգամ նշել, որ քաղաքացիական հասարակության և պետության միջև ինտերակտիվ կապը հասարակության ողջ հյուսվածքի արդյունավետ կենսագործունեության ապահովման անհրաժեշտ և լավագույն ձևն է:

Ինչպես, օրինակ, իր եզրակացություններում նշում է Վ. Քարդումյանը, ամփոփելով Լ. Գումպլովիչի հայացքները, պետության զարգացման և արդիականացման կարևոր պայման է հանդիսանում հասարակության տարբեր խավերի միջև ծավալվող մշտական պայքարը: Պայքարը, որը, ըստ Գումպլովիչի, հանդիսանում է պետության զարգացման կարևորագույն հիմքերից մեկը: Պայքարը իշխող դասակարգի և այլ դասակարգերի միջև կարելի է դիտարկել որպես պետության զարգացման խթանիչ գործոն, հասարակության իրավիճակի բարելավման և մշտական արդիականացման կարևոր բազիս: Պայքարը տարբեր դասակարգերի միջև մշտապես զգոն է պահում իշխող էլիտային և դրդում նրան անել էլ ավելին հասարակության սոցիալական պահանջները բարելավելու համար, ինչը, նաև պետության զարգացման շարժառիթ է:[214] Հարկ է նշել, որ պետության զարգացման և հետևաբար՝ նրա արդիականացման կարևորագույն գործոնի դերում, ըստ Գումպլովիչի,

---

[213]**Хейвуд Э.** Политология. Учебник для студентов вузов /Пер. с англ. под ред. Г.Г. Водолазова, В.Ю. Вельского. М., ЮНИТИ-ДАНА, 2005, с. 495-496.

[214]**Քարդումյան Վ.** Լյուդվիգ Գումպլիվիչի սոցիալական պետության գաղափարները մոդեռնիզացիայի տեսության համատեքստում: Քաղաքագիտության հարցեր 2012, Եր., Մանկավարժ հրատ, 2013, էջ 168:

հանդես է գալիս մշտական պայքարը քաղաքական էլիտայի և ժողովրդական տարբեր խմբերի միջև:[215]

Այս համատեքստում անհրաժեշտ ենք համարում նշել, որ քաղաքացիական հասարակության և պետության միջև հարաբերությունները չպետք է դիտարկել միմյանց հակադրման, մեկը մյուսին գերակայելու համատեքստում, ինչը մենք տեսնում ենք քաղաքացիական հասարակության վերաբերյալ տարածված սահմանումներում: Մեր կարծիքով՝ քաղաքացիական հասարակության և պետության միջև հավասարակշռված հարաբերությունը անհրաժեշտ է օրգանական պետություն ստեղծելու համար:

Հաջորդ և ամենակարևոր պատճառներից մեկը հայ հասարակության մոտ իրավական նիհիլիզմի առկայությունն է:

Իրավական նիհիլիզմը, ընդհանուր առմամբ, իրավունքի, իրավակարգի, օրենքների նկատմամբ հավատի բացակայությունն է, օրենքների նկատմամբ բացասական և անհարգալից վերաբերմունքը:[216]

Իրավական նիհիլիզմի պատճառները տարբեր են:

Բնութագրելով հետխորհրդային Ռուսաստանը՝ Տումանովը նշում է, որ երբ երկիրը հրաժարվեց կառավարման ամբողջատիրական մեթոդներից և փորձեց որդեգրել իրավական պետության ուղին, երբ մարդիկ իրական հնարավորություն ստացան օգտվելու իրավունքներից և ազատություններից, այդ ժամանակ անմիջապես նկատվեց հասարակության իրավագիտակցության և իրավական մշակույթի ցածր մակարդակը, ինչպես նաև իրավունքի նկատմամբ անտարբեր վերաբերմունքը և դրա թերագնահատումը:[217] Պետք է նկատել, որ այս երևույթը բնորոշ էր ոչ միայն հետխորհրդային Ռուսաստանին, այլև հետխորհիդային մյուս երկրներին՝ չնչին տարբերություններով: ՀՀ-ում ևս իրավիճակը չէր տարբերվում, քանի որ մեր հասարակությունը նույնպես սովոր էր իշխանությունների վարած վերահսկողական

---

[215]Նույն տեղում, էջ 163:

[216]**Донченко Р**. Правовой нигилизм как устоявшееся общесоциальное явление, Юрист, №6, 2005,http://www.lawmix.ru/comm/1126/, /03.04.2014/.

[217]**Туманов В.** Правовой нигилизм в историко-идеологическом ракурсе. Государство и право. №8, М., Наука, 1993,с. 52-58.

քաղաքականությանը, և, իհարկե, վերջինիս համար բավականին դժվար էր յուրացնել նոր իրավական համակարգը, նոր իրավունքները և ազատությունները, որոնցից օգտվելու հմտությունները նույնիսկ այսօր դեռևս ամբողջությամբ ձևավորված չեն մեր հասարակության իրավագիտակցության մեջ:

Ինչպես նշում է Իլյինը. «Արդար, օրինապահ կարելի է լինել միայն սեփական համոզմունքով և որոշումով: Առանց դրա չկա իրավագիտակցություն և արդարություն: Եվ այդ դեպքում մարդիկ դառնում են ոչ թե իրավակարգի համար ապավեն, այլ խոչընդոտ: Այս դեպքում պետք է տարբերել օրինապահությունը օրինապաշտությունից, քանի որ առաջին դեպքում մարդիկ ենթարկվում են օրենքին, իսկ երկրորդ դեպքում հարգում են օրենքը: Այսինքն՝ օրինապաշտությունը անհատի կամավոր, այլ ոչ թե պարտադրված դիրքորոշումն է, հետևապես՝ այս դեպքում անհատը հետևում է օրենքին ոչ թե այն պատճառով, որ դրանից վախենում է, այլ այն պատճառով, որ հարգում է այն»:[218]

Իրավական նիհիլիզմի մեկ այլ պատճառ է նաև այն, որ որոշակի հանգամանքներում օրինականության և կարգի մասին գաղափարները կարող են շահագրգիռ առաջնորդների և իշխանական կառույցների կողմից օգտագործվել որպես ուժի գործադրման և մարդու իրավունքների խախտման առիթ, ինչն իր հերթին իրավական նիհիլիզմի առաջացման պատճառներից մեկն է: Սա կարելի է անվանել իրավական կոնֆորմիզմ, երբ իրավունքի և օրինականության գաղափարները հարմարեցվում են իրավիճակին, երբ դրանք օգտագործվում են ոչ թե ի նպաստ, այլ ի վնաս հասարակական շահերի և պահանջների:[219] Այս երևույթն իր ամբողջական դրսևորումն ունի նաև հայկական իրականության մեջ, երբ շատ հաճախ քաղաքացիների խաղաղ ցույցերը, երթերը և հանրահավաքները, ինչպես նաև տարբեր քաղաքացիական նախաձեռնություններ արժանանում են իշխանության կողմից բռնի վերաբերմունքի, որը ներկայացվում է որպես հանրային շահի և սահմանադրական կարգի պաշտպանում, այն ժամանակ, երբ քաղաքացիներն օգտվում են իրենց

[218]**Ильин И. А.** Собрание сочинений : в 10 т. Т. 2. Кн. 1. «Наши задачи»: Статьи 1948-1950гг. / И. А. Ильин; сост., вступ.ст. и коммент. Ю. Т.Лисицы. М., Русская книга, 1993. с. 182.

[219]**Донченко Р.**Правовой нигилизм как устоявшееся общесоциальное явление, Юрист, №62005,)http://www.lawmix.ru/comm/1126//03.04.2014/.

սահմանադրական իրավունքներից և ազատություններից: Այս տեսանկյունից ուշագրավ է Հենդլիի այն կարծիքը, ըստ որի՝ իրավական նիհիլիզմի պատճառ կարող է հանդիսանալ հենց պետությունը: Մեկնաբանները հարց են բարձրացնում, թե ինչու քաղաքացիները պետք է հետևեն օրենքին, երբ այդ նույն օրենքին չի հետևում պետությունը:[220] Օրենքի նկատմամբ հավատի բացակայությունը կազմում է իրավական նիհիլիզմի հիմքը, ինչն արդեն վաղուց ՀՀ-ում ձևավորել է իրավաքաղաքական հակամշակույթ:

Օրենքի համընդհանուր անտեսումը իրավագիտակցության ծայրահեղ ցածր մակարդակի և համարժեք իրավական մշակույթի բացակայության հետևանքն է:[221]

Իրավաքաղաքական նիհիլիզմի լուրջ աղբյուր է մարդու իրավունքների խախտումը, հատկապես այն իրավունքների, ինչպիսիք են՝ կյանքի, արժանապատվության, սեփականության, անվտանգության իրավունքները: Անձի թույլ իրավապական պաշտպանվածությունը հանգեցնում է օրենքի նկատմամբ հավատի նվազման, հասարակության մեջ կարգի և կայունության ապահովման պետության կարողության թուլացմանը: Իրավունքի ոչ պատշաճ կիրառումը չի կարող ձևավորել վերջինիս նկատմամբ դրական վերաբերմունք, այլ հակառակը՝ այն ծնում է դժգոհություն և բողոք:[222] Հաճախ իրավական նիհիլիզմի սուբյեկտները (քաղաքացիները, պաշտոնյաները, պետական մարմինները, հասարակական կազմակերպությունները) ուղղակի չեն համապատասխանեցնում իրենց վարքագիծը իրավական նորմերի պահանջներին, այլ ձգտում են գործել և ապրել «իրենց կանոններով»:[223] Այս երևույթը կարող է բացատրվել տարբեր պատճառներով, սակայն դրանցից առաջնահերթ է այն հանգամանքը, որ հաճախ գործնականում իրավական նորմերը կարող են ոչ լիարժեքորեն արտահայտել իրենց հասցեատերերի շահերը, իրավունքները և ազատությունները:

---

[220]Նույն տեղում, էջ 154:

[221]**Донченко Р.** Правовой нигилизм как устоявшееся общесоциальное явление, Юрист, №62005,)http://www.lawmix.ru/comm/1126//03.04.2014/.

[222]Նույն տեղում:

[223]Նույն տեղում:

Իսկ սեփական իրավունքի իրականացման անհնարինությունը անհատի մոտ ծնում է նրանից օտարման զգացում, իրավական հիասթափություն, կասկածամտություն՝[224] ձևավորելով իրավական նիհիլիզմ: Քաղաքացին դադարում է գնահատել և հարգել իրավունքը, քանի որ նրանում չի տեսնում իր վստահելի երաշխավորին:

Իրավական նիհիլիզմը զուգորդվում է նաև արդարության հասկացության հետ, ինչը նշանակում է հասարակության կառուցվածքի ընդհանուր բարոյական իմաստ, սոցիալական կառուցվածքի սահմանափակ սկզբունքների համալիր, հասարական և քաղաքական ինստիտուտների բարձր լեգիտիմություն:

Ամերիկացի մտածողներ Ջ. Մեդիսոնը, Ա. Համիլթոնը և Ջ. Ջեյը արդարությունը դիտում են որպես կառավարման նպատակ: Նրանց կարծիքով՝ արդարությունը քաղաքացիական հասարակության նպատակն է: Եվ վերջինս միշտ ձգտել և շարունակելու է ձգտել այդ նպատակին:[225]

Իրական քաղաքական կյանքը հաստատում է այս թեզը. որևէ երկարաժամկետ նպատակներ և ծրագրեր չեն կարող իրականացվել անարդար միջոցներով և մեթոդներով:[226]

Եթե արդարություն չկա, առաջանում է իրավական նիհիլիզմ: Իրավական նիհիլիզմը, մեր կարծիքով, քաղաքացիների մոտ ծնում է դիսիդենտական վարքագիծ: Կարծում ենք, որ հայ հասարակության մոտ իրավական նիհիլիզմի առկայությունն իր մեջ պարունակում է բազմաթիվ վտանգներ ինչպես՝ հասարակության, այնպես էլ պետության համար: Իրավական նիհիլիստների մոտ ձևավորվում է այնպիսի իրավական մտածելակերպ, որը նրանց անընդհատ դուրս է բերում փողոց: Չհավատալով օրենքների արդարությանը, իրենց իրավունքների պաշտպանությունը չկապելով պետական և քաղաքական ինստիտուտների հետ՝ հասարակությունը անընդհատ գտնվելու է անկայուն վիճակում: Սա կարող է հանգեցնել երկու հետևանքի. իշխանությունն իր հերթին, հղում անելով պետության մեջ կարգ ու կանոնի պահպանման իր օրինական պարտավորությանը և իրավունքին,

[224]Նույնտեղում:

[225]**Федералист.** Политические эссе А. Гамильтона, Дж. Мэдисона и Дж. Джея: Пер. с англ. / Под общ. ред., с предисл. Н.Н.Яковлева, коммент. О.Л.Степановой. Прогресс–Литера, М., 1994, с. 87-93. http://grachev62.narod.ru/Fed/Fed_11.htm /17/07/2014/.

[226]**Баранов Н.**Современная демократия: эволюционный подход. Балт. гос. техн. ун-т. СПб., 2007, с. 162.

փորձելու է ճնշում գործադրել քաղաքացիների վրա: Եվ ինչպես իրենց հոդվածում Մ. Ֆոուլին և Բ. Էդվարդսն են մեջ բերում Ուոլցերի խոսքերը՝ «Իշխանությունից և հարկադրանքից ոչ մի տեղ չես փախչի»:[227] Իսկ կամավորական միությունները, քաղաքացիական հասարակությունը սկսելու են, իրենց հերթին, կտրուկ կերպով քննադատել իշխանությանը, և արդյունքում առաջանալու է «դիսիդենտական» քաղաքացիական հասարակություն: Այս երկու հետևանքներն էլ ՀՀ-ում ուղղակիորեն պայմանավորված են քաղաքական իշխանության վարքագծով, որը գործնականում մերժում է քաղաքացիական հասարակության հետ իրական երկխոսության միջոցները՝ հասարակությանը մղելով դեպի փողոց:

Արդյունքում՝ կարող է ստեղծվել հասարակություն-պետություն փոխհարաբերությունների մի մոդել, որը հիմնված կլինի ապակառուցողական կոնֆլիկի վրա:

Այս խնդիրները լուծելու համար պետք է իրավունքը մոտեցնել ժողովրդին, որպեսզի ամրապնդվի զանգվածային իրավագիտակցությունը, որպեսզի ժողովուրդը հասկանա և գնահատի օրենքները և կամավոր հետևի իր պարտավորություններին և արդարացիորեն իրականացնի իր լիազորությունները: Իրավունքը պետք է դառնա կյանքի գործոն, իրական վարքագծի չափ, ազգային ոգու ուժ:[228]

Իսկ այս խնդիրը լուծելու միակ ուղին, մեր կարծիքով, իրավական պետության հաստատումն է:

## 3.3. ՀՀ-ում Իրավական պետության կառուցման անհրաժեշտությունը

Իրավական պետության ձևավորումը միանշանակ հնարավոր է բարձր իրավագիտակցության դեպքում: Իհարկե, իրավական պետության ձևավորումը չի կարող տեղի ունենալ առանց որոշակի քաղաքական գործընթացների, քանի որ դրանք, ինչպիսիք

[227] **Фоули М., Эдвардс Б.** Парадокс гражданского общества. JournalofDemocracy, 1996, vol. 7, #3, p. 38-52http://old.russ.ru/journal/predely/97-11-25/fouli.htm /06.07.2014/.

[228] **Ильин И.** О сущности правосознания. М., Рарогъ, 1993. с. 31.

են օրինակ՝ սահմանադրական պետության, իշխանության բաժանման, օրենքի գերակայության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության մասին գաղափարները, հնարավոր է կյանքի կոչել միայն քաղաքական կամքի առկայության դեպքում: Չէ՞ որ առանց քաղաքական կամքի՝ վերը նշված գաղափարները, որոնք հանդիսանում են իրավական պետության հիմքը, կմնան զուտ հռչակված սկզբունքներ առանց իրական գործնական կիրառության: Հետևապես՝ այս քաղաքական գործընթացում առաջնային դերակատարը պետությունն է, որը միակ ինստիտուտն է, որ կարող է հասարակությունը ուղղորդել իրավական պետության ձևավորման ճանապարհով:

Նկատենք, որ ՀՀ-ն ևս Սահմանադրության 1-ին հոդվածով հռչակում է, որ իրավական պետություն է,[229] սակայն մեր իրողությունը բավականին հեռու է այսօր պետության այդպիսի կոչումից: Անշուշտ, ստեղծված իրավիճակի համար կան բազմաթիվ պատճառներ, որոնք թույլ չեն տալիս, որպեսզի պետությունը ամբողջ ծավալով կատարի իրավական պետության իր գործառույթը: Սակայն մինչ այդ պատճառներին անդրադառնալը հարկ է վերլուծել իրավական պետության հասկացությունը իր տեսական հիմքերից, որպեսզի ավելի պարզ լինեն այդպիսի պետության ձևավորման գործում հայ հասարակության առջև ի հայտ եկած խոչընդոտները:

Իրավական պետության գաղափարը զարգացել է գերմանական իրավաքաղաքական մտքում: Հարկ է նշել, որ իրավական պետության հայեցակարգը տարբերվում է իրավունքի գերակայության հայեցակարգից: Իրավունքի գերակայության հայեցակարգն առավելապես բնորոշ է ֆրանսիական և անգլիական իրավաքաղաքական մտքին (état de droit, rule of law): Նշենք, որ հատկապես անգլիական *rule of law*-ում շեշտադրվում է ինքնին իրավունքի գաղափարը, որտեղ պետությունը չի համարվում անգլիական սահմանադրական իրավունքի մաս, ինչը պայմանավորված է պատմաքաղաքական իրողություններով:[230]

---

[229]«Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն» (փոփոխություններով), գլուխ 1, հոդված 1: http://concourt.am/armenian/constitutions/index.htm /31.07.2014/:

[230]**Крайгир М.** Верховенство права(и Rechtsstaat)Доктрины Правового Государства и Верховенства Права в современном мире /Сборник статей. Ответственные редакторы: В.Д. Зорькин, П.Д. Баренбойм, ЛУМ, М., Юстицинформ, 2013, с.473.

Օրենքի գերակայության կամ, երբեմն, նաև իրավական պետության ֆրանսիական և անգլիական մոդելներն անպայմանորեն պահանջում են քաղաքացիական հասարակության առկայություն: Իրավական պետություն կառուցելու այս հայեցակարգերը շեշտը դնում են քաղաքացիական հասարակության վրա, որը պետք է թույլ չտա իշխանությանը խախտել օրենքները և պետք է վերահսկի իշխանությանը:

Մեր կարծիքով՝ այս հայեցակարգերում կան թերություններ:

Նախ նշենք, որ քաղաքացիական հասարակությունը, իհարկե, ժամանակակից ժողովրդավարական հասարակության հիմքերից մեկն է: Քաղաքացիական հասարակությունը անհրաժեշտ է պետության հետ համագործակցության, հասարակական և քաղաքական գործընթացների արդյունավետ կառավարման և, ինչն ամենակարևորն է, օրգանական և ժողովրդավարական պետություն ստեղծելու համար:

Բայց արդյո՞ք իրավական պետություն ստեղծելու համար անպայմանորեն անհրաժեշտ է քաղաքացիական հասարակություն:

Մեր կարծիքով՝ իրավական պետություն ստեղծելու գործում քաղաքացիական հասարակության դերակատարությունը չափազանցված է:

Նախ այս տեսությունների հիմնական բովանդակային թերությունը, մեր կարծիքով, հետևյալն է. ըստ այս տեսությունների՝ իշխանությունն ապրիորի օրինախախտ է, և անհրաժեշտ է քաղաքացիական հասարակություն, որպեսզի կանխի իշխանությունների օրինախախտությունը: Ակնհայտ է, որ այս տեսությունները հասարակությունը պահում են պերմանենտ անկայուն վիճակում:

Երկրորդ թերությունը, մեր կարծիքով, այն է, որ այս տեսությունները իրավական պետություն ստեղծելու գործում քաղաքական էլիտայի դերակատարությունը ստորադասում են քաղաքացիական հասարակությանը: Այնինչ՝ քաղաքագիտության մեջ հասարակության և պետության կառավարման, հասարակության քաղաքական համակարգի օպտիմիզացիայի (հարմարեցման) գործառույթը պատկանում է քաղաքական իշխանությանը: Այսինքն՝ իրավական պետություն ստեղծելու քաղաքագիտական տեսանկյունը շեշտը դնում է առաջին հերթին քաղաքական իշխանության վրա:

Մեր կարծիքով՝ քաղաքագիտության տեսանկյունից իրավական պետության վերաբերյալ լավագույն մոդելը գերմանական իրավական պետության (Rechtsstaat) հայեցակարգն է, որն ի սկզբանե նշանակում էր պետական վարչակազմի սահմանափակում օրենքով և իրավունքով:

Ընդ որում՝ իրավական պետությունը կարող է լինել նաև ավտորիտար, քանի որ իրավական պետության հայեցակարգը չի սահմանափակում այն, թե ով և ինչ օրենքներ է ընդունում և ինչքանով են այդ օրենքները տարածվում մարդու իրավունքների վրա: Սա նշանակում է, որ իրավական պետությունը կարող է լինել նաև ավտորիտար:[231]

Գործնականում կարելի է գտնել այս գաղափարը հիմնավորող օրինակներ՝ Սինգապուրը, Չինաստանը: Մենք կարո՞ղ ենք ասել, որ այս երկրները իրավական պետություններ չեն: Իհարկե՝ ոչ: Ինչպես Չինաստանը, այնպես էլ՝ Սինգապուրը իրավական պետություններ են: Միևնույն ժամանակ՝ սրանք ավտորիտար քաղաքական վարչակարգ ունեցող պետություններ են: Իհարկե, ավտորիտար վարչակարգի դրսևորումներն այս երկու երկրներում տարբեր են, սակայն միևնույն է՝ այս երկրները ավտորիտար երկրներ են, որտեղ ժողովրդավարական քաղաքացիական հասարակություններ չկան: Այս գործնական հիմքի վրա՝ կարելի է ասել, որ միզուցե հիմնավորված չէ այն տարածված տեսակետը, ըստ որի՝ իրավական պետությունը անպայմանորեն ենթադրում է քաղաքացիական հասարակության առկայություն:

Քանի որ իրավական պետության գերմանական (Rechtsstaat) հայեցակարգում շեշտադրվում է հենց պետության առաջնայնության գաղափարը, ուստի իրավագիտակցության տեսանկյունից հարկ է առանձնացնել որոշ առանձնահատկություններ, որոնք պայմանավորում են տվյալ հասարակություններում պետության և հասարակության միջև փոխհարաբերութունների բնույթը: Ստացվում է, որ գերմանական իրականության մեջ հասարակական իրավագիտակցության տեսանկյունից առանձնակի կարևորություն ունի պետության գաղափարը, այնինչ ֆրանսիական և

[231] **Рябев В.** К вопросу о взаимодействии государства и гражданского общества в современной России. http://www.old.jourssa.ru/2005/2/1aRiabev.pdf /11.01.2014/.

անգլիական հասարակություններում իրավագիտակցության հայեցակարգը կենտրոնանում է անհատի գաղափարի վրա:

Մեր կարծիքով՝ իրավունքի գերակայության ֆրանսիական և անգլիական մոդելներում հաճախ կարելի է նկատել իշխանության լեգիտիմության ճգնաժամ, իսկ իրավական պետության գերմանական մոդելում լեգիտիմության ճգնաշամ գրեթե չի նկատվում: Պատճառները, մեր կարծիքով, հետևյալում են՝ ֆրանսիական և անգլիական մոդելները հիմնվում են անհատական իրավունքի գերակայության սկզբունքի վրա, իսկ գերմանական մոդելը հիմնվում է համասոցիալական արդարության սկզբունքի վրա: Սա չի նշանակում, որ գերմանական առաջնորդները, ըստ էության, ավելի լեգիտիմ են, քան Ֆրանսիայի և Անգլիայի առաջնորդները: Այս գաղափարի հիմքը հայեցակարգային առանձնահատկությունն է, որտեղ կարևորվում է ընդհանուր, համասոցիալական շահը:

Հարկ է նկատել, որ, ի տարբերություն, ընդհանուր իմաստով, եվրոպական իրավական պետության հայեցակարգի՝ շատ այլ պետություններում չեն խոսում իրավական պետության մասին: Օրինակ՝ ԱՄՆ-ը հավատարիմ է մնում իր սեփական՝ ուժեղ սահմանադրական ժողովրդավարական պետության գաղափարին, որն ունակ է ոչ միայն իրեն պաշտպանել, այլև ազդել համաշխարհային կառուցվածքի վրա ժողովրդավարության և մարդու իրավունքների տարածման ներքո:[232]

Ուժեղ պետություն ունենալու ցանկությունը չի հակասում իրավական պետության գաղափարներին: Իրավական պետությունը ևս պետք է լինի ուժեղ, որպեսզի կարողանա պաշտպանի իր քաղաքացիների իրավունքները և ապահովի արդարացի կարգ հասարակության մեջ: Կարևոր է նաև այն, որ պետության ազդեցության ոլորտը և նրա՝ ընդունած արդար որոշումներն իրականացնելու ունակությունը պետք է լինեն իրավական (արդար) պետականության հայեցակարգի շրջանակներում:[233]

---

[232]**Фукуяма Ф.** Сильное государство: Управление и мировой порядок в XXI веке. М., АСТ, 2006, с. 183.

[233]**Раянов Ф.** Теория правового государства: проблемы модернизации. АН РБ, Уфа,Гилем, 2010, 136c.http://www.pravgos.ru/index.php?option=com_content&view=article&id=163%3A2011-08-16-09-22-28&catid=65%3A2011-08-12-10-04-28&Itemid=69&limitstart=8 /05.06.2014/:

Ուստի մենք պետք է ուժեղ պետության հիմքում դիտենք վերջինիս իրավական բնույթը: Հետևապես՝ հզոր և իրավական պետությունները պետք է դիտել որպես մեկ ամբողջություն:

Անդրադառնալով ՀՀ-ում իրավական պետության կառուցման դժվարություններին՝ առանձնացրել ենք մի քանի հիմնախնդիրներ:

Իրավական պետության ձևավորումը, անկախության տարիներից սկսած, դիտվում է որպես ՀՀ զարգացման կարևորագույն ուղիներից մեկը: Սակայն հարկ է նշել, որ այս գաղափարը շարունակում է մնալ միայն տեսական հարթությունում՝ չստանալով գործնական կիրառություն: Ժողովրդավարական հռետորաբանության տակ ակնհայտորեն տեսնում ենք ավտորիտար պրակտիկա: Եվ սա հասարակության մոտ այդ հարցի վերաբերյալ անհավատության պատճառներից մեկն է:

Իրավական պետության ձևավորումն անհնար է առանց նոր իրավական մտածելակերպի, քաղաքացիների իրավական մշակույթի ձևավորման և իրավական նիհիլիզմի դեմ պայքարի: Իսկ իրավական պետության գաղափարի իրականացումն անհնար է[234] առանց իշխանության իրավագիտակցության համապատասխան մակարդակի:

Հասարակության և, մեր համոզմամբ՝ իշխանության իրավագիտակցությունն ու իրավական կուլտուրան իրավական պետության կարևորագույն գործոնն են ու պայմանը, որոնք ուղղված են ապահովելու կյանքում օրենսդրորեն հռչակված ամենազեղեցիկ հաստատությունների իրացմանը:[235]

Իրավական պետության կառուցման համար անհրաժեշտ է, որպեսզի մարդիկ վստահ լինեն, որ անհրաժեշտության դեպքում կարող են պաշտպանել իրենց իրավունքներն ու շահերը օրինական ճանապարհով:[236]

---

[234]**Липунова Л.** Влияние правосознания на *формирование правового государства.* «Экономика и социум» №4(9) 2013. http://iupr.ru/domains_data/files/zurnal_osnovnoy_4_2013/Lipunova%20L.V.%20Aktualnye%20voprosy%20politiki%20i%20prava.pdf /20.07.2014/.

[235]**Ապիկյան Ն., Պետրոսյան Ա.** Իրավական պետություն և օրինականություն: /2-րդ հրատարակություն, լրացված և վերամշակված/ ԵՊՀ, Եր., Տիգրան Մեծ հրատ., 2001, էջ 32:

[236]**Липунова Л.** Влияние правосознания на *формирование правового государства.* «Экономика и социум» №4(9) 2013.

Հետևաբար՝ իրավական պետության ձևավորման համար անհրաժեշտ է իրավական նիհիլիզմի հաղթահարում: Իրավական նիհիլիզմի հաղթահարումն էլ իր հերթին հնարավոր չէ առանց իրավական պետության: Այս երկու կատեգորիաների միջև գործում է ինտերակցիոնիզմի պատճառահետևանքային փոխլրացնելիության սկզբունքը:

Փաստացի արձանագրենք մի իրողություն. Հայաստանի Հանրապետությունը Սահմանադրությամբ իրավական պետություն է, սակայն գործնականում այդպես չէ: Ակնհայտ է ՀՀ-ում պետության գերակայությունը հասարակական և քաղաքական տարբեր խնդիրների լուծման հարցում: Սակայն ակնառու է նաև այն հանգամանքը, որ այսօր, չնայած այն բանին, որ միայն պետությունն է, որ կարող է ապահովել հասարակության լայն զանգվածների և, ընդհանրապես, ողջ հասարակության շահերը, ունենալով դրա համար համապատասխան ռեսուրսներ, միևնույն է չի կարողանում լիարժեքորեն իրականացնել իր այս գործառույթը: Հարկ է նկատել, որ իրավական նիհիլիզմի առաջացման պատճառներից մեկն էլ թաքնված է պետական և տեղական իշխանական կառույցների կողմից ընդունված օրենքների և որոշումների լեգիտիմության խնդրում: Հաճախ լեգալություն և լեգիտիմություն հասկացությունները նույնացվում են՝ առաջացնելով իմաստային խեղաթյուրում: Օրինակ՝ վերջին շրջանում ՀՀ-ում հաճախ, հատկապես՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված տարբեր որոշումներ, կապված մշակութային օբյեկտների և այլ հարցերի հետ, արժանանում են հասարակական բողոքի այն պատճառով, որ քաղաքացիները իշխանական մարմինների կողմից ընդունված լեգալ օրենքների կամ որոշումների լեգիտիմությունը չեն ընդունում: Սա կրկին առաջացնում է իրավական նիհիլիզմ, որի հաղթահարման համար անհրաժեշտ է իրավական պետության ձևավորում, իսկ իրավական պետության հայեցակարգը հիմնված է արդարության, օրենքների ժողովրդավարական լեգիտիմության սկզբունքի վրա: Հետևապես՝ ՀՀ պետական մարմինները պետք է ունենան համապատասխան իրավագիտակցություն և օրենքներ ու որոշումներ մշակելիս և ընդունելիս հիմնվեն առավելապես դրանց լեգիտիմության սկզբունքի վրա:

---

http://iupr.ru/domains_data/files/zurnal_osnovnoy_4_2013/Lipunova%20L.V.%20Aktualnye%20voprosy%20politiki%20i%20prava.pdf /20.07.2014/.

Այստեղ առաջանում է օրենքի և իրավունքի փոխհարաբերության արդիական հիմնախնդիր: Առաջանում է հարց. ինչպե՞ս տարբերել իրավական օրենքը ոչ իրավական օրենքից:

Օրենքի իրավական լինելը ենթադրում է այդ ակտում ժողովրդի կամքի արտահայտության առկայությունը, այդ ակտով կարգավորման ենթակա հարցի օբյեկտիվ և ճշմարտացի լուծման նպատակաուղղվածությունը, համապատասխանությունը ժողովրդավարական սկզբունքներին:[237]

Իրավական պետությունում օրենքը պետք է համապատասխանի իրավունքին՝ որպես այդ պետության քաղաքակիրթ լինելու և նրանում ապրող մարդկանց բարեկեցիկ կյանքի ապահովման վկայություն:[238]

Այս դեպքում հարկ է վկայակոչել Գումպլովիչի այն գաղափարը, ըստ որի՝ պետության համար իրավունքը միայն միջոց է: Այն գոյություն չունի որպես պետությունից առանձին, ինքնուրույն միավորում:[239]

